

Georgian

ԲԱՌԱՐԱՆ

ՊԱՐՍԿԵՐԷՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՊԱՐՍԿԵՐԷՆ

...Տ ԿԱՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ·

...ում ճոխաբար աւանդին իմաստք բառիցն Հայերէն և Տաճկերէն բացատրութեամբ և ուրեք ...բականն նշանակութեամբք։ Ցուցեալ և գլխաւոր անուանս նշանաւոր թագաւորաց և զերևելի տեղեաց, և ճոխացուցեալ օրինակօք 'ի բանաստեղծից պարսից։

ԳԷՈՐԳԵԱՅ ԴՊՐԻ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ՊԱԼԱՏՑՈՑ·

...ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՈՒՂՂԱԳՐԵԼՈՎ ԵՒ ՀԱՄԱՌՕՏ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ

'Ի ՅԱԿՈԲԱՅ ՏԻՒՋԵԱՆ·

ՏՊԱԳՐԵԱԼ ԱՌԱՏԱՊԱՐԳԵՒ ԱՐԴԵԱՄԲՔ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԱԶՕՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱՅԻ

ՊԷՋՃԵԱՆ

'Ի պարգև լեզուասիրաց ազգիս Հայոց։


ՀՐԱՄԱՆԱՒ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐԳԻ

ՏԵԱՌՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ·

'Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՅՈՐԹԱԳԵՕՂ, 'Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ·

1826 — ՌՄՀԵ



Ի վայելումն

Միաբանութեան [illegible] [illegible] · որ ի [illegible]

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Բանականին՝ 'ի նախաՀաստիչէն Ճարտարապետէն տուաւածեռնեալ պարգեւ բազմատաղանդ, զլուսոյ իւր մտաց ընդլայնել ձգտումն, եւ կիրառելոյս իսկ բազմածիւղ ծանօթութեանց ուսմունք չբաւականացեալ՝ յեթերս ճեմել 'ի լուսարփի գնացից Հանդիսարան, զոմանց ըզտրամագիծ և զշրջապատն չափել մանրամասն, զայլոց զպարբերական շրջան, զայլոց և սփռեալ Հաստել անշարժ և կայուն: Որչա՜փ արդեօք արժանի քանահրանաց թւանէր, եթէ զգեր գիտութեանց անհոգացեալ՝ զբազմաշահն և զդիւրըմբռնելի ուսմանն բանասիրական գիտութեան անփոյթ լինէր. յորում նախամեծար դասի լեզուագիտութեանն շահականագոյն և գեղեցիկն տաղանդ. որոյ ճոխացուցեալ զմիտս և զլեզու բանասիրին, բազմաց այլասեռ և այլալեզու ազանց քրտնաջան վաստակոց զերկունս Համապատրաստ վայելել տայ, և նոցա ընկեր քաղաքակից դասէ: Իսկ զի մարդկային սեռին սփռեալ բազմազգիմն՝ չէ 'ի մի և նոյն սահման պարփակեալ. և զի ըստ այնմ պիտոյք և շահ զանազան և տարբեր, անկ է իւրաքանչիւր ըստ իւրն բաղդի տրամադրութեան՝ յայս յողնաշահ և գեղեցիկ ուսումն զկարեւորագոյնն և զշահաւէտն ընտրեալ, բարեյարմար դասակարգել զիւրն գիտութիւնս և Հանճար:

Զուարճալի արդարև և արժանայարգ խօսել և գրել զարդեան կրթեալ ազանց զգեղեցկայարդարն և քաղցր լեզու, և բազմօգուտ նոցայն իմաստալիր դրուածովք պարարել զմիտս. այլ պարտք անհրաժեշտ կայ 'ի վերայ, և Հարկաւորագոյն իսկ է գիտել զլեզու Տէրութեան և ընկեր իւր քաղաքի, ուր և պիտոյք իւր աւուրեայ Հանճարադիւտ և շահախնդիր լինել Հարկադրեն: Եւ քանզի ըստ իմաստնոյն, «Բամահրելի է զերկինս չափել, և զդուռն քաղաքի իւրոյ անգիտանալ». ապա կարևոր է մերազնեաց սրտեռանդն փութով ըմբռնել 'ի մարզումն Հայրենի և Տէրութեան լեզուաց: Որքա՜ն պիտականութիւն [illegible] է մեզ, նախ և յառաջ արդարև զՀայրենականն՝ և ապա զՏէրութեանն ուսանել զլեզու և զգրականութիւն՝ որոյ բազմաւուտ վայելեմք ազգովին շնորհան, և ընդ որում եմ պատուաստեալ և նոյնացեալ շահք մեր յատուկ, և էութիւն քաղաքական: Թէպէտ և ոչ սակաւք 'ի մերազնեաց քաջահմուտ Ճշմարտութեան վերոյ դրեալ բանիցս, և 'ի յառաւել շահուց

[...]եալ , բազմաջերմն ջանիւք 'ի ձեռն ամենի ճգնեալ զՕտանեան ծանօթութիւն . այլ բազմավաստակն ուղի՝ դժուարիմէր իսկ գործոյ 'ի դաստառածն դժուարամասս եղանակէ ուսուցանելոյ , խորհեալ զայլ բազում , դեռ 'ի սկզբան անդ բարձի Թողի առնել պատրաստութէ .

Այսոցիկ ջան մերահաստ լեալ՝ նախահայեաց և ձեռնատուականն ամենամեծարոյ և բարեյիշատակ Գէորգայ Դպրի Տէր Յովհաննիսեան , [...] արժանեալն ԴԱՏՈՒԵԼԻ մակամուտ աներեալ , և նախագգած անհրաժեշտ պիտոյից Հայկազնեաց սոյն լեզուի , և խորհրդագրած միանգամ , Թէ ո՛րք և ո՛րչափ դժուարութիւնք յետ ընկերեն զաշխոյժ պատահեկական ուսանողաց , բազմամեայ անխոնջ աշխատասիրեալ՝ 'ի լոյս ած զայս Բառարան՝ Պարսկական և Հայկական լեզուաց ; զորոյ զյարգ և զպիտանակա- նութիւն առաջի արկանել ուսումնասիրաց անպէտ վարկանիմ . զի նոյն իսկ բանն՝ Բառարան , պարծանէ յինքեան զիւր բազմաշահ պիտոյս . Քանզի բանալի գոլով զրականութեան , որք միանգամ զայն 'ի ձեռին ունին պատրաստ , դիւրագոյնս ամենեն մուտ 'ի դժուարամուտ և յանել խոյս լեզուագիտութեան . նա զի՝ լեզուականն յուսանելն միանգամ ընԹեռնուլ , կարէ և ինքնին ուսանել զլեզուն առանց ուսուցչի՝ լոկ նըպաստիւք սոյն Բառարանի .

Պարտք սիրահամբոյր դնի մեզ արդարև , մերս շնորհակալու խնամոտ ըղձից բերումն ընծայել 'ի յիշատակ առնս արժանայարգ . որոյ 'ի ծաղկափթիթ տիոց մինչ յալիս ծերութեան՝ անխոնջ վաստակեալ 'ի ջանս ուսումնասիրութեան , զխնամականաց արդեամբք ունէր ժառանգեալ զյարգ , և 'ի համազգեաց համարումն և պատիւ : Տեղեակ բազմաւեան լեզուաց , Յունականին , Եփրայերէնին , Պարսկականին , Արաբացւոյն , Լատինականին , և Հայկականին գրաւորական ուսման , սրտեռանդն նուիրեալ զաւուրս իւր և զկէսս ողջոյն յօգուտ իւր ազին , 'ի Թարգմանութիւնս , 'ի Պատմականս , և յայլս շահաւէտս և խնամալից գրուածս . զեղեցիկս օժտեաց այլս պանծալի՝ զիւր ազն Արամեան , ժառանգութիւն անմահական Թողեալ առ համազգիս զիւրն քրտանց բազմադէմ և անդին վաստակս , յորս արժանայարգ դասի յառաջիկայս Բառարան : Ո՛ որոյ զյարգ և զկարևոր պիտոյս քաջ ծանուցեալ՝ իմաստահանճար և հայրենասէր Մեծապատիւ Պեզճեան Յարութիւն Ամիրայի , և նախադիտակ միանգամ բազմաշահ օգտի և մեծի կարևորութեան մերայնոց սոյն գործոյ , 'ի ծախս չխնայեալ՝ սրտեռանդն փութացաւ 'ի լոյս ածել տալ զայս Բառարան , 'ի յիշատակ մշտնջենաւոր , և 'ի պսակ անԹարշամ քրտնավաստակ երկանց առնս իմաստասիրի , և յօգուտ հայկազնեաց .

ՀԱՆԳԱՄԱՆՔ ԳՈՐԾՈՑՍ

ա. Բառ կարի յանթերի և 'ի դիւրավարժ գործել զիւր գործ՝ հեղինակն, դասակարգեաց զիւր Բառարան ըստ կարգի Հայկական Այբուբենից, առընթեր եդեալ զնոյն բառ Պարսկական տառիւք. որով ուսանողն անտեղեակ Պարսկական գրավարժութեան դիւրաւ գտանէ զբառն խնդրեալ, և միանգամայն վարժի 'ի յարմարադրութիւն Պարսկային բառից:

բ. Ի դիւրընթեռնլի գործել և այնոցիկ, որք միանգամ Հայկական գրաւոր լեզուին անտեղեակ են, յաւել և Տաճկական նշանակութիւնս, որք արտադրեալ գտանին նօտր գրով:

գ. Նոյնպէս և անանց բառից յաւել և զԱրաբացի և զՉէղաթայի նշանակութիւնս:

դ. Բազում բառից ունի ճոխացուցեալ զնշանակութիւնս պատշաճեալ օրինակօք յերևելի հեղինակաց Պարսից:

ե. Այլ ուր ուրեք գտանին և յատուկ անուանք՝ երևելի արանց, գաւառաց, քաղաքաց, գիւղորէից, գետոց, կենդանեաց, յաւելեալ և զօրութիւնս չափուց, և դեղորէից, ևն, ևն, և զանցս ինչ պատմական:

զ. Մի և նոյն բառին և բազմապատիկ նշանակութիւնս է եդեալ, առ ի բառիւք որոշեալ. ըստ այնմ և անանց բառից տարբեր անուանակոչութիւնս, գործածեալ 'ի զանազան գաւառս, յիշատակեալ:

Հեղինակն գործոյս ոչ ունելով բաւական ժամանակ պարապոյ ամենայն մասամբ կատարելագործել զառաջիկայ մատեան, մերումս այսմիկ մատոյց տպարէգ երկամեայ երկասիրութեան. ուր հոգացաք յապաւել զաւելորդս, զորս ուրեք կրկնաբանութեամբ և ուրեք անխտրութեամբ 'ի մէջ բերէր. և յաւելուլ զպակասորդսն զորս ուրեք առ պարսկական նշանագրովք զանց առնէր դնել զհայադիր ձայնս պարսկականս, և ուրեք զպարսկական նշանագիրս հանդէպ հայկականին:

Այլ գիտելով զի Բառարան միայն թէ չունիցի ընդ իւր և զՔերականութիւն՝ սակաւ օգուտ գործէ, և քանզի պակասեալ գտաք զայդ մեր և յայժմ կարևոր օգնութենէ, յաղագս այնորիկ խնդրեցաք լնուլ զպակասութիւն մեր զայս՝ դարձեալ 'ի գրուածոց Պետրոսեայ Պալի յօրինողի գրոցս. այլ ոչ ինչ գտաք 'ի նորայն, բայց միայն համառօտ բացատրութիւնս Պարսկական տառից, և կանոնս ընթերցանութեան:

Վասն այնորիկ պատրաստեցաք համառօտ Քերականութիւն՝ դնել 'ի սկիզբն Բառարանիս, ամփոփեալ 'ի սմա՝ որչափ մարթ է՝ համառօտիւ, զկարևոր գիտելիս և զկանոնս այդր լեզուի, զհետ գնալով մեծանուն հեղինակաց:

Ժողովեցաք ևս 'ի բառարանէս զամենայն նմանաձայն բառս որ ընդ հայս և ընդ Պարսս, և դասակարգեցաք 'ի վերջոյ հանդէպ միմեանց. Ի զուգադրութենէ սոսա զայն միայն է մեզ հաւաստել՝ թէ վասն մերձաւորութեան և սահմանակցութեան երկոց ազգացս՝ բազում նմանա-

ւ և անոյ խօսից ընդ մէջ հայոց և Պարսից . այլ ոչ յ և առցէ նոյն գող ընդ նմա : Զի և յօրինուած ն երկրպագանչութ լեզուացն յայնմ ցուցանեն թէ բա- ժանականին երկուքս այսպիսիկ 'ի միմեանց :

'Ի դըլուխ հանեալ մեր զբանն հարեալ աշխատու- համարեցաք զայն , և զկատարեալս մեր օգտակար՝ թէ ումասիրացն կարթել սովին գիրս , և զեռանդն փա- էս եւս բորբոքել : Մանաւանդ պահեսցի սովին և յիշա- ա սպարապետին Պարոն Պօղոսի Միքայելեան , և որդւոց նախանձելի պարծանս յօրինողի գրոցս յօժարամտեալք՝ յեր ելոյն և 'ի վաստակ . և ինքեանք գծեցին և քանդակեցին երէն և զպարսկերէն այբուբենին ամենայնիւ նորագործ . որպէս և զաշխատութիւն նորա 'ի գիրս՝ պակասեցեն արհեստիւ իւրեանց . մենայնիւ յարդարուն կացուցեն զՊարսկերէն դպրութեանս պատ- րաստութիւն :

ՎՐԻՊԱԿՔ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ.

Եջ	Տող	Սխալ	Ուղիղ.
1	7	պետք	պէտք
4	7	Նախընթացիցան	Նախընթացիցն
„	Ծան"	զայդուսմիկ	զայդուսիկ
5	8	Նաւդ	Նաւթ
„	25	'ի վայր	'ի վար
6	9	Հասեր	Հասէր
8	9	ընդ մեզ	ըստ մեզ
„	30	պետք	պէտք
12	18	զկրկնութիւն	զկրկնութեամբ
17	29	բազում դէմ	երրորդ դէմ
18	27	յարակատար	գերակատար
22	3	Հասեալ էիր	Հասեալ էի
„	34	رسيده باسم	رسيده باشم
25	15	خستن	جستن
27	12	տառն	զտառն
28	27	զբայանունս	զբայանուանս
29	6	անուանին	անուանեն
37	35	بيت و شش	بيست و شش
41	11	չէնհաք	չինհաք
42	6	յոլովյ	հոլովյ
44	9	بجورد	بخورد
„	19	درندكان	وارندكان
44	34	անունս	անուանս
45	5	վարկեան	վայրկեան
„	15	Ճորաձ	Ճէրաձ
„	29	պարբերուՃն	պարբերուՃն
47	29	دست	دوست



ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆՔ

ԲԱՌԱՐԱՆԻՆ·

ածանց″	նշանակէ	ածանցական, ածանցեալ·
անե″		աներեւոյթ·
անցո″, անցող″		անցողական·
ապռ″		ապառնի·
ար″, արպ″		արէպի, արապերէն·
բա″, բայ″		բայ, բային, բայէն·
բայած″		բայածական·
դար″		դարձեալ·
դեր″		դերանուն·
ընդու″, ընդուն″		ընդունելուն·
թարգ″		թարգմանի·
թուր″, թուրք″		թուրքերէն·
կո″		կոչական·
կր″		կրաւորական·
հայ″		հայերէն·
հայցա″		հայցական·
հասարակ″		հասարակօրէն·
հր″		հրամայական·
միջ″		միջարկութիւն·
յոգ″		յոգնական·
ներգոյ″		ներգոյական·
ներ″		ներգործական·
նշ″, նշա″		նշանակէ·
նուազ″		նուազական·
չէյրազ″		չէյրազեցուոց·
չէղա″		չէղաթայերէն·
պարս″		պարսկերէն·
տաճ″		տաճկերէն·
տրա″		տրական·
ցուց″		ցուցական·



نوشته بماند سیاه بر سفید
نویسنده را نیست فردا امید
نوشته من ندانم تا که خواند
اگر بمیرم بیشک این بماند

Սեւներկեալ 'ի սպիտակին՝ թող մնասցէ այդ դրոշուած ,
Իսկ առ վաղիւ մատենագրիդ՝ քա՛ւ թէ բնաւ յոյս մնայ .
Ես չգիտեմ՝ ո՛վ ընթերցցի զգրենոյդ մնացուած ,
Բա՛ մեռանիմ . այս անշուշտ է՝ յաւէժ մնայ իմ գրուած ։

ՀԱՄԱՌՕՏ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԲԱՐԲԱՌՈՅ.

Ըստ խոստմանս մեր 'ի յառաջաբանին, առցուք ամփոփել և դիւրակա- նութիւն լեզուին պարսից, 'ուսուցանելով համառօտիւ զհանգամանս՝ և զկանոնս այսր բարբառոյ. Ջանացեալ մեզ զգուշանալ յաւելորդաց և զհարկաւորն յա- ռաջ բերել կարգաւ, որչափ ինչ պէտք իցեն նորավարժից.

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս Տառից պարսից.

Պարսիկք ընկալան յարաբացւոց զգիրս և զդպրութիւն, և վարին նովին կանոնօք. են նոցա երեսուն և երկու տառք, յորոց եօթն և տասն նախնական ձևք՝ սկիզբն են այլոցն ամենեցուն. զի 'ի ձևոյն միոյ կամ կրկին և կամ երից կէ- տից եդելոց 'ի վերայ կամ 'ի ներքոյ՝ միոյ միոյ 'ի նշանագրացդ կազմին երեսուն և երկու տառք.

'Ի տառիցս յայսցանէ քսան և երկուքն հասարակաց են արաբացւոց և պար- սից. վեցքն յատուկ արաբականք, և տեղի ունին միայն 'ի բառս ածանցեալս յարաբացւոց. իսկ չորքն սեպհական են պարսից. որք են, պայէ Փարսից՝ پ փա, որ է փ. ճիմ Փարսից՝ چ չէյն, որ է չ. ժայէ Փարսից՝ ژ ժէ, որ է ժ. քեաֆէ Փարսից՝ گ կէաֆ, որ է գ. Համաւրէն վերոյիշեալ եօթնևտասն արմատա- կան ձևք նշանագրաց. ا ب ح د ر س ص ط ع ف ق ل م ن و ه ی որք զուգադրութեամբ այլ և այլ կէտից առնեն մինչև յերեսուն և երկու տառս, զորս համանգամայն տեսցես յառաջիկայ աղիւսակին՝ հանդերձ կարևոր գիտելեօքն.

ԱԼՓԱԲԵՏՔ ՊԱՐՍԻՑ.

Անուանք Տառից.		Ձեւք Տառից. Առանձին.	Այսպէս ի յօդակցութեան.	Այսպէս ի մէջ յօդակցութեան և ի հանգստութեան.	Այսպէս ի հանգստութեան.	Զօրութիւնք Տառից.	Ծագումն Տառից.	Համարական.
الف	Էլիֆ	ا	ﺎ	..	..		Արաբացւոց և պարսից.	١
بآ	Պա	ب	ﺐ	ﺒ	ﺑ	Պ	Նոյն.	٢
پ	Փա	پ	ﭗ	ﭙ	ﭘ	Փ	Պարսից.	..
تآ	Թա	ت	ﺖ	ﺘ	ﺗ	Թ. նուր	Հասարակաց երկոցուն.	٤٠٠
ثآ	Սա	ث	ﺚ	ﺜ	ﺛ	Ս	Արաբացւոց.	٥٠٠
جيم	Ճիմ	ج	ﺞ	ﺠ	ﺟ	Ճ	Հասարակաց երկոցուն.	٣
چين	Չին	چ	ﭻ	ﭽ	ﭼ	Չ	Պարսից.	..
حآ	Հա	ح	ﺢ	ﺤ	ﺣ	Հ. թաւ	Արաբացւոց.	٨
خآ	Խա	خ	ﺦ	ﺨ	ﺧ	Խ	Հասարակաց երկոցուն.	٦٠٠
دال	Տալ	د	ﺪ	..	..	Տ	Նոյն.	٤
ذال	Զալ	ذ	ﺬ	..	..	Զ	Արաբացւոց.	٧٠٠
رآ	Րա	ر	ﺮ	..	..	Ռ. Ր	Հասարակաց երկոցուն.	٢٠٠
زآ	Զա	ز	ﺰ	..	..	Զ	Նոյն.	٧
ژآ	Ժա	ژ	ﮋ	..	..	Ժ	Պարսից.	..
سين	Սին	س	ﺲ	ﺴ	ﺳ	Ս. նուր	Հասարակաց երկոցուն.	٦٠
شين	Շին	ش	ﺶ	ﺸ	ﺷ	Շ	Նոյն.	٣٠٠

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԲԱՐԲԱՌՈՅ։

ՌԼՓՈՐԻՆՏՔ ԳԱՐՍԻՑ։

Անուանք Տառից։	Ձևք Տառից։ Առանձին։	Կցեալք ի յառաջընթացն։	Կցեալք ի յառաջընթացն և ի հետագայն։	Կցեալք ի հետագայն։	Զօրութիւնք Տառից։	Ծագումն Տառից։	Համարութիւն։
صاد Սատ	ص	ـص	ـصـ	صـ	Ս․ խիստ	Համարական երկոցուն․	٩٠
ضاد Զատ	ض	ـض	ـضـ	ضـ	Զ․ թանձր	Արաբացւոց․	٨٠٠
طا Տա	ط	ـط	ـطـ	طـ	Տ․ խիստ	Համարական երկոցուն․	٩
ظا Զա	ظ	ـظ	ـظـ	ظـ	Զ․ խիստ	Արաբացւոց․	٩٠٠
عين Այն	ع	ـع	ـعـ	عـ	․ ․ ․ ․	Նոյն․	٧٠
غين Ղայն	غ	ـغ	ـغـ	غـ	Ղ	Համարական երկոցուն․	١٠٠٠
فا Փա	ف	ـف	ـفـ	فـ	Փ	Նոյն․	٨٠
قاف Գաֆ	ق	ـق	ـقـ	قـ	Գ․ խիստ	Նոյն․	١٠٠
كاف Քեաֆ	ك	ـك	ـكـ	كـ	Ք	Նոյն․	٢٠
ݣاف Կեաֆ	ݣ	ـݣ	ـݣـ	ݣـ	Կ	Պարսից․	․․
لام Լամ	ل	ـل	ـلـ	لـ	Լ․ նուրբ	Համարական երկոցուն․	٣٠
ميم Միմ	م	ـم	ـمـ	مـ	Մ	Նոյն․	٤٠
نون Նուն	ن	ـن	ـنـ	نـ	Ն	Նոյն․	٥٠
واو Վավ	و	ـو	․․	․․	Վ	Նոյն․	٦
ها Հէ	ه	ـه	ـهـ	هـ	Հ․ նուրբ	Նոյն․	٥
يا Եա	ى	ـى	ـيـ	يـ	Ե․ Յ	Նոյն․	١٠

Առաջինկայ տախտակդ որպէս տեսանես բաժանեալ է յութ խորանս, յառաջնումն դնին անուանք տառիցն. ՚ի չորեսին յետագայս գծագրեալ են զանազան ձեւք նշանագրաց փոփոխելիք ըստ տեղւոյն. սակայն միշտ պահեն զնախկին ձեւս իւրեանց։ Ուսանողն՝ Նախ պարտի ըմ ուշադրութ͞բ միտ դնել յերկրորդ խորանն՝ յորում կան առանձին նշանագիրք անփոփոխ, և ապա ՚ի միտ առնուլ զյաջորդ զերիս խորանսն որոց առաջինն ցուցանէ զտառսն կցեալս ընդ նախընթացից միայն։ Երկրորդն՝ զկցեալսն ընդ նախընթացիցսն և ընդ հետեւորդաց։ Երրորդն՝ զկցեալսն միայն ընդ հետեւորդաց. ւ էլիֆն, տալն, ռա և ծագեալքն յերկոցունցս և, վաւն ոչ կցեն ընդ հետեւորդս։ Վեցերորդ խորանն ցուցանէ զձայնս իւրաքանչիւր տառից, որովք ճշեմք մեք զայնս (*)։ Եօթներորդն՝ թէ որոյ ազգի իցեն մէն մի ՚ի տառիցդ։ Ութերորդն՝ ցուցանէ զթուահամարս երբ վարին նշանագիրքդ իբրև համարագիր։

Վարժիկք ունին երիս ձայնաւորս զորս կոչեն فتحه ֆէթհէ, كسره քէսրէ և ضمه զամմէ. զառաջինն նշանագրեն դնելով գիծ խիչ ՚ի վր տառին, և արտաբերի է. որպ زَر զէր. վեր։ Զերկրորդն նշանագրեն դնելով զնոյն գիծն ՚ի ստորե տառից՝ և արտաբերեն ի. որպ زِره զիրէհ. զրահ։ Զերրորդն նշանագրեն դնելով զգրախեցս զայս (ُ) ՚ի վերայ տառին, և արտաբերեն ու. որպ زُمُرّد զումուռրուտ. զմրուխտ։

Վարժիկք ՚ի փոխ առեալ են յարաբացւոց և այլ չորս նշանախեցս առ ՚ի որոշել զճշմարտեն բառից. առաջինն է جزم ճէզմ, որ դրոշմի այսպէս (°), և որոյ զօրութիւնն է ցուցանել թէ բաղաձայնն յորոյ վր եդեալ է՝ չունի զձայնաւոր ինչ. որպ دَسْت տէսթ, ձեռն. شرشار շըրշար, ... ։ Երկրորդն է تشديد թէշտիտ (ّ), որ ցուցանէ զկրկնութի տառին յորոյ վերայ եդեալ է. որպ جرّاح ճէրրահ, բժիշկ։ Երրորդն է همزه հէմզէ (ء), որ տայ էլիֆ տառին զձայնումն իբր նման այնի, որ և երբեմն դնի ՚ի տեղի էլիֆին. որպ قورقمق գորգմագ, ... ։ Չորրորդն է مدّ մէտտ (~) զոր յաւելուն էլիֆին, որով լինի իբրև կրկին ֆէթհէ, կամ թէ ասել՝ երկար. որպ آدم ատէմ, մարդ. և ըստ հակառակին ըմ բառք որք սկսանիցեն էլիֆով և պակասիցէ նդ մէտ, համարին իբր մի ֆէթհէ, կամ թէ ասել՝ Ա սուղ, կամ է. որպ اسب էսպ, երիվար. اخكر էխկէր, կրակ։

Ծորդատառք պարսից զորս կոչեն حروف توافي հուրուֆի թէվաֆի, են առաջինկայքս. ب պէ լծորդ է ընդ و վաւ. որպ آب ապ, աւ, ջուր. ب պէ ընդ پ փէ. որպ بستوق պէսթուգ և پستوق փէսթուգ, սափոր. ընդ ف ֆէ. որպ جاروب ճարուպ և جاروف ճարուֆ, աւել. پ փէ ընդ ف ֆէ. որպ پيل փիլ և فيل ֆիլ, փիղ. ընդ ك քեաֆ. որպ پنجشك փէնճիշք և كنجشك քէնճիշք, ճնճղուկ

(*) Անփոփոխ պահել կամելով զհամեմատութիւն զոր կալեալ էր Գէորգ դպիր Ճ. մէջ հայերէն և պարսկերէն տառից ՚ի յօրինուած բառարանին, նմին զհետ գնացաք և ՚ի քերականութեանս. թէպէտ և ըստ մեզ ընտրելի էր այլով օրինակաւ համեմատել զտառսդ զայդոսիկ։

[illegible] · ث ԹԷ ընդ ս տալն · որ بث [illegible] [illegible], [illegible] · պու [illegible] پور [illegible] և پذر [illegible], Հայր · ف ֆէ ընդ و վաւ [illegible] ب պէ [illegible] [illegible] · زوان զէվան և زبان զէպան, լեզու · س սին ընդ ش շին · [illegible] و فرشك ֆէրշէք և فرشك ֆէրշէք, աղանձավախաղող · և այսպէս 'ի սոյն [illegible] փոփոխութիւն պարսիկ ·

Բայց 'ի սոցունց ստորոգութիւն է պարսից դարձեալ այլ ասաս վարել 'ի [illegible] [illegible]ից, որպէս ت ԹԷ ընդ ط Թըէ · որ تپه Թէփէ և طپه Թըփէ, կոդաս · نفت նէֆԹ և نفط նէֆԹ, նաւԹ ·

ج ճիմ ընդ ت ԹԷ ز զէ ژ ժէ և ك քեաֆ · որ داراج դարաճ և دارات դարաԹ, պաշտ և պաշար, Հանդէս · ترجان Թէրճիման և ترزمان Թէրզիման, Թարգման · اخشيج ախշիճ և اخشيك ախշիք, Հակառակորդ · لاجورد լաճիվէրտ և لاژورد լաժիվէրտ, գոյնձագոյն ·

چ չին ընդ ژ ժէ ش շին և ص սատ · որ كچ քէչ և كش քէշ, կիր · چاروب չարուպ և شاروب շարուպ, աւել · چين չին և صين սին, չին ·

خ խը ընդ ك քեաֆ · որ خمان խըման և كمان քէման, աղեղն ·

ش շին ընդ س սին · որ مشك միշք և مسك միսք, մուշկ ·

غ ղայն ընդ خ խը · որ غليواج ղալիվաճ և خليواج խալիվաճ, Թռչուն ինչ ·

ق գաֆ ընդ ك քեաֆ · خناق խընաք և خناك խընաք, փողլացաւ ·

ك քեաֆ ընդ ق գաֆ · որ وانك վանք և وانق վանգ, տանիք, դանիկ ·

گ կեաֆ ընդ ج ճիմ · որ كوهر կէվհէր և جوهر ճէվհէր, գոհար ·

م միմ ընդ ن նուն · որ خمبره խըմպէրէ և خنبره խընպէրէ, փայտ [illegible] [illegible] ·

و վաւ ընդ ج ճիմ ح հա և ق գաֆ · որ باونه պավունէ և بابونج պապունճ, պապունէ, [illegible] · بنفشه պէնէֆշէ և بنفشج պէնէֆշէճ, մանուշակ · كناه կիւնահ և جناح ճինահ, մեղք · رمه րէմէ և رمق րէմէք, Հօտ ·

Ի յատուկ պարսկական բառս սակաւ ուրեք 'ի վայր արկանին տառքս ح ص ث ق غ ع ظ ط ض · մինչ զի ուր գտանիցին դոքին՝ այն են բառք արաբական Համա֊րին, բաց 'ի սակաւ բառից · որ صد սատ, Հարիւր · شصت շէսդ, ղասդ, կարԹ, [illegible] ·

Ուր միանգամ տառս خ խը, զոր [illegible] ձայն ունիցի ընդ Վէրէհէ և ընդ ալիֆ, յայնժամ ստորոգուԹիւն է պարսից յետոյ քան و վաւ [illegible], զ[illegible] և ւ զէրէֆ որ خواستن խասթէն, [illegible] · خواهر խահէր, քոյր · خواب խապ, քուն · որպէս Թէ խօսԹէն · խօհէր · խօպ · Իսկ ուր զոր [illegible] ձայն ունիցի ընդ Վէրէհէ և ընդ [illegible], յայնժամ յարէն 'ի خ խը զատուած, վաւ և ى էէ · որ خويش խիշ · ինքն, մեր ձայն · خويد խիտ, դալար ցորեան · որպէս Թէ խօիշ · խօիտ ·

Տառքս ض ղատ և ظ ղը՝ միօրինակ վարին առ պարսս իբրև զմեր ձ · որ رضوان րըզվան, Հաճութիւն · نظر նազար, նայեցուած ·

و Հէ կրկին է առ պարսս, այսէ اصلى هاى Հայի ասլի · Հէ արմատական որ

հէչի խօրև զեր ։ որ օ، مرا հէմրահ , արտաքոյ . և علامت ی ها հայի մաքրի . հէ անձայն զի ոչ հէչի ձայն նը . որ کریه կիրէհ , որբ՝ կոծ . بنده պէնտէ , ծառայ ։

Տառս ی եէ զանազանաբար ՚ի վեր առեալ , զորս պհարկաւոր գիտելեաց կարգեսցուք յառաջիկայդ . یای اضافت եաի իզաֆէթ . կամ եէ կցորդութե . որ پاشای بغداد փաշաի պաղտատ . բղեշխ բաբելոնի ։ 2 . یای وحدت եաի վահտէթ . եէ միաւորութե . որ کرکی կիւրկի , գայլ մի ։ 3 . یای مصدر եաի մաստար , եէ գոյականի . որ دوستی տօսթի , բարեկամութի ։ 4 . یای نسبت եաի նիսպէթ , եէ առնչական . որ اصفهانی իսֆահանի , իսպահանցի ։ 5 . یای خطاب եաի խիտապ , եէ երկրորդ դէմաց . որ رسیدی րէսիտի , հասեր . رسی րէսի , հասանես ։ 6 . یای حکایت եաի հիքեայէթ , եէ պատմական . որ رسیدی րէսիտի , եհաս ։ 7 . یای تنکیر եաի թէնքիր , եէ անորոշ . որ پادشاهی փատիշահի , թագաւոր մի ։

Ի ձայնաւոր տառս նոյն կանոն է սոցա ընդ արաբացւոց . նոյնպէս և ՚ի յարմարագրութիւն նոյն վարին նշանագրովք , որք կոչեցին դորշեալ զձայնաւորս՝ զորովքս ا էլիֆ . و վավ . ی եէ . զնեւրով ا էլիֆ ՚ի քէսրէ , و վավ ՚ի զամմէ , և ی եէ ՚ի ֆէթհէ ։ Իսկ ուր զանց առնիցեն զձայնաւորօքդ այդոքիւք՝ անխտրաբար վարեն ՚ի տեղի միմեանց . որ اوهان օհան և اوهن օհէն , բերան . بودن պուտէն և بدن պէտէն , լինել . دیه տիհ և ده տէհ , գիւղ ։

Իսկ ՚ի չգոյէ ձայնաւորաց՝ բազում ծագեն դժուարութիւնք յընթերցմունս ձեռագիր մատենից . քանզի բազում բառք են որոց նոյն են բաղաձայնք , և միայն ընդ փոփոխել ձայնաւորացն և նշանակութիւնքն փոփոխին . որ کل քիւլ , վարդ . کل քիլ , տիղմ . کل քէլ , դոնչութիւն գլխոյ . ևն ։

Ի տեսակաց նշանախեցից յաւէտ սովորական է առ պարսս՝ վարել զանուանեալսն . تعلیق թաալիգ . شکسته շիքէսթէ և نسخی նէսխի ։ Իսկ ողորակ կամ շէշէ բառից նոցա ՚ի վերջինմն է ։

ԳԼՈՒԽ . Բ .

Յաղագս Անուան , Սեռի , և Թուոյ ։

Անուն , اسم իսմ , կրկին է . գոյական . որ کتاب քիթապ , գիրք . دوستی տօսթի , բարեկամութի . և ածական . որ بزرک պիւզիւրք , մեծ . خوب խուպ , գեղեցիկ ։

Սեռ , جنس ճինս , առ պարսս մի միայն է , և անփոփոխ է՝ թէ ՚ի գոյականս և թէ յածականս . որ خوب խուպ , գեղեցիկ . միօրինակ աստ մարթ է , مرد خوب մէրտի խուպ , գեղեցիկ այր . և زن خوب զէնի խուպ , գեղեցիկ կին ։ Իսկ ՚ի զանազանութե սեռից ՚ի գոյականս՝ են նց անուանք զատուցեալք , կամ յաւելուն նշանակիչ բառք խտրականութե սեռից . որ ՚ի մարդիկ , پسر փիսէր , նշանակէ մանուկ . և کنیز քէ-

…ականն՝ ՚ի Պետրոսեանէ արու․ և ماده մատէ, մատակ, էգ․ որ
… ماده گاو մատէ կավ, կով․ կամ այսպէս شیر نر շիրի նէր, առիւծ արու․ شیر ماده շիրի մատէ, մատակ առիւծ․ Այն և որք զատուցեալ անուանս ունին որպէս․ որ خروس խորոս․ հաւ, աքաղաղ․ ماکیان մաքեան, մարի․

Բազմաւորականն թիւն անուանեալք առ նոսա جمع ճէմ, կազմի յաւելլով ըստ կանոնի զմասնիկդ ان ան, կամ ها հա․ խմմ յանուանս մարդկան կամ այլ անասնոց, որք անուանին اسماى ذوى الارواح իսմայի զէվիլէրվահ․ որ مرد մէրտ, այր․ مردان մէրտան, արք․ زن զէն, կին․ زنان զէնան, կանայք․ گرگ կիւրկ, գայլ․ گرگان կիւրկեան, գայլք․ مرغ մուրղ, թռչուն․ مرغان մուրղան, թռչունք․

Անուանք որք յանգին ՚ի ا էլիֆ, կամ ՚ի و վավ, յորդորակի լինին յաւելուածով մասնկանս ان ան, որոց ընդ մէջ մտանէ և գիրդ ی եէ․ որ دانا տանա, իմաստուն․ دانایان տանայեան, իմաստունք․ بدخو պէտխու, ախտաւոր․ بدخویان պէտխույեան, ախտաւորք․

Անուանք յանգեալք ՚ի ه հէ անձայն․ կամ որ նոյն է՝ եղծեալ զենի հէլհէյի, խնդրեն յառաջ քան զմասնիկն ان ան, զատան گ կէաֆ․ որ بنده պէնտէ, ծառայ․ بندگان պէնտէկեան, ծառայք․ ուր անսանէս զի զանց լինի զատեալ ه հէ․ այսպէս فرشته ֆիրիշթէ, հրեշտակ․ فرشتگان ֆիրիշթէկեան, հրեշտակք․

Յանուանս իրաց անշնչից որք կոչին اسماى جمادات իսմայի ճէմատաթ, յաւելու յորդորականն մասնիկդ ها հա․ որ آسمان ասման, երկին․ آسمانها ասմանհա, երկինք․ Նոյնպէս յօդին և բազմաւորականք մարդկային անդամոց․ որ تن թէն, մարմին․ تنها թէնհա, մարմինք․ سر սէր, գլուխ․ سرها սէրհա, գլուխք․

Յանուանս յանգեալս ՚ի ه հէ, բարձեալ լինի այդ տառ․ որ خانه խանէ, տուն․ خانها խանէհա, տունք․ پاره պարէ, գինի․ پارها պարէհա, գինիք․ جامه ճամէ, զգեստ․ جامها ճամէհա, զգեստք․

Այն և բազում անուանք որք յանգին և յերկոսին վերջաւորութիւս․ որ فرشته ֆիրիշթէ, հրեշտակ․ فرشتگان ֆիրիշթէկեան, և فرشتها ֆիրիշթէհա, հրեշտակք․ درخت տիրախթ, ծառ․ درختان տիրախթան, և درختها տիրախթհա, ծառք․

Բազմաւորականն երկուց բառից آفتاب աֆթապ, արև․ և ماه մահ, լուսին, ձևանայ յաւելուածով մասնկանդ ان ան․ որ آفتابان աֆթապան, արեգակունք․ ماهان մահան, լուսինք․ Զարաբացի անուանս է ուրեք զի ըստ իւրեանց կանոնաց յոգնական գործեն պարսիկք․ որ مسافر մուսաֆիր, հիւր․ مسافران մուսաֆիրան․ تقصیر թագսիր, պակասութիւն․ تقصیرها թագսիրհա, պակասութիւնք․ և է ուրեք զի զարաբացւոց բազմաւորականն ՚ի վեր առկանեն այսպէս․ مسافر մուսաֆիր․ مسافرون մուսաֆիրուն․ تقصیر թագսիր, պակասութիւն․ تقصیرات թագսիրաթ, պակասութիւնք․

Դժուար արժան է զայս․ զի ՚ի բազմաւորականս բարդեալ անուանց՝ յոգնա-

կանոնացուցիչ մասնիկն միշտ յաւելու 'ի յետին բառն . զր. شکسته دل շիքեսթէ տիլ , խորտակեալ սրտիւ , վհատեալ . شکسته دلان շիքեսթէ տիլան , վհատեալք . فروتن ֆէրութէն , խոնարհ . فروتنان ֆէրութէնան , խոնարհք .

ԳԼՈՒԽ . Գ.

Յաղագս Հոլովման .

Հոլովումն պարսկական անուանց կատարի մասնկամբ را րա , որով մերթ ձեւանայ սեռական յոլով . բազում անգամ տրական , և բազմագոյն ևս հայցական . զի ուր երկու գոյական անուանք նշանակիչք զանազան իրաց' մօտ միմեանց դնիցին 'ի կարգի բանիցն , մին 'ի նոցանէ որ ընդ մեզ սեռական դնելի էր' մնայ առանց յուղղական հոլով , և 'ի միւս բառն որ հիմն և ենթակայն է բանին' յաւելու 'ի պահու ընթերցմանն ի , սուղ . զր. کتاب پدر քիթապի փէտէր . գիրք հօրն . Իսկ թէ այդ բառ յանգիցի 'ի ا էլիֆ , կամ و 'ի վավ , յայնժամ պարտ է յաւելուլ 'ի նա ی եէ , որ կոչի یای اضافت եայի իզաֆէթ , այս է կցորդութ . զր. پاشای بغداد փաշայի պաղտատ , բդեշխն բաբելոնի . صحرای تیهوی թիհուի սահրա , կաքաւ դաշտի . Իսկ թէ գլխաւոր գոյական բառն յանգիցի 'ի ی եէ , կամ ه հէ անձայն , յայնժամ յաւելեալ լինի 'ի նոյն' ' հէմզէ իզաֆէթ . զր. خانهٔ زکریا խանէ'ի զէքէրիա , տուն Զաքարիայ . Եւ 'ի բացատրութ սեռականին ունին պարսիկք զձայնդ مال մալ , որ ստացուած նշանակէ , զոր յարեալ 'ի սեռականն յօրինեն այսպէս . کتاب مال پدر քիթապի մալի փէտէր . գիրք հօրն . Կարձեալ յօրինեն սեռական մասնկամբ از էզ , կամ ز զէ , այսպէս کتاب از پدر من քիթապ էզ փէտէրի մէն . որ ըստ բառիցն նշանակէ գիրք 'ի հօրէն իմմէ . և ըստ կարգի իմաստիցն , հօրն իմոյ .

Տրական հոլով կազմեն' յաւելլով յուղղականն ب պ , կամ به պէ . զր. بمن داد պէմէն տատ , ետ ցիս . به پدر պէ փէտէր , հօրն կամ ցհայր . կազմեն դարձեալ տրական հոլով նախդրիւս را րա . զր. اورا دادم օրա տատէմ , ետու նմա . مرا گفت մէրա կէֆթ , ինձ ասաց . Այսուհետեւ զի , առաւելութ մակդրի 'ի տրականն և մասնիկն مر մէր , ուր 'ի վերջ բառին կայ . և را րա՝ նշանակ տրականի . զր. وای مر شمارا վայ մէր շումարա , վայ ձեզ . بس است مر ترا պէս էսթ մէր թէրա , բաւական է քեզ . 'ի դասին աւելորդ է մէր .

Հայցական անուն' միշտ նման դնի ուղղականին . զր. دعا کردن տուա քէրտէն , աղօթս մատուցանել . Իսկ թէ որոշելոյ պէտք լինիցին' յաւելեալ լինի 'ի նոյն մասնիկդ را րա . զր. اورا دیدم օրա տիտէմ , տեսի զնա . Այս հայցականակերպ մասնիկ զատաբար կամ անմիջաբար մակադրի յանուանն , ևս և 'ի բազում միանգամայն' ուր

[illegible] ի վերայ կարգի չորրորդական դիմաց. Օր. کتاب پدر خودرا آورد [illegible] [illegible] բերաւ. Եւս զգիրս հօրն իւրոյ։ Ի գիրս ուրեք մասնիկդ را դնի՝ [illegible] ներքոյ յուղղականին՝ հայցական յօդին ձայն. Օր. ور اول آفريد خدا مرآن اسمان ومرآن [illegible], ի սկզբանէ [illegible] զերկինս և զերկիր։

Կոչականն նոյն իսկ ուղղականն է, որում երբեմն մասնիկդ մասնիկք ای կամ يا էա, կամ یا եա. Օր. ای پادشاه էյ փատիշահ, ով Թագաւոր։ Իսկ [illegible] երբեմն ի կերպ յաւելուն յուղղականն, Օր. بلبلا مژده بهار بيار [illegible] ով սոխակ՝ մեզ զաւետիս գարնան։

Բացառական յօդինն՝ յաւելլով յուղղականն զմասնաւորութիւն از էզ, կամ ز զէ. Օր. ازپدرمن էզփէտէրէմ, ի հօրէ իմմէ։

Այսպէս ահա զայս ամ, յետ մասնաւորաց և զհոլովումն պարսկական անուանց։

Եզական.

Ուղղ. مرد Մէրտ. Այր.
Սեռ. مردرا Մէրտրա, կամ مرد մէրտ, կամ ازمرد էզմէրտ. Առն.
Տրակ. مردرا Մէրտրա, կամ بمرد պէմէրտ, կամ بمرد պէ մէրտ. Առն, ցայր.
Հայց. مردرا Մէրտրա, կամ مرد մէրտ. զԱյր.
Բաց. ازمرد էզմէրտ. յԱռնէ.
Կոչ. ای مرد էյ մէրտ. ով Այր.

Յոգնական.

Ուղղ. مردان Մէրտան. Արք.
Սեռ. مردانرا Մէրտանրա, կամ مردان մէրտան, կամ ازمردان էզմէրտան. Արանց.
Տրակ. مردانرا Մէրտանրա, կամ بمردان պէմէրտան, կամ بمردان պէմէրտան. Արանց, առ արս.
Հայց. مردانرا Մէրտանրա. զԱրս.
Բաց. ازمردان էզմէրտան. յԱրանց.
Կոչ. ای مردان էյ մէրտան. ով Արք.

Եզական.

Ուղղ. گل Կիւլ. Վարդ.
Սեռ. گلرا Կիւլրա, կամ گل կիւլ, կամ ازگل էզկիւլ. Վարդի.
Տրակ. گلرا Կիւլրա, կամ بگل պէկիւլ, կամ به گل պէ կիւլ. Վարդի, ի վարդ.
Հայց. گلرا Կիւլրա, կամ گل կիւլ. զՎարդ.
Բաց. ازگل էզկիւլ. ի Վարդէ.
Կոչ. ای گل էյ կիւլ. ով Վարդ.

Յոգնական.

Ուղ.	مردان մէրտան. Մարդք.
Սեռ.	مردانرا մէրտանրա, կամ مردان մէրտան, կամ از مردان էզ մէրտան. Մարդկաց.
Տրակ.	مردانرا մէրտանրա, կամ بمردان պէ մէրտան, կամ بمردان պէ մէրտան. Մարդկաց՝ ի վերայ.
Հայց.	مردانرا մէրտանրա, կամ مردان մէրտան. զՄարդս.
Բաց.	از مردان էզ մէրտան. ՚ի Մարդկաց.
Կոչ.	ای مردان էյ մէրտան. ո՛վ Մարդք.

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս Բաղդատականի և Գերադրականի.

Առ պարսս կազմի բաղդատականն՝ յաւելլով ՚ի դրականն զմասնիկն تر թէր. իսկ գերադրականն՝ յաւելլով ترین թէրին. որպէս به պէհ, բարի, լաւ. بهتر պէհթէր, լաւագոյն. بهترین պէհթէրին, ամենալաւ. بد պէտ, վատ. بدتر պէտթէր, վատթար, վատթարագոյն. بدترین պէտթէրին, ամենավատ. مه մէհ, مهتر մէհթէր, مهترین մէհթէրին. մեծ, մեծագոյն, ամենամեծ.

Բաղդատականն խնդիր առնու ՚ի կարգի շարադրութեան նախադրութիւն از էզ. որպէս ماه از خوبتر խուպթէր էզ մահ, գեղեցկագոյն քան զլուսին. գերադրականն գրեթէ ոչ առնու խնդիր.

Նուազի բաղդատականն՝ յաւելլով ک քեաֆ, թէ յառաջ քան զնա գուցէ քէսրէ. որպէս بهتر պէհթէր, լաւագոյն. بهترک պէհթէրէք, նուազ ՚ի լաւութէ.

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս Դերանուանց.

Դերանունք առ պարսս ضمیر զամիր անուանին, որոց էական դերանունք են առաջինկայքդ.

Եզական.	Առաջին դէմ.	Յոգնական.
من մէն. Ես.		ما մա, և ուրեք مایان մայան. Մեք.
مرا մէրա, կամ ازمن էզմէն. Իմ.		ازما էզմա. Մեր.
مرا մէրա, կամ بمن պէմէն. Ինձ, ցիս.		مارا մարա, կամ بما պէմա. Մեզ, ցմեզ, առ մեզ.
مرا մէրա. զԻս.		مارا մարա. զՄեզ.
ازمن էզմէն. Յինէն.		ازما էզմա. ՚ի Մէնջ.

Եզական.	Երկրորդ դէմ.	Յոգնական.
تو Թու. Դու.		شما Շումա և ուրեք شمایان Շումայեան. Դուք.
ترا Թուրա, կամ ازتو Էզթու. Քոյ.		ازشما Էզշումա. Ձեր.
ترا Թուրա, կամ بتو Պէթու. Քեզ.		شمارا Շումարա, կամ بشما Պէշումա. Ձեզ.
ترا Թուրա. Զքեզ.		شمارا Շումարա. Զձեզ.
ازتو Էզթու. Ի քէն.		ازشما Էզշումա. Ի ձէնջ.

Եզական.	Երրորդ դէմ.	Յոգնական.
او Օ կամ ու. Նա.		ایشان Իշան. Նոքա.
ازو Էզու, կամ ازاو Էզօ. Նորա, ի նմանէ.		ازایشان Էզիշան. Նոցա, ի նոցանէ.
اورا Օրա, կամ باو Պաօ, بدو Պէտօ, بوی Պէվիյ. Նմա, նմին.		ایشانرا Իշանրա, կամ بایشان Պէիշան. Նոցա, ցնոսա.
اورا Օրա. Զնա.		ایشانرا Իշանրա. Զնոսա.

Փոխանակ գրելոյ او Օ, գրեն նաև و Օ, կամ وی Վիյ, կամ اوی Օյ. Նա.

Փոխանակ մեր դերանուանս Ինքն՝ ունին պարսիկք զդերանուանսդ خود Խօտ, خویش Խիշ և خویشتن Խիշթէն. յորոց Խօտ կապակցի ընդ գործ. տմ գոլով. Որ.

من خود Մէն Խօտ. Ես ինքն.	ماخود Մա Խօտ. Մեք ինքնին.
توخود Թու Խօտ. Դու ինքն.	شماخود Շումա Խօտ. Դուք ինքնին.
اوخود Օ Խօտ. Նա ինքն.	ایشان خود Իշան Խօտ. Նոքին.

Այլ սա ի բանս նաև առանց այլոց դերանուանց. خود کفت Խօտ կիւֆթ, Նա ինքն ասաց. خودکفتم Խօտ կիւֆթէմ, Ես ինքն ասացի. Դարձեալ այլազգ. باخود Պախօտ, ինքն ընդ անձին իւրում. خودرا Խօտրա, անձին իւրում. سوی خویش Սուիյ Խիշ, առ ինքն.

Ցուցական դերանուն մերձաւորի, զոր անուանեն նոքա اسم اشارت قریب Իսմի իշարէթի գարիպ, Այս.

Եզական. این Ին. Սա.
ازاین Էզէին, կամ լաւ ևս ازین Էզին. Սորա, ի սմանէ.
اینرا Ինրա, և باین Պէին. լաւ ևս بدین Պէտին. Սմա, առ սա.
اینرا Ինրա. Զսա.

Յոգնականն է اینان Ինան, կամ اینها Ինհա. Սոքա.

Նշանակում այն է, զի این Ին, մերձաւորի ընդ առընթերակայ անուանս. Որ اینزمان Ինզէմանն. Յայսմ ժամանակի. Այլեւ փոխանակ գրելոյ Ին, գրեն ام Իմ. Որ امروز Իմրուզ, Այսօր. امشب Իմշէպ, Յայսմ գիշերի. امسال Իմսալ. Յայսմ ամի.

Ցուցական դերանուն հեռաւորի, անուանեալ ի պարսից اسم اشارت بعید Իսմի իշարէթի պաիտ, Այն.

Եզական. آن ան. Նա, այն.
ازان էզան. Նորա, ՚ի նմանէ.
آنرا անրա, կամ بدان պէտան. Նմա.
آنرا անրա. Զնա.

Բազմաւորականն է آنان անան, կամ آنها անհա. Նոքա, այնոքիկ.

Յարաբերական դերանուն առ պարսս զանազան է ըստ մարդոյ և ըստ թուոյ. Առաջին մարդոյ ՚ի վեր արկանեն که քի՝ յեզականին և ՚ի յոգնականին. այլ զի անհոլով է, կարգին հոլովք նոր զուգադրութեամբ او օ՝ դերանուան, ըստ այսմ օրինակի.

Եզական. که քի. Որ.
کازو քի էզօ. Որոյ, յորմէ.
کاورا քի օրա, կամ کبدو քի պէտու. Որում, առ որ.
کاورا քի օրա. Զոր.

Յոգնական. که քի. Որք.
کازایشان քի էզիշան. Որոց, յորոց.
کایشانرا քի իշանրա, կամ کبایشان քի պէիշան. Որոց, առ որս.
کایشانرա քի իշանրա. Զորս.

Բայց այսմ է օրինակս, آن است که دی اورا دیدی ան էսթ քի տի օրա տիտի. Նա ինքն է զոր յերեկն զնա տեսեր. Միայն զի ուրեք զանց լինի զկրկնումն դերանուանցդ՝ երբ դիւրին իցէ հանել զիմաստն. որպէս این مرد که بینی ին մէրտ քի պինի. Մարդդ զոր տեսանես.

Յարաբերական դերանուն խնդրական է՝ چه չէ. ՚Ի յարաբերել անձն զնախադասն յարաբերելին՝ դնի այսպէս, آنکه անքի, այն որ. և ՚ի բազմաւորականն՝ آنانکه անանքի, նոքա որք. آنچه անչէ, այն որ. իրն.

Հարցական դերանուն մարդոյ՝ առ պարսս է که քի, ով. հոլովի առ ըստ կանոնաց. այլ ՚ի հոլովմունս իւր՝ կից ունի զձայնն ه հէ. որպէս کرادی քիրա տահէմ, ում տամ: Հարցական դերանուն մէ իրի է՝ چه չէ, որ ՚ի հոլովմունս իւր ջնջէ զհ չէրա. Եթէ այդ հարցական դերանունք յարեսցեն յերրորդ դէմ էական բային՝ است էսթ, դիւրն օ հէ՝ փոխադրի ՚ի ی է. որպէս کیست քիսթ, ով է. چیست չիսթ. զինչ է. Առնին պարսիկք և այլ հարցական, որ է کدام քէտամ. ով, որպիսի. իրն.

Եթէ յաւելուցու ՚ի դերանուանս զմասնիկն هر հէր, լինի իբրև զմեր ամենայն որ ոք, որ միանգամ. որպէս هرکه հէր քի, և هرآنکه հէր անքի, որ ոք. هرچه հէր չէ, هرآنچه հէր անչէ, որ ինչ և. هرکدام հէր քէտամ, ով ոք. هریکی հէր եքի, կամ իւրաքանչիւր ոք.

Ստացական դերանուանք նոյն են առ պարսս ընդ Հայկանաց. և յարին յանուանս յեղականս և՚ի յոգնականս, յաւելլով յանուանն՝ յընթերցանութեան պաշտօն ի, սուղ, որ

پدرمن	փէտէրէ մէն.	Հայր իմ.	پدران من	փէտէրանէ մէն.	Հարք իմ.
پدرتو	փէտէրէ թու.	Հայր քո.	پدران تو	փէտէրանէ թու.	Հարք քո.
پدراو	փէտէրէ օ	Հայր նորա.	پدران او	փէտէրանէ օ	Հարք նր.
پدروی	փէտէրէ վէյ		پدران وی	փէտէրանէ վէյ	
پدرما	փէտէրէ մա.	Հայր մեր.	پدران ما	փէտէրանէ մա.	Հարք մեր.
پدرشما	փէտէրէ շումա.	Հայր ձեր.	پدران شما	փէտէրանէ շումա.	Հարք ձեր.
پدرایشان.	փէտէրէ իշան.	Հայր նոցա.	پدران ایشان	փէտէրանէ իշան.	Հարք նց.

Բազում ուրեք փոխանակ ստացականի՝ վարեն զդերանունդ خود խօտ. որ پسرخود փէսէրէ խօտ. որդի իմ, քո, նր. մեր, ձեր, նց: Սոյն նման այսմ և զդերանունդ خويش խիշ, նա ինքն.

Յանուանս յանգեալս ՚ի ا էլիֆ կամ, و վաւ, յաւելեալ լինի և առսս ی եէ. որ پاشامن փաշայի մէն, թագաւորին իմ. کاوی او կեավի օ. կովուդ նր. Իսկ թէ անուանն որոշեն յանգիցի ՚ի ی եէ կամ ه հէ անձայն, յայնժամ յաւելեալ լինի ՚ի նոյն ՚ հէմզէ իշարէթի. որ فرزنهٔ شما ֆէրզէնտէի շումա, զաւակ ձեր. روی من ռուիյի մէն. մազ իմ:

Բազում այն է դարձեալ՝ զի յօրինեն ստացականք՝ յարադրութ(եամբ) տառիցս م մի, ت թէ և ش շին. իբրև զմեր դիմորոշ յօդս հանդերձ նախընթաց ֆէթհէիւ, և քէսրէի էմ, էթ, էշ. որ دلم տիլէմ, սիրտ իմ. دلت տիլէթ, սիրտ քո. دلش տիլէշ, սիրտ նր: Իսկ ուր այդ յարադրութիւնք ՚ի վր գայցեն բառից յանգելոց տառիւդ ه հէ, վանի ֆէթհէհէ. յայնժամ վր բաղաձայնութե դնեն ընդ մէջ երկուցն ا էլիֆ. որ جامه ام ճամէ՛ էմ, զգեստ իմ. جامه ات ճամէ՛ էթ, զգեստ քո. جامه اش ճամէ՛ էշ, զգեստ նորա.

Իսկ զի և ՚ի բաց թողուն զանձնաւորն զառաջն ه հէ. որ فرزنم ֆէրզէնտէմ, զաւակ իմ. فرزنت ֆէրզէնտէթ, զաւակ քո. فرزنش ֆէրզէնտէշ, զաւակ նր: Իսկ ուր յանգիցէ անուանն ՚ի ا էլիֆ՝ կրկին օրինակաւ լինի յարադրութե վերջիշեալ տառիցդ. առաջին բառականոնի, عصام ասամ, գաւազան իմ. عصات ասաթ, գաւազան քո. عصاش ասաշ, գաւազան նր: Երկրորդ՝ դնելով ی եէ միջաձայն ը մէջ ا էլիֆին, և ընդ մէջ յարադրեալ տառին. որ عصایم ասայէմ, عصایت ասայէթ, عصایش ասայէշ:

Եթէ անուանն յանգիցի ՚ի و վաւ կամ ی եէ, երբեմն մարթ է յաւելուլ ՚ի նա զվերոգրեալ զառաջ. առաջինն՝ անփոփոխ պահելով զյանգն՝ ՚ի վր յաւելուն տառսդ. որ عدوم ատուվմ, عدوت ատուվթ, عدوش ատուվշ, թշնամին իմ, քո, նորա.

Տ

دوستيم դօստէյիմ , دوستيت դօստէյիտ , دوستيش դօստէյիշ , բարեկամն իմ , քո , նորա . Յոգնորդ` ներքոյ առնելով , կամ նուազելով ղձայն առաւելոյ , վաւ և ی էէ . որ عدوم ատուվէմ , عدوت ատուվէթ , عدوش ատուվէշ . دوستيم դօստէյիմ , دوستيت դօստէյէթ , دوستيش դօստէյէշ . Յոգնորդ` դնելով ی էէ ներքոյ ընդ մէջ , վաւ վէն կամ ی էէէ . որ عدويم ատուվայէմ , عدويت ատուվայէթ , عدويش ատուվայէշ . دوستييم դօստէյէյէմ , دوستييت դօստէյէյէթ , دوستييش դօստէյէյէշ . կամ دوستي يم դօստի էէմ , دوستي يت դօստի էէթ , دوستي يش դօստի էէշ .

Յօդքն նախադրեալ առաւելուածքն ուրեք յաւելուն նաև ’ի բայս և ’ի մասնիկս . որ ديدمت տիտէմէթ , տեսի զքեզ . ميزنمش միզէնէմէշ , զանս հարկանեմ զնա . يادارش եատ տարէշ , յիշեա զնա . كرت نصيب باشد կէրէթ նասիպ պաշէտ , եթէ քեզ լիցի առհմանեալ .

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Բայի.

’Ի բայս պարականս են որ Ներգործականք են . որ ديدن տիտէն , տեսանել . և են որ Չէզոքական . որ مردن մուրտէն , մեռանել : Կրաւորական . որ شدن շուտէն , լինել , գործիլ : Հասարակ . որ خستن խասթէն . խոցել և խոցիլ :

Յանորինութեան բայից այսոցիկ որք յանգին ’ի دن տէն , ածանցին և այլք յանգեալք ’ի يدن իտէն , որք եթէ ածանցին ’ի չէզոքականաց , լինին ներգործականք . իսկ թէ ’ի ներգործականաց` լինին և նոքա ներգործական կրկին օրինակաւ . որ ’ի բայէն تابيدن թաբիտէն , շողել . ածանցի تابانيدن թաբանիտէն , շողել տալ : Կրկնեալ ایانیدن այանիտէն , լինի تابايانيدن թաբայանիտէն . շողել տալ , շողեցուցանել :

Եւ ’ի դէպս ներգործականաց բաղադրեալ ածանցական բայս ’ի վեր արկանեն պարսիկք , յորոց կարգի են առաջնակայքդ . بودن պուտէն , լինել . كردن քէրտէն , առնել . فرمودن ֆէրմուտէն , հրամայել . آوردن աւէրտէն , բերել . داشتن տաշթէն , ունել . نمودن նիմուտէն , ցուցանել . ساختن սախթէն , առնել . خوردن խօրտէն , ուտել . زدن զէտէն , հարկանել . بردن պիւրտէն , տանել . որ آمده بود ամէտէ պուտ , եկեալ էր . خسته كردن խասթէ քէրտէն , խոցել . كرامت فرمودن քէրամէթ ֆէրմուտէն , առատաձեռնել . ياد آوردن եատ աւէրտէն , յիշել . برداشتن պէրտաշթէն , վերցուցանել . التفات نمودن իլթիֆաթ նիմուտէն , յարգել . ترساختن թէր սախթէն , խոնաւացուցանել . تيار خوردن թիմար խօրտէն , խնամել . حرف زدن հարֆ զէտէն , խօսել . فرمان بردن ֆէրման պիւրտէն , հնազանդել հպատակել .

Օժանդակ կրաւորականաց են յետադասքդ․ شدن շուտէն․ كشتن կէշթէն․ كرديدن կէրտիտէն, լինել․ یافتن եաֆթէն, գտանել․ كرفتن կէրիֆթէն, ըմբռնել․ آمدن ամէտէն, գալ․ دیدن տիտէն, տեսանել։ Օր. خوانده شدن խանտէ շուտէն, ընթեռնուլ․ شمار شدن շէմար շուտէն, համրել․ نمودار كشتن նէմուտար կէշթէն, յայտնել․ پر كرديدن փիւր կէրտիտէն, լնուլ լնանիլ․ پرورش یافتن փէրվէրիշ եաֆթէն, դաստիարակիլ․ قرار كرفتن գարար կէրիֆթէն, հաստատիլ․ بشمار آمدن պիշմար ամէտէն, համարիլ, թուիլ․ رعایت دیدن րէայէթ տիտէն, պատուիլ։

Այն և այլ բայք առ պարսս` յորս իբրև ՚ի մէջ բաղադրեալս յաւելեալ լինին մասնիկք, իբրև ՚ի զարդուց սակս․ Օր. ور վէր․ որ նշանակէ որպէս զմեր մասնիկն ներ․ Օր. ور آمدن վէր ամէտէն, և ور شدن վէր շուտէն․ ՚ի ներքս գալ, ՚ի ներքս լինել։

Պէր بر․ նշանակէ վեր․ որ է զի զնոյն նշանակութիւն յաւելու ՚ի բային․ Օր. بر آمدن պէր ամէտէն, ՚ի վեր գալ, ելանել․ և է զի ՚ի զարդուց սակս դնի․․ Օր. بر آسودن պէրասուտէն, հանգստանալ․ بر نشستن պէր նիշէսթէն, նստիլ։

Պազ باز․ յաւելուած նշանակէ` դարձեալ անդրէն, ցետ ընդ կրունկն․ և ՚ի բաղադրեալ բայս զնոյն նշանակութիւն ածէ ՚ի նոսա․ Օր. باز داشتن պազտաշթէն, ՚ի բաց քեցուլ․ باز استادن պազ իսթատէն, հանդարտել յետս կալ։

Սոյն է և սա սէր` سر آمدن սէր ամէտէն, ՚ի վերայ գալ․ سر دادن սէր տատէն, ազատել․ وا نمودن վա նէմուտէն, յայտնել․ وا پس كردن վա փէս կէրտէն և پس كردن փէս կէրտէն, հատուցանել։

Նաև բաժանմունս եղանակաց և ժամանակաց բայից` զհետ գնան պարսիկք զարաբացւոց, իսկ զթերին լնուն զանազան մասնկամբք․ զորս յառաջիկայ օրինակին գտանիցես։

ԳԼՈՒԽ Ե․

Յաղագս Եղանակի Բայի։

Եղական բային պարսից` սահմանաւոր է, և ՚ի վեր արկանեն զայն ՚ի կազմութիւնս ժամանակաց և դիմաց․ որպէս յառաջիկայդ տեսցես։

Ներկայ․

ام	էմ․ կամ կից գրելով յանուանն․	م	մ․	Եմ։
اى	էյ	ى	յ․	Ես։
است	էսթ	ست	սթ․	Է։
ایم	էյիմ	یم	յիմ․	Եմք։
اید	էյիտ	ید	յիտ․	Էք։
اند	էնտ	ند	նտ․	Են։

Զնոյն զայդ կից ընդ դերանուանս վարին այսպէս.

منم մէնէմ . Ես եմ:	مایم մաէիմ . Մեք եմք.
توی թէուէյ . Դու ես.	شمایید շիւմաէյտ . Դուք էք.
اوست օսթ, կամ اواست օէսթ . Նա է:	ایشانند իշանէնտ . Նոքա են.

Երկրորդ ներկայ սահմանական բային هستن հէսթէն, լինել:

هستم հէսթէմ . Եմ.	هستیم հէսթէյմ . Եմք.
هستی հէսթէյ . Ես.	هستید հէսթէյտ . Էք.
هست հէսթ . Է.	هستند հէսթէնտ . Են.

Անց. ժամանակք ձևանան կարգաւորաբար ՚ի բայէն بودن պուտէն, լինել.

Անցեալ Կատարեալ.

بودم պուտէմ . Էի, եղէ.	بودیم պուտէյմ . Էաք, եղաք.
بودی պուտէյ . Էիր, եղեր.	بودید պուտէյտ . Էիք, եղէք.
بود պուտ . Էր, եղև.	بودند պուտէնտ . Էին, եղեն.

Ապառնի.

بوم պիւվէմ . կամ ՚ի բայէն باشیدن պաշիտէն .	باشم պաշէմ . Եղէց.
بوی պիւվէյ	باشی պաշէյ . Եղիցիս.
بود պիւվէտ	باشد պաշէտ . Եղիցի.
بویم պիւվէյմ	باشیم պաշէյմ . Եղիցուք.
بوید պիւվէյտ	باشید պաշէյտ . Եղիջիք.
بوند պիւվէնտ	باشند պաշէնտ . Եղիցին.

Նաև ըստ այսմ օրինակի՝ դնեմք զամ ժամանակաց ձևանան զուգադրութիւն վերջադրել սահմանաւոր էական բային. բառնալով յերրորդ դէմս ապառնոյն զձայնդ است կամ ست էսթ . և փոխանակ նորա դնելով , տա՛ռ առնելով յառաջնոյն քէրհէ , թ էտ.

Հրամայական.

باش պաշ . Եղե՛ր.	باشیم պաշէյմ . Եղիցուք.
باشد պաշէտ . Եղիցի.	باشید պաշէյտ . Եղիջիք.
	باشند պաշէնտ . Եղիցին.

Աներևոյթ.

بودن պուտէն , կամ باشیدن պաշէյտէն . Լինել.

Ընդունելութիւն.

باشا պաշա . Որ կայ , գոյող.

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս Լծորդութեան.

Ի կրկին վերջաւորութեանց աներևութին կրկին ձևանան և լծորդութիւնք. առաջին որք յանգին 'ի د դեն. և երկրորդ որք յանգին 'ի ت տեն. այլ զի ոչ ինչ տարբեր է ընդ մէջ խոնարհման երկուցն, վասն այնր մի և եթ կարգեսցուք օրինակ լծորդութեան զայդ رسیدن րէսիտէն. ժամանել, հասանել.

Անցեալ.

رسيد րէսիտ. Եհաս.
رسيدى րէսիտի. հասեր.
رسيدم րէսիտէմ. հասի.
رسيدند րէսիտէնտ. հասին.
رسيديد րէսիտիտ. հասէք.
رسيديم րէսիտիմ. հասաք.

Ներկայ և Ապառնի.

رسد րէսէտ. հասանէ, հասցէ.
رسى րէսի. հասանիս, հասցես.
رسم րէսէմ. հասանեմ, հասցեմ, հասից.
رسند րէսէնտ. հասանեն, հասցեն.
رسيد րէսիտ. հասանէք, հասջիք.
رسيم րէսիմ. հասանեմք, հասցուք.

Հրամայական.

رسد րէսէտ. հասցէ.
رس րէս. հաս.
رسند րէսէնտ. հասցեն.
رسيد րէսիտ. հասէք.
رسيم րէսիմ. հասցուք.

Աներևոյթ.

رسيدن րէսիտէն. հասանել.

Ընդունելութեան ներգոյ.

رسنده րէսէնտէ.
رسان րէսան.
رسانه րէսանէ.
رسا րէսա.
رس րէս.
} հասանող.

Ընդունելութիւն անցեալ և կրաւորական.

رسيده րէսիտէ. հասեալ.

Որդ կազմի բաղադրական անցեալ ժամանակին, որ առնի فعل ماضى ֆիլի մազի յաներևութէ, 'ի բաց թողուլ ن զնուն և զոր յառաջ քան զնա գտանի, և ընդ նմ փոխանակել նմին. որ رسيدن րէսիտէն, հասանել. رسيد րէսիտ, եհաս.

է

شناختن շինախթէն, Ճանաչել․ شناخت շինախթ, ծանեաւ։ Յ՛ուրեք զի յաւելեալ լինի յանցեալն ձայնդ ب պէ, յորժամ առաջին գիր բային ֆէթհէյի, կամ քէսրէյի ականիցի․ իսկ եթէ չունի իցէ առաջին գիր բային, յայնժամ յաւելու ՚ի վր նր ب պէ, որ رسيد պիռէսիտ, եհաս․ بمرد պիմուրտ, մեռաւ։ Այս աճումն տեղի ունի յայլ ժամանակս։ Իսկ եթէ բային յորոյ ՚ի վր գայ մասնիկդ՝ պէ, կամ պի, ականիցի գրովդ ا էլիֆ, յաւելեալ լինի ՚ի նոյն ՚ի սակս քաղցրաձայնութեն ى եէ բաղաձայն․ որ بيامد պիյամէտ, եկն․ بيايد պիյայէտ, եկեսցէ․ بيا պիյա, եկ։ Ուրեք եւ ՚ի վերջ երրորդ դիմի եզակի անցելոյն յաւելուն պարսիկք և զատադ ى եէ, որ կոչի եէ պատմական․ որ رسيدى ռէսիտի եհաս․ փոխանակ գրելոյ رسيد ռէսիտ․ كردى քէրտի, آوردى աւուրտի և نمودى նումուտի․ փոխանակ գրելոյ كرد քէրտ, آورد աւուրտ, և نمود նումուտ։

Եթէ յաւելցի յանցեալ ժամանակին մասնիկդ مى մի կամ همى համի, յայնժամ ձևանայ իբրև զերի անկատարն, որ ասի առ նմա فعل ماضى استمرارى մազիի իսթիմրարի․ որ رسيد և مى رسيد միռէսիտ, և همى رسيد համիռէսիտ, հասանէր․ همى شناخت համիշինախթ, ճանաչէր։ Անկատարն ըղձականի պարտ կազմե յանցեալ ժամանակէն, յաւելլով զատադ ى եէ յամ դէմս բայ յերկրորդ եզականէն․ որ

رسيدى ռէսիտի · Թէ հասանէր։	رسيدندى ռէսիտէնտի · Թէ հասանէին։
رسيدى ռէսիտի · Թէ հասանէիր։	رسيديدى ռէսիտիտի · Թէ հասանէիք։
رسيدمى ռէսիտէմի · Թէ հասանէի։	رسيديمى ռէսիտիմի · Թէ հասանէաք։

Երկրորդ կատարեալն ձևանայ յանցել ընդունելութե, եւ և էական բայիւ, որ․

رسيده ռէսիտէ․	Եհաս։	رسيده اند ռէսիտէ էնտ․ հասին։
رسيده است ռէսիտէ էսթ․		رسيده ايد ռէսիտէ իտ․ հասիք։
رسيدهٔ ռէսիտէի․	հասեր։	رسيده ايم ռէսիտէ իմ․ հասաք։
رسيده ام ռէսիտէ էմ․	հասի։	

Իսկ եթէ յայս անցեալ ընդունելութե յաւելցի և անցեալն էական բայի, յօրինի մեր յարակատար ժամանակ․ որ رسيده بودم ռէսիտէ պուտէմ, հասեալ էի․ شناخته بودى շինախթէ պուտի, ծանուցեալ էիր։

Ներգոյական ժամանակն որ ասի ըստ պարսից فعل مضارع ֆիլի մուզարի, յինքն բովանդակէ զապառնին և զներկայն․ և կազմի ՚ի հրամայականէն, յաւելմամբ, տալ գրոյն՝ որ է նշանակ երրորդ դիմաց յառաջընթաց ունելով զՔէսրհէ․ որ ՚ի բայէն رس ռէս, հաս․ լինի رسد ռէսէտ, հասցէ, հասանէ․ ՚ի բայէն شناس շինաս, ծանիր, լինի شناسد շինասէտ, ծանիցէ, ճանաչէ։ Ապառնին կազմի յաւելմամբ մասնկանդ ب պէ կամ պի․ որ برسد պիռէսէտ, հասցէ․ بشناسى պիշինասի, ծանիցես։ Իսկ ներկայն որ անուանի առ նմա فعل حال ֆիլի հալ

մասնիկամբդ . می և همی կէկց · որպէս رسند می կը կրեկնս , հասա- նէին . همی شنیدم կեկց լսէի , լսէիր .

Ապառնին և մի այլ ապառնի յաձախեալ լոյծ · զոր անուանեն فعل مستقبل ՚ի ... որ ձևանայ զուգադրութ. բայի خواستن խնդրելն , կամիլ · ընդ եր- րորդ դէմս անցելոյ խոնարհմանն բայի · որպէս

خواهد رسید կամի ընդունել · հասցէ · خواهند رسید կամին ընդունել · հասցեն ·
خواهی رسید կամիս ընդունել · հասցես · خواهید رسید կամիք ընդունել · հասջիք ·
خواهم رسید կամիմ ընդունել · հասից · خواهیم رسید կամիմք ընդունել · հասցուք ·

Հրամայականն որ անուանի امر էմր , կազմի յանորոշութե կանոնաւոր բայ- ից , բարձեալ ՚ի նմանէ զվանգն یدن իտէն , կամ دن տէն , կամ تن թէն . որպէս رسیدن ընդունելն , հասանել · رس րէս , հաս · افشاندن էֆշանտէն , ցրուել · افشان էֆշան , ցրուեա · کشتن քէշթէն , սպանանել · کش քէշ , սպան : Իսկ զուգամ այն է զի ب պէ ՚ի վր յաւելուն և ասեն برس պէրէս · հաս , կամ հասցես : Նոյնպէս նոյնն ընդ վաղակատարին :

Արգելական ունին պարսիկք և այլ հրամայական , անուանեալ ամ նա امرداى էմրտայի , որոյ նշանակութիւն է , հրամայել զյարաջախաղացութե գործոյն սկսելոյ · և այս կրկին օրինակաւ · կամ նախադասելով զմասնիկն می մի · որպէս میکوی միքիւյ · Ասել ՚ի խօսել , մի՛ լռեր · և կամ անցեալ ընդունելութե և հրամայականաւ էակա- նաց բայի بودن պուտէն · որպէս گفته باشید գիւֆթէ պաշիտ · խօսեցարուք , մի՛ լռէք ·

Որ հրամայականին յանդիցի ՚ի ى էէ , բաղադրեալ այնպէս զի զայն ՚ի բաց թողու . որպէս յանորոշութ բայէն جویدن ճուէյտէն , խնդրել · հրամայական լինի جوی ճուէյ , և جو ճու · խնդրեա : Սանուանդ զի և համ անուանք յանգեալք ՚ի ى էէ կարեն ՚ի բաց թողուլ զայն · որպէս خدای խուտայ և خدا խուտա , աստուած · پای փայ և پا փա , ոտն · موی մուէյ և مو մու , մազ :

Աներևոյթն պարսից որ անուանի مصدر մաստար , բաղդեալ անդամ իբրև ա- նուն վարի · այլ զբայի գործողութիւն նշանակէ , յաղագս որոյ և կից իւր ընդունի զդիմորոշ դերանունս · որպէս رسیدنم ընդունելն իմ , հասանելն իմ :

Ընդունելութի ներկայ՝ կոչի առ պարսս حالیه հալիէ , կազմի ՚ի հրամայակա- նէն կրկին օրինակաւ · նախ՝ յաւելլով ՚ի նա ان ան · որպէս رو րէվ , գնա · روان րէվան , գնացող · رس րէս , հաս · رسان րէսան , հասանօղ · յոր յաւելու երբեմն և ه հէ անձայն · որպէս روانه րէվանէ , գնացող : Ձայն զի և զվերջին ن նուն ՚ի բաց թողուն · որպէս رسا րէսա , հասանօղ : Երբեմն և զհրամայականն զկնովին վարեն ՚ի շարագրու- թիս փոխանակ ընդունելութե , կամ իբրու մը գործողութե , որպէս دست رس տէսթրէս , ձեռնհաս , կարող ՚ի գործս իւր : Երկրորդ՝ կազմի ներկայ ընդունելութի որ ասի առ նա اسم فاعل իսմի ֆայիլ · այսինքն անուան գործողին , յօրինի ՚ի նմին հրամայա-

կանէ, յաւելլով զձայնդ وَنْ ետևէ. որ ՚ի հրամայականէն رس րէս. հաս. յօրինէ رسنده րէսէնտէ, հասանօղ, որ հասանէ. درو տրէվ, ճնձեա. درونده տրէվէնտէ, ճնձող:

Ընդունելութիւն անցեալ և կրաւորական, որ կոչի اسم مفعول իսմի մէֆուլ, ձևանայ յաներևութենէ, փոխելով զվերջին տառն ن նուն ՚ի ه հէ. որ յաներևութեն رسیدن րէսիտէն, հասանել. կազմի ընդունելութիւն رسیده րէսիտէ, հասեալ. Եւ այսմ օրինակի կազմին և յամենայն և կրաւորական բայից. որ افتاده ըֆթատէ, անկեալ. ՚ի բայէն افتادن ըֆթատէն, անկանել: Իսկ ՚ի ներգործական բայից յօրինեալ ընդունելութիւնքն կրկին ունին նշանակութիւն, ներգործական և կրաւորական. որ کشاده քիւշատէ, բացօղ, և բացեալ. զոր ՚ի կարգէ բանիցն պարտ է զանազանել, և կամ ըստ զուգադրութեան էական բայից. ընդ بود պուտէն, գոլ, լինել ՚ի ներգործականն. և ընդ شدن շուտէն, گشتن կէշթէն, گردیدن կէրտիտէն, լինել ՚ի կրաւորականն. որ نهاده است նիհատէ էսթ, կամ نهاده بود նիհատէ պուտ, եդ. نهاده شد նիհատէ շուտ, եդաւ. دانسته بود տանիսթէ պուտ, ծանեաւ. دانسته شد տանիսթէ շուտ, ծանուցաւ:

Նախակարգեալ զայս ամ, այժմ ըստ կարգի մերոյ քերականութեանց վերածեսցուք զբայս պարզից ըստ յառաջիկայ օրինակին:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ժամանակ Ներկայ:

می رسم	մի րէսէմ.	հասանեմ.	می رسیم	մի րէսիմ.	հասանեմք.
می رسی	մի րէսի.	հասանես.	می رسید	մի րէսիտ.	հասանէք.
می رسد	մի րէսէտ.	հասանէ:	می رسند	մի րէսէնտ.	հասանեն:

Անցեալ Անկատար:

می رسیدم	մի րէսիտէմ.	հասանէի:	می رسیدیم	մի րէսիտիմ.	հասանէաք:
می رسیدی	մի րէսիտի.	հասանէիր:	می رسیدید	մի րէսիտիտ.	հասանէիք:
می رسید	մի րէսիտ.	հասանէր:	می رسیدند	մի րէսիտէնտ.	հասանէին:

Անցեալ Կատարեալ Ա:

رسیدم	րէսիտէմ. برسیدم պիրէսիտէմ.	հասի:	رسیدیم	րէսիտիմ.	հասաք:
رسیدی	րէսիտի.	հասեր:	رسیدید	րէսիտիտ.	հասիք:
رسید	րէսիտ.	եհաս:	رسیدند	րէսիտէնտ.	հասին:

Անցեալ Կատարեալ Բ:

رسیده ام	րէսիտէ էմ.	հասի:	رسیده ایم	րէսիտէ իմ.	հասաք:
رسیده ی	րէսիտէ՛ի.	հասեր:	رسیده اید	րէսիտէ իտ.	հասիք:
رسیده	րէսիտէ, կամ رسیده است րէսիտէ էսթ.	եհաս:	رسیده اند	րէսիտէ էնտ.	հասին:

Գերբակատար·

رسیده بودم ռէսիտէ պուտէմ · հասեալ էի · رسیده بودیم ռէսիտէ պուտիմ · հասեալ էաք ·
رسیده بودی ռէսիտէ պուտի · հասեալ էիր · رسیده بودید ռէսիտէ պուտիտ · հասեալ էիք ·
رسیده بود ռէսիտէ պուտ · հասեալ էր · رسیده بودند ռէսիտէ պուտէնտ · հասեալ էին ·

Ապառնի Ա·

برسم պէրէսէմ · հասից · برسیم պէրէսիմ · հասցուք ·
برسی պէրէսի · հասցես · برسید պէրէսիտ · հասջիք ·
برسد պէրէսէտ · հասցէ · برسند պէրէսէնտ · հասցեն ·

Ապառնի Բ·

خواهم رسید խահէմ ռէսիտ · հասից · خواهیم رسید խահիմ ռէսիտ · հասցուք ·
خواهی رسید խահի ռէսիտ · հասցես · خواهید رسید խահիտ ռէսիտ · հասջիք ·
خواهد رسید խահէտ ռէսիտ · հասցէ · خواهند رسید խահէնտ ռէսիտ · հասցեն ·

Հրամայական եղանակ·

رس ռէս , կամ برس պէրէս · հաս · رسیم ռէսիմ · հասցուք ·
رسد ռէսէտ · հասցէ · رسید ռէսիտ · հասէք ·
رسند ռէսէնտ · հասցեն ·

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ·

کاش برسم կամ کاشکه քէաշքէ կամ քէաշ պէրէսէմ · Երանի թէ հասանէի · کاش برسیم քէաշ պէրէսիմ · Երանի թէ հասանէաք ·
برسی պէրէսի · Երանի թէ հասանէիր · برسید պէրէսիտ · Երանի թէ հասանէիք ·
برسد պէրէսէտ · Երանի թէ հասանէր · برسند պէրէսէնտ · Երանի թէ հասանէին ·
Այլ և այսպէս برسم ن Բա պէրէսէմ · որպէս զի հասից ·

Անկատար Ա·

کاشکه می رسیدم քէաշքէ մի ռէսիտէմ · Երանի՛ թէ հասանէի · کاشکه می رسیدیم քէաշքէ մի ռէսիտիմ · Երանի թէ հասանէաք ·
می رسیدی մի ռէսիտի · " հասանէիր · می رسیدید մի ռէսիտիտ · " հասանէիք ·
می رسید մի ռէսիտ · " հասանէր · می رسیدند մի ռէսիտէնտ · " հասանէին ·

Անկատար Բ·

رسیدمی ռէսիտէմի · հասանեալ էի · رسیدیمی ռէսիտիմի · հասանեալ էաք ·
رسیدی ռէսիտի · հասանեալ էիր · رسیدیدی ռէսիտիտի · հասանեալ էիք ·
رسیدی ռէսիտի · հասանեալ էր · رسیدندی ռէսիտէնտի · հասանեալ էին ·

Կատարեալ·

کاشکه رسیده باشم Քեաշքէ ռէսիտէ պաշեմ · Երանի՛ թէ հասեալ էի ։
کاشکه رسیده باشیم Քեաշքէ ռէսիտէ պաշիմ · Երանի՛ թէ հասեալ էաք ։

رسیده باشی ռէսիտէ պաշի · Եւն ։
رسیده باشید ռէսիտէ պաշիտ · Եւն ։
رسیده باشد ռէսիտէ պաշէ · Եւն ։
رسیده باشند ռէսիտէ պաշենտ · Եւն ։

Յարակատար ·

کاشکه رسیده می شدم Քեաշքէ ռէսիտէ մի շուտեմ · Երանի՛ թէ հասեալ իցեմ ։
کاشکه رسیده می شدیم Քեաշքէ ռէսիտէ մի շուտիմ · Երանի՛ թէ հասեալ իցեմք ։

رسیده می شدی ռէսիտէ մի շուտի ·
" հասեալ իցես ։
رسیده می شدید ռէսիտէ մի շուտիտ ·
" հասեալ իցէք ։
رسیده می شد ռէսիտէ մի շուտ ·
" հասեալ իցէ ։
رسیده می شدند ռէսիտէ մի շուտենտ ·
" հասեալ իցեն ։

Գերակատար ·

کاشکه رسیده شدمی Քեաշքէ ռէսիտէ շուտեմի · Իցէ՞ թէ հասեալ լինէի ։
رسیده شدیمی ռէսիտէ շուտիմի · Իցէ՞ թէ հասեալ լինէաք ։

رسیده شدی ռէսիտէ շուտի ·
" հասեալ լինէիր ։
رسیده شدیدی ռէսիտէ շուտիտի ·
" հասեալ լինէիք ։
رسیده شدی ռէսիտէ շուտի ·
" հասեալ լինէր ։
رسیده شدندی ռէսիտէ շուտենտի ·
" հասեալ լինէին ։

Ոմանք նշանակեն և՛ ի դնելն کاشکه رسیده بودمی Քեաշքէ ռէսիտէ պուտեմի · Իցէ՞ թէ հասեալ լինէի ։

Ապառնի ·

کاشکه برسم Քեաշքէ պէրէսեմ · Իցէ՞ թէ հասից · Եւն ·

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ·

Ներկայ ։

کر برسم Գէր պէրէսեմ ·
کر رسم Գէր ռէսեմ · } Եթէ հասցեմ ։

Անկատար Ա ։

کر رسیدمی Գէր ռէսիտեմի · Եթէ հասանէի ։

Անկատար Բ ·

کرمی رسیدم Գէր մի ռէսիտեմ ·
کر برسیدم Գէր պէրէսիտեմ · } Եթէ հասեալ լինէի ։

Անցեալ Ա ։

کر رسیده باشم Գէր ռէսիտէ պաշեմ · Եթէ հասեալ իցեմ ։

Ըղձական Բ.

کر رسیده ام կէր րէսիտէ էմ . Եթէ հասեալ եմ.

Յարակատար.

کر رسیدمی կէր րէսիտէմի . Եթէ հասեալ լինէի.

Գերակատար.

کر رسیده بودم կէր րէսիտէ պուտէմ . } Եթէ հասեալ լինէի.
کر رسیده شدم կէր րէսիտէ շուտէմ . }

Ապառնի Ա.

کر برسم կէր պէրէսէմ . Եթէ հասից.

Ապառնի Բ.

کر رسیده باشم կէր րէսիտէ պաշէմ . Եթէ հասանիցեմ.

Աներևոյթ.

رسیدن րէսիտէն . Հասանել.

Ընդունելութեան ներկայ.

رسنده րէսէնտէ . }
رسان րէսան . }
رسانه րէսանէ . } Հասանօղ.
رسا րէսա . }
رس րէս . }

Անցեալ.

رسیده րէսիտէ . Հասեալ.

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Անկանոն Բայից.

Անկանոնութիւն բայիցն պարսից բովանդակի ՚ի խառնուրդս նոցին ՚ի ժամանակս հրամայական եղանակին . և քանզի ամ ժամանակք բայից երկրորդումք յօրինին , ընդ հրամայականաւ և աներևութիւ , ամ բայ որոց հրամայականն տարբերի եղանէ քան կանոնն , կոչի անկանոն : Այլ զի բազմավանկ բայք որոց աներևոյթն է یدن իտէն , ՚ի բաց լքեալ զյանգ աներևութին իտէն , կազմին հրամայական . որ رسیدن րէսիտէն , հասանել . رس րէս . հաս : Այսպէս ընդ և մի յանգելոց բազմավանկ բայից ՚ի ادن ատէն . որ افتادن ուֆթատէն , անկանել . افت ուֆթ , անկիր . ایستادن իստատէն , կալ . ایست իստ , կաց : Իսկ այլքն ամ գրեթէ ան-

հասարակ ոչ միաբան գնան կանոնիս , այլ հրամայական նոցա կազմի այլով օրինակաւ , զորս յառաջիկայդ ասացից :

Դասակարգութիւն բայից՝ որոց արտաքոյ է հրամայականն :

آجستن աճիսթէն , Ցնկել . հրամայական اج աճ . Ցնկեա :
آراستن արաստէն , Զարդարել . յօրինել . آرای արայ :
آزمودن ազմուտէն , Փորձել . քննել . آزمای ազմայ :
آسودن ասուտէն , Հանգստանալ . آسای ասայ կամ آسا ասա :
آشفتن աշուֆթէն , آشوفتن աշուֆթէն . Աղմկել . آشوب աշուպ :
آغشتن աղէշթէն , Լիհարացուցանել , և նիհարանալ . آغیش աղիշ :
افراختن էֆրախթէն , Վերամբառնալ . افراز էֆրազ :
افروختن էֆրուխթէն , Լուսափայլել . افروز էֆրուզ :
آفریدن աֆէրիյտէն , Ստեղծանել . آفرین աֆէրիյն :
افزودن էֆզուտէն , Աւելուլ . افزای էֆզայ :
افشردن էֆշուրտէն , Ճմլել զհիւթս պտղոց . افشار էֆշար , և افشر էֆշուր :
آلودن ալուտէն , Պղծել շաղախել . آلای ալայ :
آمادن ամատէն և آمودن ամուտէն , Պատրաստել . آماز ամազ :
آمدن ամէտէն , Գալ . آی այ :
آموختن ամուխթէն , Ուսանել , ուսուցանել . آموز ամուզ :
آمیختن ամիյխթէն , Խառնել , խառնիլ . آمیز ամիյզ :
انباشتن էնպաշթէն , Լնուլ . انبار էնպար :
انداختن էնտախթէն , Ներընկեց լինել . انداز էնտազ :
اندوختن էնտուխթէն , Շահել . اندوز էնտուզ :
اندودن էնտուտէն , Ծեփել . اندای էնտայ :
انگاشتن էնկեաշթէն , Գուշակել , կարծել . انگار էնկեար :
انگیختن էնկիյխթէն , Գրգռել . انگیز էնկիյզ :
اوباشتن էվպաշթէն , Կլանել . اوبار էվպար :
آوردن ավէրտէն և ավուրտէն . Բերել , ածել . آور ավէր . آر ար :
آویختن ավիյխթէն , Կախել . آویز ավիյզ :
باختن պախթէն , Խաղալ . باز պազ :
پالودن փալուտէն , Սոսնձել . پالای փալայ :
بایستن պայիսթէն , Պատշաճել . بای պայ :
پایستن փայիսթէն , Ակնունել . پای փայ :
بخشودن պախշուտէն , Պարգևել . بخشای պախշայ և بخش պախշ :
پذیرفتن փէզիյրէֆթէն , Ընդունել . پذیر փէզիյր :
پرداختن փէրտախթէն , Յղկել . پرداز փէրտազ :

برداشتن պէրտաշթէն , Բռնուլ, բառնալ . بردار պէրտար .
بردن պուրտէն , Բերել . بر պէր .
برنشستن պէրնիշէսթէն , Հեծանել , նստել . برنشين պէրնիշէյն .
پرهيختن ֆէրհէյխթէն , Հրահանգել , ուսուցանել . پرهيز ֆէրհէյզ .
بستن պէսթէն , Կապել . بند պէնտ .
پنداشتن ֆէնտաշթէն , և ֆէնտաշթէն , Կարծել , համարել . پندار ֆէնտար .
بودن պուտէն , Լինել . յ պուլ . և ի գործածուն . باش պաշ .
بيختن պէյխթէն , Մաղել , որբել . بيز պէյզ .
پيختن ֆէյխթէն , Գերել , ևս կթուցանել . پيز ֆէյզ .
پيراستن ֆէյրասթէն , Զարդարել . پيراى ֆէյրայ .
پيوستن ֆէյվէսթէն , Ճակցիլ , ճորդիլ . پيوند ֆէյվէնտ .
تاختن թախթէն , Սապել , երագել . تاز թազ .
تافتن թաֆթէն , Ոլորել . تاب թապ .
توختن թուխթէն , Ժողովել , հաւաքել . توز թուզ .
خستن ճիւսթէն , Խնդրել . جوى ճույ .
چيدن չէյտէն , Հաւաքել . چين չէյն .
خاستن խասթէն , Յառնել . خيز խէյզ .
دادن տատէն , Տալ . ده տէհ , և տիհ .
داشتن տաշթէն , Ունել . دار տար .
دانستن տանիսթէն , Գիտել . دان տան .
دريافتن տէրեաֆթէն , Իմանալ . درياب տէրեապ .
ديدن տէյտէն , Գիտել . بين պէյն .
رستن րէսթէն , Ապրել , ազատել . ره րէհ .
رستن րուսթէն , Բուսնել . روى րույ .
رفتن րէֆթէն , Գնալ . رو րէվ .
ريختن րէյխթէն , Հեղել , լուծանել . ريز րէյզ .
زادن զատէն , Ծնանել . زاى զայ .
زدودن զիւտուտէն , Սրբել ի ժանգոյ . زداى զիտայ .
زستن և زيستن զէյսթէն , Կեալ . زى զէյ .
ساختن սախթէն , Հանդերձել , պատրաստել . ساز սազ .
سپردن սիւֆիւրտէն , Յանձն առնել . سپار սիֆար և سپر սիֆէր .
سبوختن սիւպուխթէն և սիւֆուխթէն , Խոթել . سپوز սիւֆուզ .
ستدن սիթէտէն , Պարունակել . ستان սիթան .
ستودن սիւթուտէն , Գովել . ستاى սիթայ .
سرشتن սիրիշթէն , Կուածել . سريش սիրէյշ .

سفتن սուֆթէն , Ծակել · سنب սումպ ·
سوختن սուխթէն , Կիզուլ · سوز սուզ ·
سودن սուտէն , Շօշափել · ساى սայ ·
شتافتن շիթաֆթէն , Երագել · شتاب շիթապ ·
شدن շուտէն , Լինել · شو շէվ ·
شستن շուսթէն , Լուանալ · شوى շույ ·
شكستن շիքէսթէն , Խորտակել · شكن շիքէն ·
شكفتن շիքիֆթէն , Զարմանալ · شكيب շիքիպ ·
شمردن շումուրտէն , Թուել · شمار շումար ·
شناختن շինախթէն , Ճանաչել · شناس շինաս ·
فرمودن ֆէրմուտէն , Հրամայել · فرماى ֆէրմայ ·
فروختن ֆուրուխթէն , Վաճառել · فروش ֆուրուշ ·
فريفتن ֆիրիֆթէն , Պատրել · فريب ֆիրիպ ·
فزودن ֆուզուտէն , Աճել · فزاى ֆէզայ ·
فشردن ֆուշուրտէն , Ի նեղ արկանել · فشار ֆիշար և فشر ֆիշէր ·
كادن քէատէն , Մտանել առ կին · كاى քէայ ·
كاستن քէասթէն , Նուազել · كاه քէահ ·
گداختن կիւտախթէն , Լուծանել, Հալել · گداز կիւտազ ·
گذاشتن կիւզաշթէն , Թողուլ, Լքանել · گذار կիւզար ·
گذشتن կիւզէշթէն , Անցանել · گذر կիւզէր ·
كردن քէրտէն , Առնել · كن քուն ·
گرفتن կիրիֆթէն , Առնուլ, պարունակել · گير կիր և گر կիր ·
گريختن կիրիխթէն , Փախչել · گريز կիրիզ ·
گريستن կիրիսթէն , Լալ · گرى կիրի ·
گسيختن քիւսիխթէն և گسستن քիւսիւսթէն , Խզանել, խորտակել · گسيل քիւսիլ ·
گشادن քիւշատէն , Բանալ · گشاى քիւշայ ·
كشتن քիշթէն , Սերմանել · كار քէար ·
كشفتن քիւշիւֆթէն , Յուզել · كشوف քիւշուֆ ·
گفتن կիւֆթէն , Ասել · گوى կիւյ ·
گماشتن կիւմաշթէն , Յանձնել · گمار կիւմար ·
مردن մուրտէն , Մեռանել · مير միր ·
نبشتن նիւվիշթէն , Գրել · نويس նիւվիս · և نويش նիւվիշ ·
نشاستن նիշասթէն , Հրամայել ի նստել · نشان նիշան և نشينان նիշինան ·
نشستن նիշէսթէն , Նստել · نشين նիշին ·
نگرستن և نگريستن նիկիրիսթէն , Նայել · نگر նիկէր ·

نمودن նէ-մուտէն, Յուցանել. نمای նէ-մայ.
نواختن նէ-վախթէն, Գգուել. نواز նէ-վազ.
نهفتن նէ-հէ-ֆթէն, Թագչել. نهن նէ-հուֆ.
هشتن և هيشتن հէշթէն, Թոյլ թողուլ. هيش հէշ.
يافتن եաֆթէն, Գտանել. ياب եապ.

Դիւրին է ՚ի մեր առնուլ ՚ի նախակարգելոցս թէ ամենայն զանազանին ՚ի միմեանց բայք այդորիկ ՚ի կազմածս հրամայականաց իւրեանց, զորս յաւելու ՚ի սովորութէ մարթէ ուսանել, քան եթէ որոշեալ կանոնօք.

ԳԼՈՒԽ. Ժ.

Յաղագս Հրաժարական և Արգելական Բայի.

Հրաժարական բայն կազմի՝ յաւելլով յառաջոյ զհրաժարական մասնիկն نـ նէ, կամ յաճախ և կից գրելով առաջ ن նուն. Որպէս نه رسید նէ րէսիտ, կամ نرسید նէրէսիտ, ոչ եհաս, չեհաս. نمی دانم նէմիտանէմ, չգիտեմ: Այս հրաժարական մասնիկք տեղի ունին յամենայնի և ՚ի ժամանակս, բաց ՚ի հրամայականէն. քանզի անդէն արգելական մասնիկն որ առի مه մէհէ յաւելու զմասնիկ مه մէ, կամ սովորականն և կից գրելով م միմ ՚ի բայն՝ որ առնէ նշանակութի արգելական. Որպէս مه رس մէ րէս, կամ مرس մէրէս, մի՛ հասաներ, մի՛ հասցես. مگو մէկու, մի՛ խօսիցես. مخوان մէխան, մի՛ ընթեռնուր: Իսկ եթէ բայն յոր յաւելու մասնիկդ م միմ, կամ ن նուն՝ ելիֆով սկսանիցի, ընդ մէջ երկուցն դնի ی եէ. Որպէս میا մէեա, մի՛ գար. نیامد նէեամէտ, ոչ եկն.

Հրաժարական յատուկ չիք առ պարսս, այլ բազում այն է զի զներգործականն վարեն փոխանակ կրաւորականի. Որպէս کردن կէրտէն, լինել, գործիլ: Եւ է բազում բայք հասարակ որք զերկոսին ևս նշանակեն ըստ անդուցն. Որպէս آمیختن ամիխթէն, խառնել և խառնիլ. آموختن ամուխթէն, ուսանիլ, և ուսուցանել: Պարզեալ այլով օրինակաւ, կրաւորական կազմին զուգադրութբ էական բային شدن շուտէն լինել, և նմանեաց նր. ևս և անցեալ ընդունելութբ մի և նոյն բայի. Որպէս خوانده شدن խանտէ շուտէն, ընթեռնուլ, կրաւորական նշանակութբ ընթերցեալ գոլ. پرسیده می شوم փէրսիտէ մի շէվէմ, հարցանիմ. خوانده بشود խանտէ պիշէվէտ, ընթերցեալ լիցի, կամ خوانده خواهد شد խանտէ խահէտ շուտ, ընթերցեալ լիցի.

Նաև միւս ևս օրինակ կրաւորականի առ պարսս, այն է՝ երրորդ դէմն ներգործական յոգնականի, զի ասեն گویند կէօյէնտ, որ թարգմանի՝ ասեն, և յատուկ նշանակութեամբ է՝ ասի. آورده اند ավէրտէ էնտ, բերին, բերաւ.

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս Տեսակի Անուանց.

Տեսակ անուանց կրկին է, նախագոյն և ածանցական. Նախագոյն ոչ ածանցի ուստեք. որ՝ خطا խէտա, ոճ. مرد մէրտ, այր, մարդ. اسب էսպ, ձի. Ածանցականն յայլմէ ածանցի, յորս են՝ որ ՚ի բայից ածանցին և են՝ որ յանուանց. որ

Զանուն արարողին, կամ գաւէր գործողութե, զոր յօրինեն պարսիկք ընդունելութեամբ օն՝ էնտէ. որ گوینده կիւուէնտէ, խօսօղ, երգեցիկ. سازنده սազէնտէ, երաժիշտ. յածանցեն յաւելուլն ՚ի վերայ کار ՚քեար, և گر կեր և կէր. իբր թէ գործող, արարող. որ قلمکار ղալէմքեար, փորագրիչ. کناهکار կիւնահքեար, մեղաւոր. زرگر զէրկէր, ոսկերիչ: Նաև կամ փոխանակ այդպիսի ընդունելութե դնեն այլ ընդունելութի՝ որոյ ձայնն նոյն է ընդ հրամայական յանգի, այն է گوي կիւուայ և دار տար. որ دروغگوي տիւրուղկիւուայ, ստախօս. تاجدار թաճտար, պսակաւոր.

Զանուն տեղւոյ և ժամանակի յօրինեն յաներևութէ բայէն, յոր յաւելուն և ي նէ, առ նմին և զբառդ وقت վաքթ, ժամանակ. և جاي ճայ, տեղի. որ خواندني'وقت խանտէնիէյի վաքթ, ժամանակ ընթեռնլոյ. نمودني'جاي նիւմուտէնիէյի ճայ, տեղի ցուցանելոյ: Զանուն տեղւոյ բացայայտեն դարձեալ զուգադրութ անուանս کاه կեահ, տեղի, նաև ժամանակ. զոր յաւելուն յերրորդ դէմ անցեալ ժամանակի, կամ յայլ անուն գոյական. որ نشستگاه նիշէսթկեահ. կամ نشست گاه նիշէսթկեահ. զոր առ դիւրին ևս ճշելոյ ընթեռնուն՝ նիշէսթկեահ, տեղի և ժամանակ նստելոյ.

Անուն գործողութե բացայայտի առ պարս յանգիւս ش կամ يش իշ. զոր յաւելուն ՚ի հրամայականն բայից. որ յաներևութէն ديدن տիտէն, տեսանել, լինի հրամայական بين պին տես. և ՚ի սմա յաւելեալ իշ, լինի بينش պինիշ, տեսութիւն, հանդէս: Իսկ թէ պիտոյ ինչ լինիցի ՚ի կրաւորական միտս վարել զայդպիսի անուն, յայնժամ բարգաւ այն է զի յօրինեն ՚ի կրաւորական ընդունելութէ, յաւելլով ՚ի նոյն ی իյ. որ յընդունելութէն ستوده սիթուտէ, գովեալ, լինի ستودهکی սիթուտէկիյ. կամ լաւ ևս, ՚ի բաց բարձեալ զ օ հէ առ յանգին, դնեն ستودکی սիթուտկիյ, գովեստ, գովել յայլոց: Զբայանուանս բացայայտեն ՚ի ձեռն եղակի երրորդ դիմի կատարեալ ժամանակին. որ درخواست տէրխասթ, որ է պահանջեաց, նշանակէ և պահանջումն. فريدوفروخت ֆէրիտուֆիւրուխթ, գնեաց և վաճառեաց, նշանակէ ևս վաճառաշահ: Ուրեք զի և աներևոյթն իբրև անուն վարեցեալ՝ զբայի նշանակութի ունի. որ خوردني خورد խօրտէնիէ խօրտ, կերակուր եկեր.

Թիւ գործողութեանց եղելոց բացատրեն յաւելլով յաներևոյթն բային, կամ յանուն գործողութեան զտառն ی էէ․ զոր անուանեն یای وحدت եայի վահտէթ, որ է միութե․ որպ. کردی քէրտէնիտ, միանգամ առնել, կամ մի և եթ գործողութի։ Նոյն այդ էէ այդպէս տեղի ունի յամ գոյականս․ որպ. مردی մէրտիտ, մի այր․ زنی զէնիտ, մի կին․ մինչև ոչինչ խառոց լինել ընդ այս ی էէ․ և ընդ այն զոր անուանեն یای تنکیر եայի թէնքիտը, որ է գաւառիկ, կամ անորոշ․ զի ասեն پادشاهی փատիշահիտ, խմա թագաւոր ոմն․ مردی մէրտիտ, այր ոմն․ բայց ուր յանունն յանգեալ ՚ի օ հէ անձայն, հարկ լինի յաւելուլ ی էէ միութե, յայնժամ փոխանակ տառին ی էէ, դնի ՛ հէմզէ քէսրէ․ որպ. چشمهٔ չէշմէի, աղբիւր մի։

Ածանցական անուն է որ յայլմէ անուանէ ածանցի․ և բաժանի ՚ի ստացական, ՚ի նուազական և ՚ի տեղական։

Հայրանունականն կազմեն պարսիկք յաւելլով ی էէ, յանունն գոյական, զոր անուանեն یای نسبت եայի նիսպէթ․ որպ. اصفهان իսֆահան, սպահան քաղաք․ اصفهانی իսֆահանիտ, սպահանցի․ پادشاه փատիշահ, թագաւոր․ پادشاهی փատիշահիտ, թագաւորական․ آتش ատէշ, հուր․ آتشی ատէշիտ, հրեղէն․ յորս յաւելուն բազում անգամ ن նուն, և ասեն آتشین ատէշին, հրեղէն։ Իսկ ուր պէտք լինիցին ստացականաց բացատրութիւն՝ յաւելուն յանունս զմասնիկսն مند մէնտ, ور վէր, وار վար, دار տար, سار սար, ناک նաք և کین քին․ որպ. هنرمند հիւնէրմէնտ, բազմահնար․ جانور ճանվէր, կենդանի, կենսաւոր․ امیدوار ումիտվար, յուսացօղ․ مالدار մալտար, ճոխ, ընչաւէտ․ شرمسار շէրմսար, ամօթալից․ غضبناک ղազապնաք, բարկացեալ․ غمگین ղամքին, տրտում։

Ստացականն բաղում այն է զի արաբացի օրինակաւ յարդարեն, խմա մասնկամբքս ذو զու, صاحب սահիպ, اهل էհլ, որ նշանակեն ունել, ստացօղ լեալ․ որպ. ذوی جلال զիւի ճէլալ, մեծապատիւ, մեծ պատիւ ունօղ․ صاحب عقل սահիպի ագլ, հանճարեղ․ صاحب جمال սահիպի ճէմալ, վայելչագեղ․ اهل حکمت էհլի հիքմէթ, իմաստուն․ اهل پرهیز էհլի փէրհիզ, ժուժկալ։

Անուանս արուեստագիտաց կազմեն յարադրութե մասնկից کار քեար, گر քէր կամ կէր․ կամ այլովք ընդունելութեք կազմելովք ի բայն հրամայականս․ յորոց կարգի է ساز սազ, որպ. کارساز քեարսազ, արհեստաւոր։ Այսպէս են և فروش ֆիւրուշ, վաճառող․ ուստի حلوافروش հէլվա ֆիւրուշ, քաղցրաւենեաց վաճառօղ․ بان պան, պահապան․ دربان տէրպան, դռնապան․ کشتیبان քէշթիպան, նաւապետ։

Այլ արհեստական անուանք նոյն է պարսից ընդ արաբացւոց․ որպ. صحّاف սահհաֆ, գրավաճառ․ سرّاج սէրրաճ, համետագործ․ دبّاغ տէպպաղ, խաղախորդ։

Ի նախադրեալ ածանցականաց, մանաւանդ թէ յամ ածականաց և ՚ի բաղում պարսկական և արաբական գոյականաց՝ կազմեն պարսիկք անուանս վերացելս,

յաւելլով ՚ի նոսին զտառն ی էէ, զոր անուանեն یای مصدر եայէ մաստար, զի էէ դիականի․ որ شماری շիւմարի, անթիւածութի․ خبّازی խապպազի, հացագործու-թի․ յարաբացի բառէն خبّاز խապպազ, հացագործ։

Յօրինին վերացեալքն նաև յաւելլով յանուանս յանգեալս ՚ի ه հէ անձայն, զկանկն گ կէֆ․ և ՚ի դմին յայդմ, է՛ զի պահեն զ ه հէ, և կամ ՚ի բաց թողուն․ որ گی بنده պէնտէկի, ծառայութի․ ՚ի բառէն بنده պէնտէ, ծառայ․ تشنگی թէշնէկի, ծարաւ, ծարաւութի․ ՚ի բառէն تشنه թէշնէ, ծարաւ, ծարաւեալ։ Երբեմն և լինին վերացեալք յանցեալ ժամանակաց բայից, յաւելլով ՚ի վերջն ار ար․ որ گفتار կիւֆթար, ասութի․ ՚ի ձայնէն گفت կիւֆթ, ասաց․ Նա և կամ յաւելլով ՚ի յանգս ածականաց ا էլիֆ․ որ گرما կէրմա, ջերմութի․ ՚ի բառէն گرم կէրմ, ջերմ․ Նոյնպէս և յաւելլով ای այ․ որ ՚ի բառէն فراخ ֆէրախ, լայն․ ածանցի فراخنای ֆէրախնայ, լայնութի․ تنگ թէնկ, նեղ․ լինի تنگنای թէնկնայ, նեղութի։

Կան և այլ բայք՝ որք իբրև վերացեալ անուն համարին․ այս է՝ երրորդ դէմ եզակի անցեալ ժամանակի՝ իբրև անուն վարեցեալ, և յինքն առնլով զհրամայականն այնր բայի, զուգադրութը ասաց, ... ․ որ گفت وگو կիւֆթիւ կիւ, խօսակցութի․ جست وجو ճիւսթիւ ճիւ, հետազօտութի, հարցուած։

Նա՝ ուրեք զի դիականք փոխադրին յածականս, առնլով ՚ի յանգն انه անէ, և նշանակեն զհանգամանս յօժարութեան, և վարին իբրև մակբայ․ որ پدرانه բէտէրանէ, հայրաբար․ دانایانه տանայանէ, գիտութը։

Ածականք ածականք կազմին՝ յաւելլով ՚ի դիականս آسا ասա, سا սա, وش վէշ, دیس տիս, بار պար, և وار վար․ որ عنبرآسا ամպէրասա, նման ամպարի․ شكرسا շէքէրսա, իբրև զշաքար․ غنچه وش ղօնչէվէշ, իբրև զկոկոն վարդից․ خورديس խօրտիս, իբրև զարեգակն․ مشكبار միւշկպար կամ مشك بار միւշկ պար, իբրև զմուշկ․ پركاروار բէրկարվար, որպէս զկարկին։

Իսկ ուրեք յանգ فام ֆամ յաւելցի յանուանս երանգոց, նշանակէ զմօտաւորել գունոց յերանգսն յայնոսիկ․ այսպէս է և كون կիւն․ որ سيه فام սիյէհֆամ, սևագոյն․ زمرد فام զիւմիւռրիւտ ֆամ, զմրխտագոյն․ گلفام կիւլֆամ, վարդագոյն․ لاله كون լալէ կիւն, կակաչանման․ گلگون կիւլկիւն, վարդենման։

Կան անուանք ինչ վերացեալք, կամ նախադրութիւնք կրկնեալք միջադրութը ا էլիֆ գրոյն, որք գործեն ածական վայելուչ․ որ ՚ի բառէն بر պէր, վեր․ լինի برابر պէրապէր, ՚ի միասին․ لب լէպ, շուրթն․ لبالب լէպալէպ, թաթաղուն․ كون կիւն, եղանակ, գոյն․ لینի كوناكون կիւնակիւն, բազմագոյն, բազմակերպ։

Նուաղական ածանցականք կազմին յաւելլով զտառն ك քէֆ, առնելով յառաջնումն զ... ․ որ پسر փիւսէր, որդի․ լինի پسرك փիւսէրէք, որդեակ․ پدر փէտէր, հայր․ پدرك փէտէրէք, հայրիկ․ Եթէ այդ ك քէֆ յաւելցի յա-

նուն ինչ յանգեալ 'ի ه հէ անձայն, այն հէ փոխադրի 'ի ی էէ՝ կէրըհէյէն հանգերձ. որպէս خواجه խօճա, վարժապետ. خواجگان խօճաէկեան, վարժապետնիկ. بنده բէնտէ, ծառայ. بندگان բէնտէկեան, ծառայիկ. Իսկ որք զյանգեալն 'ի ه հէ փոխադրեն 'ի ك քեաֆ, յոր յաւելուն միւս ևս քեաֆ նուազական. որպէս بندكك բէնտէքէք, հեզ ծառայ. بندككان բանտէքէքեան, խմաստակ. Նուազականն յիրս անկենդանս լինի յաւելուածովս چه չէ, կամ چه չէ. որպէս هندوچه հինտուչէ, փոքրիկ ձմերուկ. مورچه մուրչէ, փոքրիկ մրջիւն.

Տեղական անուն կրկին է. հաւաքական և միաւոր. հաւաքականն նշանակէ զտեղին ուր բազում ատեակք իրաց գոն. և լինի այդ յաւելլով ستان սթան, زار զար, կամ سار սար. որպէս گلستان կիւլիսթան, վարդենոց. علفزار ալէֆզար, խոտաւէտ տեղի. كشتزار քէշթզար, մարգագետին. كوهسار քէօհսար, լեռնային վայր. Այլ ևս ուրեք և 'ի գործ ածի لاخ լախ. որպէս سنگلاخ սէնկլախ, քարուտ վայր. որպէս سنگستان սէնկիսթան. Իսկ ուրեք զի ستان սթան նշանակէ գաւառ բնակութեան. զորօրինակ է մեր մանրիկն Աստան. ارمنستان էրմէնիսթան, հայաստան. عربستان արէպիսթան, هندستان հինտիսթան. եւ. Միաւորն ցուցանէ զտեղին, կամ զանօթն, կամ զգործին, յորում դնի և պահպանի ինչ. և այդ լինի յաւելմամբ ձայնիդ دان տան. որպէս جامهدان ճամէտան, սապատ զգեստուց. قلمدان գալէմտան, կամ خامهدان խամէտան, կաղամար. Իսկ ևս چراگاه չէրակէահ, արօտ. چراغجا չիրաղճա, աշտանակ. خوابجا խապճա, քնոյ տեղի, անկողին.

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս Ձևոց Անուանց.

Անուանք ըստ ձևոյն կրկին են պարզ և բարդեալ. Իսկ պարզս բազում են բարդեալ անուանք ոչ և առ միզս. զորս անցեալս յառաջիկայդ քառեակ օրինակօք.

Ա. ԿՐԿԻՆ ԳՈՅԱԿԱՆ.

آهوچشم ահու չէշմ . . . Եղջերուական, խմն քաղցրահայեաց.
پری روی փէրի րույ . . . Հրեշտակադէմ.
پری پیکر փէրի փէյքէր . . Հրեշտակատեսք.
پری رخسار փէրի րուխսար . Որոյ այտք նման են հրեշտակի.
جمشید کلاه ճէմշիտ քիւլահ . Պսակ Ջեմշիտի.
دارا حشمت տարա խաշմէթ . Ծառայ դարեհի.
زهره جبين զուհրէ ճէպին . Որոյ փայլուն է ճակատն իբրև զարուսեակ.
سيمين ساق սիմին սագ . . . Արծաթասրունք.

طوطی گفتار թութի գուֆթար . Թութակաձայն ։
غنچه لب ղօնչէ լէպ . . Վարդնաշուրթն ։
سمن بوی սէմէն պօյ . . Յասմիկահոտ ։
سمن بر սէմէն պէր . . . Յասմիկալանջք . (սպիտակալանջք) ։
سرو قد սէրվ գատտ . . . Նոճահասակ . (բարձրահասակ) ։
گلرخ գիւլրուխ . . . Վարդնայտ ։
گلروی գիւլրօյ . . . Վարդնադէմ ։
مارتن մարթէն . . . . Օձանման ։
مشکبوی միւշքպօյ . . . Մշկահոտ ։
شکرلب շէքէր լէպ . . . Քաղցրաշուրթն ։
یاقوت لب եագութ լէպ . . Յակնթաշուրթն ։
شیردل շիր տիլ . . . Առիւծասիրտ ։

Բ. ԱԾԱԿԱՆ՝ ՆԱԽԱԴԱՍ ԳՈՅԱԿԱՆԻ.

خوب روی խուպ րօյ . . . Գեղեցկադէմ ։
تشنه دل թէշնէ տիլ . . . Տենչացող ։
پاکیزه خوی փաքիզէ խօյ . Բարեմայն ։
خوشخوی խօշխօյ . . . . Քաջակիրթ ։
پاکدامن փաքտամէն . . . Անարատ, ողջախոհ ։
خوب آواز խուպ ավազ . . Քաղցրաձայն ։
خوب رایحه խուպ րայիհա . . . Հոտաւէտ, քաղցրահոտ ։
خوش الحان խօշ էլհան . . . Քաղցրաձայն ։
خوش رفتار խօշ րէֆթար . . Սիգաճեմ ։
شیرینکار շիրինքեար . . . Սիրելի, գեղեցիկ ։
شیرین دهن շիրին տէհէն . Գեղեցկաբերան ։
سیاه چشم սիյահ չէշմ . . . Սեւաչեայ ։
نیک فعال նիյք ֆիյալ . . . Բարեգործ ։

Գ. ԱՆՈՒՆ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ.

گل افشان գիւլ էֆշան . . . Վարդացան ։
درّافشان տիւրր էֆշան . . Մարգարտացան ։
گوهرافشان գէվհէր էֆշան . Գոհարափիւռ ։
تیغ افشان թիյղ էֆշան . . . Սուսերաձիգ ։
خون افشان խուն էֆշան . . Արիւնահեղ ։
دل آزار տիլ ազար . . . Պակուցիչ, սրտաբեկ ։
جان آزار ճան ազար . . . Ոգեսպառ ։

تاب افکن	թապ էֆքէն . .	Լոյսաշունչ .
پیچ افکن	փիչի էֆքէն . .	Որմնատակաւոր .
سنک افکن	սէնկ էֆքէն . .	Քարաձիգ .
کوه افکن	քէօհ էֆքէն . .	Քակիչ լերանց .
مرد افکن	մէրտ էֆքէն . .	Մարդածախ .
عنبر آکین	անպէր ագէյին . .	Ամպերալից .
سرور آکین	սուրուր ագէյին .	Խնդամիտ .
مراد آور	մուրատ ավէր .	Կատարող փափագանաց , ըղձակատար .
دل آور	տիլ ավէր . . .	Յափշտակող սրտի , սրտառուչ .
جهان آرا	ճիհան արա .	} Բերկրեցուցիչ աշխարհի , տիեզերազարդ .
عالم آرا	ալէմ արա .	}
مجلس آرا	մէճլիս արա . .	Զարդ ակմբի .
دل آرا	տիլ արա . . .	Սրտազուարճ .
دل آرام	տիլ արամ . . .	Անդորրաւէտ , անդորրացուցիչ սրտի .
نبرد آزما	նէպէրտ ազմա .	Մարտ 'ի կռիւս .
روح آسا	րուհ ասա .	} Հանգստարարիչ հոգւոյ , հոգեխաղաղ .
جان آسا	ճան ասա .	}
کار آزموده	քեար ազմուտէ .	Փորձավարժ .
خون آلود	խուն ալուտ . .	Արիւնաթաթաւ .
غبار آلود	ղուպար ալուտ .	Փոշելից .
خطا آلود	խաթա ալուտ . .	Մեղսալից .
روح افزا	րուհ էֆզա . .	Անդորրիչ սրտի .
بهجت افزا	պէհճէթ էֆզա .	Ուրախարար , պատճառ զուարթութեան .
شهر آشوب	շէհիր աշուպ . .	Ամբոխիչ քաղաքի .
روز افزون	րուզ էֆզուն . .	Մեծացուցիչ աւուր , շքեղ .
سرافراز	սէր էֆրազ . .	Բարձրացուցիչ գլխոյ , մեծ , փառաւոր .
گردن افراز	կէրտէն էֆրազ .	Բարձրացուցիչ պարանոցի .
عالم افروز	ալէմ էֆրուզ .	} Լուսաւորիչ աշխարհի .
جهان افروز	ճիհան էֆրուզ .	}
کیتی افروز	կէյթի էֆրուզ .	}
معرکه افروز	մահրէքէ էֆրուզ .	Նահատակ մարտի .
بوستان افروز	պօսթան էֆրուզ .	Դրախտակեզ .
جهان آفرین	ճիհան աֆէրին .	Արարչագործ , աշխարհաստեղծ .
دانش آموز	տանիշ ամուզ . .	Հմուտ , տեղեակ գիտութեանց .
کار آموز	քեար ամուզ . .	Հմուտ վճռականութեան .

مژده آمیز	մուժտէ ամիզ . .	Ուրախարար, աւետաբեր :
ستم آمیز	սիթէմ ամիզ . .	Սպառնացող :
نیاز آمیز	նիյազ ամիզ . .	Աղաչաւոր :
حکمت آمیز	հիքմէթ ամիզ . .	Հրաշալի, խորախորհուրդ :
راحت آمیز	րահէթ ամիզ . .	Անդորրաւէտ :
شهد آمیز	շէհտ ամիզ . .	Լցեալ մեղու :
رنک آمیز	րէնք ամիզ . . .	Երփներանգ, խաբեբայ :
پرتو انداز	փէրթէվ էնտազ .	Ճառագայթարձակ :
وهشت انداز	վէհշէթ էնտազ .	Ահարկու, ահընկեց :
آتش انداز	աթէշ էնտազ . .	Հրաբորբոք, հրացայտ :
تیر انداز	թիր էնտազ . .	Աղեղնաւոր, նետընկեց :
ظلمت اندوز	զուլմէթ էնտուզ .	Մթին, խաւարազգաց . (մակաբերական գիշերոյ) :
عبرت اندوز	իպրէթ էնտուզ .	Օրինացուցիչ :
التفات انکیز	իլթիֆաթ էնկիզ .	Պատկառեցուցիչ :
خلوص انکیز	խուլուս էնկիզ .	Պարզասիրտ :
فتنه انکیز	ֆիթնէ էնկիզ .	Խռովարար :
خجلت انکیز	խաճլէթ էնկիզ .	Ամաչեցուցիչ :
خفقان انکیز	խաֆագան էնկիզ .	Դրդիչ սրտի :
ارشاد انکیز	իրշատ էնկիզ . .	Փրկարար :
مردم اوبار	մէրտում էվպար .	Մարդածախ :
جان آفرین	ճան աֆէրին . .	Ստեղծիչ հոգւոյ :
دل بر	տիլպէր	Գրաւեցիկ, յափշտակիչ սրտի :
سایه پرور	սայէ փէրվէր .	Ի հովանւոջ սնեալ, փափուկ :
علما پرور	ուլէմա փէրվէր .	Ջեռնմոււ վարդապետաց :
تن پرور	թէն փէրվէր .	Յղփացուցիչ մարմնոյ, մարմնասէր :
عشق باز	իշգպազ	Սիրով խաղացող, առփացող :
پوزش پذیر	փուզիշ փէզիր .	Ներողորով գթած :
ترانه پرداز	թէրանէ փէրտազ .	Երգահանիչ, քաղցրերգակ :
سخن پرداز	սուխէն փէրտազ .	Բանապաճոյճ :
نقل بند	նագլ պէնտ . .	Պատմաբան :
حیله بند	հիլէ պէնտ . .	Նենգաւոր :
عدو بند	ատու պէնտ . .	Գլխահար թշնամեաց, յաղթող :
عطر بیز	ըթր պիզ . .	Հոտաւէտ :
نادره پیرا	նատիրէ փիրա .	Յիշատակաց պատմագիր :
آسمان پیوند	ասուման փէյվէնտ .	Հասեալ մինչև յերկինս :



عالمتاب	ալէմթապ	Լուսաւորիչ ծի, (մակադրական արեւու).
دولتجوی	տէվլէթճույ . . .	Բարօրութեան ցանկացող.
گل چین	կիւլ չին	Վարդահաւաք.
شکوفه چین	շիւքիւֆէ չին .	Ծաղկահաւաք.
سخن چین	սիւխէն չին . . .	Բանաքաղ.
خیرخواه	խայր խահ	Բարեսէր.
دولتخواه	տէվլէթ խահ . .	Բարօրութեան ցանկացող.
سحرخیز	սահէր խէյզ	Կանխող ընդ առաւօտս, վաղայարոյց.
خوشخوان	խօշ խան	Քաղցրերգակ.
جهاندار	ճիհանտար	Աշխարհակալ, Թագաւոր.
نکته دان	նիւքթէ տան . . .	Նրբիմաց.
جهان دیده	ճիհան տիտէ . . .	Աշխարհատես, փորձ.
امور دیده	էմուր տիտէ . . .	Այր գործոյ.
خرده بین	խուրտէ պին . . .	Մանրադննին.
سخن ران	սիւխէն րան . . .	Բանավար.
کامران	քեամրան, քեամիւրան.	Կամօգուտ, երջանիկ.
خون ریز	խուն րէյզ	Արիւնահեղ.
شکرریز	շէքէր րէյզ	Սանիչ շաքարի.
اشک ریز	էշք րէյզ	Արտասուող.
غمزدا	ղամզիտա	Բարձող աղէտից.
ظلمت زدا	զուլմէթ զիտա . .	Սանիչ խաւարի.
رهزن	րէհզէն	Ուղկահար.
سحرساز	սէհէր սազ . . .	Դիւթիչ, հմայող.
دلسوز	տիլսուզ	Սրտակեզ.
جان شکار	ճան շիքեար . .	Որսացող սրտի.
عمرشکاف	ումր շիքեաֆ . .	Մահ, կենախույզ.
صف شکن	սաֆ շիքէն . .	Քակիչ կարգի, ճակատու, պատականիչ.
انجم شمار	էնճիւմ շիւմար . .	Ըստ թուոյ աստեղաց.
کارشناس	քեար շինաս . .	Փորձ, հմուտ.
شکر فروش	շէքէր ֆիւրուշ .	Շաքարավաճառ.
ناظر فریب	նազըր ֆիրիպ .	Որ պատրէ զտեսողն, աչնախաբ.
جگر گداز	ճիկէր կիւտազ . .	Սրտահալ.
صما گداز	սիւմմա կիւտազ . .	Բարձող աղէտից.
ضیا گستر	զիյա քիւսթէր . .	Լուսափիւռ.
عالم گیر	ալէմ կիր . . .	Աշխարհակալ.

دلکشا տիլ քիւշա . . . Ուրախարար սրտի.
کشورکشا քիշվէր քիւշա . . Յաղթական, յափշտակող գաւառաց.
اورنگ نشین էվրէնկ նիշէյն . Գահակալ, Թագաւոր.
ویرانه نشین վիյրանէ նիշէյն . Բնակող յաւերակս.
رهنما րէհնիւմա . . . Ուղեցոյց.
غریب نواز ղարիպ նիւվազ . . Հիւրընկալ.
بربط نواز պէրպէթ նիւվազ . Քնարահար.

Դ. ՄԱՍՆԻԿ ԵՒ ԱՆՈՒՆ.

هماشیان հէմաշիյան . . . Ընկեր բունոյ, կենակից.
هماهنگ հէմահէնք . . . . Զուգաձայն.
همبزم հէմպէզմ . . . . Տնակից, յարկակից.
همبستر հէմպիստէր . . . Անկողնակից.
همدم հէմտէմ . . . . . Համշունչ, ընկեր.
همراه հէմրահ . . . . Ուղեկից.
همسایه հէմսայէ . . . . Որ ընդ նմին հովանեաւ վայելէ, մերձաւոր.
همخانه հէմխանէ . . . . Տնակից, ընակից.
ناامید նա ումիտ . . . . Յուսահատ, անյոյս.
نابینا նա պինա . . . . Կոյր.
نامعلوم նա մա՛լում . . . Անծանօթ.
کمبها քէմպէհա . . . . Անպիտան.
کمخرد քէմ խիրէտ . . . Սակաւագետ, տգետ.
بی ایمان պի իման . . . Անկրօն.
بی تأمل պի թէէ՛մմիւլ . . Անխորհուրդ.
گمراه կիւմրահ . . . . Ապաուղի.

ԳԼՈՒԽ. ԺԳ.

Յաղագս Թուականաց.

Բացարձակ Թուականքն են առաջինկայքդ.

١ یک եէք . . . . Մի.
٢ دو տիւ . . . . Երկու.
٣ سه սէ կամ սէ . . . Երեք.
٤ چهار չէհար և چار չար . Չորս.
٥ پنج փէնճ . . . . . . Հինգ.

	شش	շէշ	Վեց.
	هفت	հէֆթ	Եւթն.
	هشت	հէշթ	Ութ.
۹	نه	նիւհ	Ինն.
۱۰	ده	տէհ	Տասն.
۱۱	یازده	եազտէհ կամ یازده եանզտէհ .	Մետասան.
۱۲	دوازده	տիւվազտէհ . . .	Երկոտասան.
۱۳	سیزده	սիզտէհ	Երեքտասան.
۱٤	چهارده	չէհարտէհ . . .	Չորեքտասան.
۱٥	پانزده	փանզտէհ . . .	Հնգետասան.
۱٦	شانزده	շանզտէհ . . .	Վեշտասան.
۱۷	هفده	հէֆտէհ	Եւթնեւտասան.
۱۸	هشده	հէշտէհ և هژده հէժտէհ .	Ութեւտասան.
۱۹	نوزده	նիւզտէհ, և նիւվզտէհ .	Իննեւտասան.
۲۰	بیست	պիյսթ	Քսան.
۲۱	بیست یک	պիյսթ եէք . . .	Քսան և մի.
۲۲	بیست و دو	պիյսթիւ տիւ . .	Քսան և երկու.
۳۰	سی	սիյ	Երեսուն.
٤۰	چهل	չէհէլ	Քառասուն.
٥۰	پنجاه	փէնճահ	Յիսուն.
٦۰	شست	շէշթ և شصد շասթ .	Վաթսուն.
۷۰	هفتاد	հէֆթատ	Եօթանասուն.
۸۰	هشتاد	հէշթատ	Ութսուն.
۹۰	نود	նիւվէտ	Իննսուն.
۱۰۰	صد	սատ	Հարիւր.
۲۰۰	دوصد	տիւսատ և دویست տիւվիյսթ .	Երկերիւր.
۳۰۰	سیصد	սիյսատ	Երեքհարիւր.
٤۰۰	چهارصد	չէհար սատ . . .	Չորեքհարիւր.
٥۰۰	پانصد	փանսատ	Հինգհարիւր.
۱۰۰۰	هزار	հէզար	Հազար.
۱۰۰۰۰	ده هزار	տէհ հէզար . . .	Տասն հազար, բիւր.
۱۰۰۰۰۰	صد هزار	սատ հէզար կամ لک լէք .	Հարիւր հազար.

Օրինակի է, զի առ պարսս մէջ նախադասի մեծագոյն թիւն քան զփոքրն, բերել զմեծս, եղեալ բաղհիւսական շաղկապով, կամ առանց այնր. զոր զթիւդ 1826 ընթեռնու պարսիկն هزار هشتصد بیست و شش հէզարի հէշթսատի պիյսթիւ
շ

շէշ։ Գիտել արժան է և զայս․ զի Թուականն անուանք պարսից ոչ հոլովին․ այլ նախադասաբն անուանցն Թուելոց, որք բազում անգամ գնին յեզականն․ զոր دوطرف տիւ թարէֆ, երկու կողմն․ միայն ունին զյոգնականն هزاران հէզարան․ հազարք։

Դասականք յանգեալք ՚ի ը մ, նախադաս ունելով զ ըւմն։

یکم	եէքիւմ կամ եէքէմ نخستين նիւխիւսթին․	Առաջին։
دوم	տիւվիւմ . . .	Երկրորդ։
سوم	սիւվիւմ	Երրորդ։
چهارم	չէհարիւմ . . .	Չորրորդ։
پنجم	փէնճիւմ	Հինգերորդ։
ششم	շէշիւմ	Վեցերորդ։
هفتم	հէֆթիւմ . . .	Եօթներորդ։
هشتم	հէշթիւմ . . .	Ութերորդ։
نهم	նիւհիւմ . . .	Իններորդ։
دهم	տէհիւմ . . .	Տասներորդ։
بيستم	պիսթիւմ . .	Քսաներորդ։
بيست ويكم	պիսթիւ եէքիւմ կամ եէքէմ․	Քսաներորդ առաջներորդ։
سيم	սիյիւմ	Երեսներորդ։
شصتم	շասթիւմ . . .	Վաթսներորդ։
صدم	սատիւմ . . .	Հարիւրերորդ։
صد ويكم	սատիւ եէքէմ․	Հարիւրերորդ առաջներորդ։
دويستم	տիւվիսթիւմ․	Երկերիւրորդ։
سه صدم	սիսատիւմ . .	Երեքհարիւրորդ։
هزارم	հէզարիւմ . .	Հազարերորդ։
دو هزارم	տիւ հէզարիւմ․	Երկուհազարերորդ։

Նոյնպէս խառն և վասն այլոց։

Յաւելուած երբեմն ՚ի Թուականսն ی եէ․ զոր دويى տիւէոմի, երկրորդ․ سيومى սիւէոմի, երրորդ․ և երբեմն ين էյն․ զոր چهارمين չէհարիւմէյն․ پنجمين փէնճիւմէյն, ևն։

Սմակբայս Թուականս յօրինեն պարսիկք կամ յոգնականաւ բացարձակ Թուականաց, զոր և կրկնեն․ զոր يكان եէքեան և يكان يكان եէքեան եէքեան, խուռն բաժանչաբար․ چهاران چهاران չէհարան չէհարան, չորեքին․ և կամ զեզականն կրկնելով․ զոր يك يك եէք եէք․ և բազում անգամ ընդ մէջ արկանեն զաւագ ا էլիֆ․ զոր يكايك եէքեայեք, խուռն բաժանչաբար։ Նոյնպէս ընդ մէջ արկանեն և ، պաս․

[illegible] دوم, տիւ-ըւում, երկրորդ, կրկին. և կամ յաւելուն ی էէ. որ دوی [illegible], երկրորդ.

Այլ Թուականս համարին և բառքս یک էէք, یکتا էէքթա, ساده սատէ, جرید ճէրիտէ, պարզ. دو տիւ-ըա, կրկին. سه սէ-ըա, երեքկին. دوچندان տիւ չէնտան, կրկին. سه چندان սէ չէնտան, եռապատիկ. یک بار էէք պար, یکی էէկիյ, միանգամ. دو بار տիւ պար, երկիցս. سه بار սէ պար, երիցս. بسیار بار պիսեար պար, բազմիցս, բազում անգամ.

Ի՛ գործել առ պարս կողմութիւն Թուականաց՝ նախադասելով պարզագէս գոյական անուանց զԹուականն. որ سه سر սէ սէր, երեք գլխի. چهارپا չէհար պա, չորքոտանի. پنج ضلع փէնճ ֆէհլը, հնգակողմեան. Այլ և գոյականք՝ որոց յարեալ 'ի Թուական անուանս բացարձակս՝ լինին ածական, ունելով 'ի յանգին զասուն ه հէ, և յառաջ քան զայն ձէրհէ. որ شش سال շէշ սալ, վեց ամք. شش ساله կամ شش ساله շէշ սալէ, վեցամեայ. یک تن էէք թէն, մի մարմին. یک تنه էէք թէնէ, միամարմին, միակ. Ի վերայ այսր ամի՝ վերացեալս կոչեն զնոսին՝ յաւելլով 'ի վերջ զվանկդ کی կիյ, որ شش سالکی շէշ սալէկիյ, վեցից ամաց. چهل سالکی չէհէլ սալէկիյ, քառասնամեայ հասակ. Դարձեալ և այս. یک روز درمیان էէք րուզ տէր միան, յիւրաքանչիւր վաղուեան աւուրն, յերկրորդ աւուրն.

ԳԼՈՒԽ · ԺԴ ·

Յաղագս Մակբայից և Նախադրութեանց.

Փոխանակ որակական մակբայից 'ի վար արկանեն պարսիկք զսոսկ ածականս. որ خوب խուպ, գեղեցիկ, գեղեցկապէս. خوش խօշ, բարի, բարւոք. بد պէտ, չար, չարապէս. راست րասթ, ուղիղ, ուղղութեամբ. Կազմեն երբեմն և յաւելուածով մասնկանս انه անէ. որ دوست տօսթ, բարեկամ. دوستانه տօսթանէ, բարեկամաբար. پدرانه փէտէրանէ, հայրաբար.

Քանակութեան մակբայք նոյն են ընդ նոյնանշան անուանս. որ بسیار պիսեար, բազում. اندک էնտէք, սակաւ.

Տեղական մակբայք են.

اینجا ինճա · Աստ.
آنجا անճա · Անդ.
کجا քիւճա · Ո՞ւր.
آنجاکه անճաքէ · Ուր.
هیچ جا հիչճա · Ոչ ուրեք.

هیچ جانه հիչ ճանէ . . . Ոչ ուրեք.
آنجا اینجا անճա ինճա . . Աստ և անդ.
هرجا հէրճա . . . . } Ընդ ամ կողմն.
هرسوی հէր սուէյ . . } Ընդ ամ կողմն.
هرکجا հէր քիւճա . . . Ուր և իցէ.

بالا պալա . . . . . Ի վեր ։
زیر զիր . . . } Ի վայր ։
فرو ֆէրու . . . }
زیروبالا զիրու պալա . Ի վեր և 'ի վայր ։
درون տէրուն . . . Ներքոյ ։
بیرون պիրուն . . . Արտաքոյ ։
پیش փիշ . . . . Առաջի ։
پس փէս . . . . . Յետոյ ։
در پیش տէր փիշ . . Յառաջագոյն ։
در پس տէր փէս . . Յետոյ ուրեմն ։
نزدیک նէզտիք . . Մերձ ։
دور տուր . . . . Հեռի ։
چپ وراست չէփու րասթ . Յաջմէ յահեկէ ։
بکجا պէքիւճա . . Յո՞ր կողմն ։
باینجا պէինճա . . Այսր ։
بآنجا պէանճա } Անդր ։
بدانجا պէտանճա }
ازکجا էզքիւճա . . Ուստի ։
ازاینجا էզինճա . . Աստի ։
ازآنجا էզանճա . . Անտի ։
ازبالا էզ պալա . . . Ի վերուստ ։

Ժամանակական մակբայք են .

كی քէյ . . . . . . Յորժամ ։
حالیا հալիյա . . . }
اکنون էքնուն . . . } Այժմ ։
کنون քէնուն . . . }
هنوز հէնուզ . . . . Առդ իսկ ։
هماندم հէմանտէմ . . . Վաղվաղակի ։
پارسال փարսալ . . . . Յանցեալ ամի
پیرارسال փիրարսալ . . . Երկամօք յառաջ ։
دی տիյ և دی روز տիյրուզ . Յերեկն ։
پرندوش փէրէնտուշ . } Յեռանդն ։
پریر փէրիր . . . }
دوش տուշ . . . . . Ընդ երեկս ։
امروز էմրուզ . . . . Այսօր ։
امشب էմշէպ . . . Յայսմ գիշերի ։
بامداد պամտատ . Վաղիւ ընդ առաւօտն
شام շամ . . . . Յերեկոյն ։
فردا ֆէրտա . . Վաղիւ ։
هرروز հէր րուզ . . Հանապազորդ ։
روزبروز րուզ պէրուզ . Օր յօրէ ։
سال بسال սալ պէսալ . Ամ ըստ ամէ ։
هموار հէմվար . . Հանապազ ։
شب وروز շէպուրուզ . . Զտիւ և զգիշեր
هماندم հէմանտէմ . . Նոյն ժամայն ։
دیر տիր . . . Անագան ։
تا թա . . . . . Մինչև ։
بعدازآن պա՛տ էզան . Յետ այնորիկ ։

Հարցական մակբայք .

چرا չէրա . . . . . Ընդէ՞ր ։
چه سبب չէ՛ սէպէպ . . Ի՞ր պատճառաւ ։
چون չուն . . . Որպէս ։
چند չէնտ , چندان չէնտան . Որչափ ։

Ստորադասական և Բացասական մակբայք ։

بل պէլ . . . . }
بلی պէլէյ . . . } Այո , այդպէս է ։
آری արէյ . . . . }
بی گمان պիյ կիւման . . Անտարակոյս ։
بدرستی պէտիւրիւսթիյ . Յիրաւի ։
بسروچشم պէսէրու չէշմ . Մտադիւր ։
نه նէ . . . . . . Ոչ ։
هیچگونه نه հիչկիւունէ նէ . Ոչ իւիք , բնաւ ոչ ։

Ցուցական մակբայք .

اینک ինէք , և آری արէյ . Ահա ։

Թուական մակբայք ։

باری պարի . . . . } Միանգամ ։
یک بار էքպար . . . . }
دو بار տուպար . . . . Երկիցս ։
چند بار չէնտ պար . . . Քանիցս ։
چندان بار չէնտան պար . . Յաճ նուագի ։
بسیار بار պիսեար պար . . Բազում անգամ ։

بارها պարհա . . Երբեմն ։
قلیل بار գալիլպար . Սուր ուրեմն ։
باز պազ . . } Դարձեալ,
هم հէմ . . } կրկին անգամ ։
نیز նիզ . . }

Բաղձական մակբայք ։

کاش քեաշ, کاشکی քեաշքի, և کاش քեաշա . Երանի՜ թէ ։

Արգելական մակբայք ։

مباد մէպատ . . . . } Մի՛, քաւ լիցի ։
مبادا մէպատա . . . }

زنهار զինհար . Զգոյշ լեր ։

Երկբայական մակբայք ։

شاید շայէտ . . . . }
شاید که շայէտ քի . . . } Գուցէ, Թերևս ։
مگر մէկէր . . . . }
یا եա . . . . Կամ, արդեօք ։

Նմանական մակբայք ։

چو չու, چون չուն . Իբր, որպէս, որովհետև ։
همچون հէմչուն . . . } Իբրու, իբրև, որպէս ։
چنانچه չէնանչէ . . }
چنانکه չէնանքի . . . } Զորօրինակ ։
همچنانکه հէմչէնանքի . }
اینچنین էյնչէնին . . }
همچنین հէմչէնին . . } Նոյնպէս ։
همچنان հէմչէնան . . }
آن طور ան թաւր . . . . Նոյնու օրինակաւ ։
آنچنان անչէնան . . . . Նոյնպէս ։

Հաւաքական մակբայք ։

باهم պահէմ, և بهم պէհէմ . Միանգամայն, միահաղոյն ։

Զատական մակբայք ։

تنها թէնհա . . . . }
بتنها պէթէնհա . . } Միայն, առանձին ։
همین հէմին . . . . }
جداگانه ջուտագեանէ . . Առանձին, զատաբար ։

Ձա

Նախադրութիւնք պարսից յարին յուղղական անուանս և 'ի դերանուանս և 'ի զանազան հոլովս ձևացուցանեն զնոսա, ըստ յետագայ օրինակացդ.

از էզ կամ ز զ, նախադրութիւն է բացառական հոլովոյ. որ ازآن էզ ան-ծա, 'ի անդուստ անտի. ازهمه էզ հէմէ, 'ի սոցանէ ամենեցուն, կամ քան զամենեսեան զսոսա.

با բա, նախադրութիւն է գործիական հոլովոյ. որ با تو բա թու, ընդ քեզ. با او رفتم բա ու ռէֆթիմ, գնացի ընդ նմա.

به պէ, զատաբար կամ ب պ կից գրեալ, նշանակէ՝ 'ի, յ, ց, առ. իբրև նախդիր տրական հոլովոյ. որ بحصار رفتم պէհիսար ռէֆթիմ, գնացի 'ի պարիսպն. بدان کفت պէտան կէֆթ, առէ ցնա. Այլ և ևս իբրու նախդիր ներգոյական հոլովոյ՝ նշանակելով զտեղի և զժամանակ. որ بشهر است պէշէհր էսթ, 'ի քաղաքի է. بوقت خاموشی کفتن կէֆթէն պէվագթի խամուշի, խօսել 'ի լռութեան ժամանակի.

بر պէր և ابر էպէր, 'ի, վեր, ըստ. այս նախադրութիւն կազմէ ըստ իւրաքանչիւր բայից զանազան հոլովս. որ برمن պէր մէն, 'ի վերայ իմ. برمنوال مشروح պէր մինվալի մէշրուհ, ըստ վերոգրեալ օրինակի. برسيد պէր ռէսիտ, 'ի վերայ եհաս, խելամուտ եղև. برموجب فرمان شاهى պէր մուճիպի ֆէրմանի շահի, ըստ տրութեան հրամանին. برکرفت պէր կիրիֆթ, վերընկալաւ, ընկալաւ.

بى պի, առանց. նախադրութիւն է սեռական հոլովոյ. որ بى هنر պի հիւնէր, առանց ճարտարագիտութեան.

پيش փիշ, յառաջ, առ. پس փէս, յետոյ. ուր բայք լինիցին վ՟ ժամանակի՝ յոլովանգամ բացառականի յօդիւ կազմի, որ 'ի մեզ՝ քան նախադրութեամբ բացառի. որ پيش ازين փիշ էզ ին, յառաջ քան զայս ժամանակ. پس ازجنك փէս էզ ճէնկ, յետոյ քան զպատերազմ.

در տէր, 'ի, յ, վասն. որ درآن روز տէր ան րուզ, յայնմ աւուր. دراخلاق درويشان տէր էխլագի տէրվիշան, յաղագս սովորութեանց միանձանց.

فرو ֆիրու կամ فرود ֆիրուտ, 'ի վայր. Յատկապէս անուն է սա, որպէս և յետագայքդ, որպէս և բազումք 'ի յառաջադրուանց. յաղագս որոյ 'ի բաղդատութեան ընդունին յինքեանս ի սուղ. որ نزد նէզտ, առ. نزد من նէզտի մէն, առ իս. زير զիր, 'ի ներքոյ. پهلوى փէհլուի, մերձ, առ. سوى սուի, 'ի կողմն, մերձ. ميانى միանի, 'ի մէջ, 'ի միջի. براى պէրայ, ازبراى էզ պէրայ, بجهت պէճիհէթ, بواسطه պէվասիթէ, վասն, սակս. ازجهت էզ ճիհէթ, ازبهر էզ պէհրի, վասն: Այսուհետև զի այլ ևս նախադրութիւնք յաւելեալ լինին 'ի վ՟ր սոցա. որ درميان տէր միանի, 'ի մէջ. ازبهر ايشان էզ պէհրի իշան, վասն նց. ازبراى خدا էզ պէրայի խուտա, վասն այ. ازفرو էզ ֆիրու, 'ի սորէ, 'ի ներքուստ. ازنزد او էզ նէզտի օ, 'ի նմանէ.

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս Շաղկապի և Միջարկութեան.

Շաղկապք են՝ , վէ, և. هم հէմ, և, եւս. نیز նիզ, նաև. یا եա, կամ. لیکن լէքէն, لیک լէք, բայց, այլ. بل պէլ, بلکه պէլքէ, բայց, մանաւանդ. اگرچه էկէրչէ, گرچه կէրչէ. باآنکه պա անքի, թէպէտ և. هرچند հէր չէնտ, هرچندکه հէր չէնտքի, թէև, թէպէտ և. اما էմմա, բայց. اگر էկէր, گر կէր, և ار էր, եթէ, թէ. وگر վէկէր, ور վէր, թէև. ورنه վէրնէ, مگر մէկէր, մինչև, եթէ ոչ. جز ճիւզ, بجز պիճիւզ, բայց ի. بنابرین պինապէրին, այսու օրինակաւ. پس բէս, արդ, ուրեմն. که քի, զի, որ. زیرا զիրա, զիրա զի, վասն զի. ازآنجاکه էզ անճաքի, վասն զի, որովհետև. چونکه չունքի, քանզի. تا թա, کتا քի թա, զի, որպէս զի.

Ըստ կցական շաղկապդ, վաւ՝ բազում անգամ հնչի ուու, այսինքն վէ՝ յետ ձայնաւորի կամ ի սկիզբն պարբերութեան. իսկ ու՝ կամ ո՝ յետ բաղաձայնի. որպէս بیگانه وآشنا պիկանէ վէ աշնա, ծանօթ անծանօթ. خرید وفروخت խարիտ ու ֆէրուխտ, գնելն և վաճառելն, առևտուր. شیروشکر շիր ու շէքէր, կաթն և շաքար.

Միջարկութիւնք պարսկաց են՝ ای էյ, یا եա, آیا այա, ով. دریغ տէրիղ, ափսոս, دریغا տէրիղա, աւաղ. اه ահ, ահ. وای վայ, վա՜յ.

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս Բառդասութեան Ոճոյ.

Ի պարսս սովորութիւն է յառաջադաս դնել զածականն գոյականին, և յոլովութեան յաւելուլ ի սուղ. որպէս برشیرین պէր շիրին, պտուղ քաղցր. كتاب بزرگ քիթապը պիւզիւրգ, գիրք մեծ. Սոյն է սակս վասն յարաբերականութեանց. որպէս ایام گذشته էյյամը կիւզէշթէ, օր անցեալ կամ անցեալ: Այսպէս և վասն դերանուանց. որպէս پدرمن պէտէրի մէն, հայր իմ: Իսկ յանուանս որք յանգին ի ձայնաւորս, կամ յերկուս տառս յայտնիս՝ ا էլիֆ, վաւ՝ ی եէ, և կամ ի ه հէ անձայն. միշտ գրեն ուղղական զտառադ՝ ی ե, կամ ء է. սակայն այսու զանազանութեամբ, զի ی եէ դնեն ի բառս յանգեալս ا էլիֆ կամ و վաւ. իսկ հէմզէ դնեն յանուանս յանգեալս ի ی եէ, կամ ه հէ. որպէս پارسای آگاه փարսայը ակահ, ճգնաւոր իմաստուն արթուն. ایلچی بزرگ իլչիյի պիւզիւրգ, դեսպան մեծ. رفتار نیهوی

Չեհրէի զիպալար, կամաւ գեղեցկաձեւ · میوهٔ شیرین Մեյվէի շիրին, պտուղ քաղցր ։

Այլ միանգամ ազատ և մեկին իցէ սեռական հոլովն, նախադասի անուանն՝ մասնիկն از էզ · ըստ այսմ յաւելու քաղաք Թագաւորի, առեն պարսիկք شهر پادشاه շէհրի փատիշահ · իսկ առ հարցումն, որոյ է այս քաղաք՝ این شهر کی است քիրաստ էզ շէհր, զպատասխանին արձակաբար առնեն՝ از پادشاه էզ փատիշահ, Թագաւորի · վասն զի ՚ի դիմին արձակ է սեռականն ։

Ի հոլովեալ անուանս՝ յետադասի ածականին մասնիկն կամ յօդն իւրաքանչիւր հոլովոց · որպէս ایلچی بزرگ را گفت էլչիյ պիւզիւրքրա կիւֆթ, դեսպանին մեծի ասաց · آن میوهٔ شیرین را بجورد ան մէյվէի շիրինրա պիւխօրտ, զայն պտուղն քաղցր կերաւ · کتاب پدر خود را آورد քիթապի փէտէրի խօտրա ավիւրտ, զգիրս հօրն իւրոյ եբեր ։

Ի բազմաւորականսն՝ յոգնականացուցիչ նշանն մակադրի ՚ի գոյականն, և ածականն միայն եզական · որպէս میوههای شیرین մէյվէհայի շիրին, պտուղք քաղցունք կամ քաղցր ։ Իսկ ՚ի հոլովեալս առի دوستان قدیم را گفتم տօսթանի գատիմրա կիւֆթէմ · բարեկամացն վաղնջականաց ասացի ։

Սակայն քանզի ներկայ և անցեալ ընդունելութիւնք յանգին ՚ի ه հէ անձայն, կամ Թէ՝ յանգին յեա ֆէթհէի, ուր են և բազում անուանք, բազմաւորականն սոցա առնեցուն ձևանայ յանգիւս ان ան, ընդ մէջ ունելով զատաղ گ կէֆ · որպէս شناسنده շինասէնտէ, գիտող · شناسندگان շինասէնտէկեան, գիտողք · دارنده տարէնտէ, ունող · رندکان, տարէնտէկեան, ունողք · رفته րէֆթէ, անցեալ, վախճանեալ · رفتگان րէֆթէկեան, անցեալք, վախճանեալք · فرستاده ֆիրիսթատէ, հրեշտակ, պատգամաւոր · فرستادگان ֆիրիսթատէկեան, հրեշտակք, պատգամաւորք ։

Այլ միանգամ ածականն նախադաս իցէ գոյականին՝ համարի այն բարդեալ անուն, և առանց յաւելուածոյ սուղ ի ատառի՝ քէսրէն երկուքն ՚ի միասին իբրև մի բառ, և նոր նշանակութիւն ունին · ըստ այսմ روی خوب րույի խուպ, իմանի՝ գեղեցիկ դէմք · իսկ առեալ خوب روی խուպ րույ, իմանի գեղեցկադէմ ։

Ցուցական դերանուանք՝ նախադաս դնին գոյականին · որպէս این مرد ին մէրտ, այս այր · آن زن ան զէն, այն կին · از این جانب էզ ին ճանիպ, յայսմ կողմանէ ։ Իսկ ուր յարեսցին ՚ի բազմաւորական անուանս, ընդեանք միայն եզական · որպէս این آدمان آمدند ին ատէմեան ամէտէնտ, այն արքն եկին ։ Այլ Թէ ցուցականքն առանձին իցեն և զօրութ ունիցին զգոյականն, յայնժամ ընդեանք յոգնակի դնին · որպէս اینان آمدند ինեան ամէտէնտ, նոքա եկին ։

Ոլորութիւն է պարսից բազում ուրեք ՚ի վար արկանել զգոյական անուանս, զանեռևոյթս և զընդունելութիւնս արաբացւոց · որպէս رجوع کردن րիւճու քէրտէն, դարձ առնել · ترتیب دادن թէրթիպ տատէն, կարգաւորել · اقرار کردن իգրար քէրտէն, խոստովանել · انتظار ساختن ինթիզար սախթէն, ակնունել · منتظر شدن մունթէզիր

[illegible] , որի նշանակ լինել ։ Սակայն զանազանեալ դրականն՝ յանգմանց ’ի ն եւ [illegible] , կամ փոխեն ’ի ت եւ տրական , կամ թողեն զայն եւս , ինչ անձայն , [illegible] յետոյ դնելով ․ քանզի աւելն تو հաւանելեր , փոխանակ تو پد , զօրութիւն ․ گد دید , փոխանակ گد دیدی , առաւելոյ ․ مخلط լուսոյ , փոխանակ առելոյ مخلط լուսոյն , ըմբռնել ահան , վարկեան ։

Բազմապատկական թուականք բաղդում այն է՝ զի նախադասին քան զգալականն յեղականին ․ որպէս صد کس սատ քէս , հարիւր մարդ ․ صد هزار سال սատ հէզար սալ , հարիւր հազար կանկառ ։ Իսկ ուրեք և այսպէս , թէպէտ զուտ ուրեմն ․ دومردان տու մէրտան , երկու մարդք ։

Սորաբացւոց գլականն անուանն համարին պարսիկք եւս եզակի , և ըստ նմին կանոնի համաձայնեցուցանեն ընդ բայից և ընդ ածականաց ․ որպէս از آمدن بهار از رفتن دی اوراق حیات ما میگردد طی էզ ամէտէնի պէհար էզ րէֆթէնի տէյ էվրագ հաեաթի մա միկէրտէտ թայի , գալստեամբ գարնան , և գնալով ձմերան՝ տերեւք կենաց մերոց լոյժ անցանեն ․ յորում اوراق էվրագ , որ յոգնականն է բառիդ ورق վարագ , տերեւ , համաձայնի ընդ եզականին میگردد միկէրտէտ ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս Բաղդատութեանց Բայից ։

Տէր բային բաղդում այն է , զի նախադասի քան զբայն , և համաձայնի ընդ նմա թուով և դիմաւ ․ որպէս هرکه بدان نشیند نیکی نبیند հէրքի պէտան նիշինէտ նէքի նէպինէտ , որ ոք ընդ չարս բազմի , զբարին ոչ տեսցէ ։ Իսկ եթէ երկու կամ բազում անուանք լինին տէր բայի՝ եզական բայիւն ․ որպէս هنر و فضل ضایع است հունէր ու ֆազլ զայի էսթ , ճարտարութիւն և առաքինութիւն կորուսեալ է ․ փոխանակ գրելոյ ضایع اند զայի էնտ , կորուսեալ են ։

Ի պարբերութեան երկուց կամ բազում անդամոց , որոց մարթ իցէ կատարել օժանդակ բայիւ , յառաջնումն դնի ներգործութ օժանդակ բայ , և յերկրորդումն զօրութբ իմանի ․ որպէս مضرت تعجیل بسیارست و منفعت صبر و سکون بیشمار մազըրրէթի թաճիլ պիսեարէսթ վէ մէնֆաաթի սապր վէ սուքուն պիշումար , վնասք շտապութեան բազում են յոյժ , իսկ օգուտ համբերութեան և հանդարտութեան անթիւ ։ Ի դմին յայտ յերկրորդում անդամի պարբերութեն զօրութբ է իմանալ երկրորդանգամ զօժանդակ բայն است էսթ , որ بیشمارست պիշումարէսթ , անթիւ է ։

Աւր բանք լինիցին վասն սաստկութեց , անդ կարգի բանն եզական բայիւ , և սեռականաւ را րա ․ որպէս این کتاب کراست ինքիթապ քիրաստ , որո՞յ է այս գիրք ։ Իսկ զի Է պարսից մեւս եւս բայ եւս գտնին ուրիմ , այն է استن , [illegible] , զայն

ծէ

'ի վեր արկանեն յիմ՛ սեղիս՝ ըստ օրինակի այլոց լեզուաց , զի ասեն՝ آن پادشاه پسری داشت صاحب فراست ան փատիշահ փիսէրի տաշթ սահիպ ֆիրասէթ , այն թագաւոր որդի ունէր՝ ձոխացեալ իմաստութբ . چه حال داری չէ հալ տարի , կամ 'ի յոգնականն چه حال داريد չէ հալ տարիտ . ո՞րպիսի վիճակ ունիս , կամ ունիք . այսինքն ո՞րպէս կաս , ո՞րպէս կայք .

Նոյն յետ բայից خواستن խասթէն , կամել . և توانيدن թիւվանիտէն , կարել . գուցէ այլ բայ , բազում ուրեք նոցա յետին ن նուն աներևութի զանց լինի . զք خواهم رسيد խահէմ րէսիտ , հասից . որում պարտ էր լինել րէսիտէն . نتوانكرد նէթիւվանէսթ քէրտ , ոչ կարացէ , կամ ոչ կարէ առնել , որ լինելոց էր քէրտէն .

Աներգործական բայք պարսից սովորաբար խնդիր առնուն 'ի հայցական հոլով՝ որոշեալ را րա մասնկամբ , կամ անորոշ իբրև ուղղական , ըստ կարգ. բանից եւրէ . զք مادر را شنيدم մատարիրա շինիտէմ , լուայ վասն ուրումն (կամ լուայ զոք) թէ մեծատուն իցէ . اگر آن ترك شيرازي بدست آرد دل مارا էկէր ան թիւրքի շիրազի պէտէսթ արէտ տիլի մարա , եթէ այն թուրքն շիրազցի զսիրտ մեր ընդ ձեռամբ իւրով ունիցի . خانه' اورا كسي نديدي دركشاده و سفره' اورا سركشاده խանէի օրա քէսի նէտիտի տէր քիւշատէ վէ սուֆրէի օրա սէր քիւշատէ , զտուն նր ոչ ոք տեսցէ բացեալ , և ոչ զսեղան նր պատրաստեալ . Իսկ ուր անորոշ իցէ հայցականն՝ զանց առնեն զմասնկանն را րա , ոչ 'ի մեզ սովորութի է թողուլ զնախդիրն զ . զք دعا كردن տուա քէրտէն , աղօթս առնել . چام پركردن ճամ փիւր քէրտէն , բաժակ լնուլ .

Մանք առնուն խնդիր 'ի տրական հոլով , ոչ كردن քէրտէն , دادن տատէն , طالب شدن թալիպ շիւտէն , ևն . զք يارا را خبر كرد եարարա խապէր քէրտ , ընկերացն ազդ արար . مبلغ خطير به او داد մէպլէղի խաթիրի պէ օ տատ , արծաթ բազում նմա ետ .

Մանք 'ի բացառական , որպիսի են ترسيدن թէրսիտէն , گذاريدن կիւզարիտէն . զք از خدا ترسيدن էզ խիւտա թէրսիտէն , յայ երկնչել . از آتش نهان ميترسم էզ աթէշի նիհան միթէրսէմ , 'ի հրոյն թագուցելոյ երկնչիմ .

Ընդունելութի մեր յանգեալ 'ի լի , բացառին և պարսիկք նոյն օրինակ , յաւելլով ی էէ յաներևոյթն հանդերձ նախընթաց թէօրէ . զոր օրինակ كشتني քիւշթէնի , սպանանելի . مردني մէրտէնի , մեռանելի . آمدني ամէտէնի , գալոց , գալի . آويختني աւիխթէնի , կախելի .

ԳԼՈՒԽ . ԺԲ .

Յաղագս Բաղդատութեան Անուանց .

Զուգաւորիչ մասնկունք որոց գործ է ցուցանել զհցորդութի , զպայմանս , զպատճառս , և զոր այլևս , խնդրեն միշտ 'ի վեր արկանել զստորադասական կամ

Ստորադասական եղանակ բայից. Որ(պէս) گر بدانستمی که فرقت تو اینچنین صعب باشد و دلسوز از تو دوری نجستمی یکدم و ز تو غایب نبودمی یکروز կէր պէտանիսթէմի քի ֆիրգաթի թու ինչնին սաապ պաշէտ վէ տիլսուզ էզ թու տուրի նէճուսթէմի եէքտէմ վէ զի թու ղայիպ նէպուտէմի եէքրուզ. Եթէ գիտէի թէ անջատումն և հեռաւորութիւն քո այսչափ վիշտս բերէր ինձ և հեծութիւն, բնաւ ոչ յօժարէի ՚ի բացեայ կալ ՚ի քէն և ոչ օր մի.

Մաղթողական բայս՝ մասնիկքն ներկայ ժամանակին ی իյ, և همی հէմի՝ զետեղին ընդ մէջ ածականին կամ գոյականին, և ընդ մէջ օժանդակ բային. Որ(պէս) بری کنم պէրի քիւնէմ, լինիմ. ترهمی سازی թէրէհհումի սազի, խնամասցուցանես.

Յորժամ անջատի բայն յածականէն իւրմէ, կամ ՚ի գոյականէն՝ ընդ որում բաղադրեալ և մի բառ եղեալ էր, և մտանեն ընդ մէջ նշ այլ բառք. Որ(պէս) صبا بلطف بگو آن غزال رعنارا که سر بکوه و بیابان تو داده ما را սապա պէլութֆ պիւկու ան ղազալի ռաանա րա քի սէր պէքուհ ու պիյապան թու տատէ՝ մարա. Ով զեփիւռ յուշ արա քաղցրութեամբ այծեմանն այնմիկ թէ ՚ի լերինս և յանապատս բացօթեայ արարեր զմեզ. Աստ ընդ մէջ բառիցդ سر սէր, և داد տատ, մտեալ են երեք բառք.

Աղաղակութիւնք և միջարկութիւնք՝ նախադասին անուանց թէ ուղղականք իցեն. Որ(պէս) از آن جا էզ անճա, ՚ի անդուստ անտի. یا تو եա թու, ընդ քեզ. یارمن եարի մէն, ՚ի միրայ իմ. ای شهریار էյ շէհրիյար, ով թագաւոր.

Ռամկական խօսս առնուն է պարսից խօսիլ ընդ երեսս յերկրորդ դէմս եղականին تو թու, դու. Որ(պէս) چه حال داری չէ հալ տարի, ո՞պէս ես. Այլ բազում անգամ փոխեն և երկրորդ դիմաւն յոգնականին شما շումա, դուք. Որ(պէս) از کجا تشریف آوردید էզ քիւճա թէշրիֆ ավուրտիտ, ուստի եկիք. Նա՝ ուրեք զի և զերրորդն ՚ի վեր արկանեն՝ պատուոյ աղագաւ. Որ(պէս) سرافراز فرمودند սէրֆէրազ ֆէրմուտէնտ, պատուեցին զիս, իմս պատուեցիք فرمودید ֆէրմուտիտ. پادشاه اورا دادند փատիշահ օրա տատէնտ, թագաւորին նմա ետուն. փոխանակ գրելոյ داد տատ, ետ. وزیر خواهند آمد վէզիր խահէնտ ամէտ, վեզիրն եկեսցեն. փոխանակ գրելոյ خواهد խահէտ, եկեսցէ. Նա՝ նոյն և այլ երրորդ դէմ պատուոյ՝ حضرت հազրէթ, տէրութիւն, բարձրութիւն. Որ(պէս) حضرت شما հազրէթի շումա, տէրութիւն ձեր. Իսկ թէ ոք զանձնէ խօսիցի՝ անխտրաբար կարող է առնել من մէն, ես. ما մա, մեք. կամ փոխարէնս ես՝ بنده պէնտէ, ծառայ. فقیر ֆագիր, աղքատ. عاجز աճիզ, տկար. دوست տօստ, բարեկամ. محب մուհիպ, բարեկամ. خیرخواه խայրխահ, բարեսէր, բարեխնդիր.



ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ


Պտումն գործեալ աշալուրջ հայեցողութեամբ գրեցի զմեկնութիւն տաճարաւոր գրոցն Շահրիարի բանաստեղծին բառական, ՚ի բարբառ և ՚ի լեզու հայկական, ՚ի Թուականին ամին։ Նաև իսկ և իսկ գտեալ և այլ մատեան՝ այն ինչ նորոգ յօրինեալ ըստ օրինակի գրոցն Շահրիարի հեղինակին, զայն ևս ՚ի նոյն յարեցի։

Այս յետոյ տեսեալ միւս ևս գիրք ինչ հարուստ բառիւք, զոր ստանաւորելով չինեալ, և Թարգմանաբար Թուրքական բարբառով յօրինեալ էր Հալիմի անուն ոմն ՚ի Թուականի Հիճրէթին 850, զայն մատեան ևս ՚ի հայ լեզու յեղեալ, կարգեցի եռամասնեայ մատեան բառից։ Բայց ՚ի սոսին ՚ամենեսին կարգի բառիցն հետևեցայ․ որպէս նոքին իսկ հեղինակքն արարեալ էին․ և իբրև տեսի Թէ գիւտ բառի իւրք ՚ի նմին, դժուարին լինի որոնողին․ հարկ եղև ինձ զնոյն բառսն դարձեալ այլուր զետեղել, և զնոսին շարադասել ըստ կարգի հայկական այբուբենից, ՚ի դիւրութիւն ընթերցողաց։

Այս Թէպէտ կարի ինձ դիւրել զճանապարհ ուսման ոչ է բարւոք, զի զհամբակ ուսումնասէր պղերգ առնէ այն դիւրութիւն․ և ՚ի նոյն ապաստանեալ և անփոյթ եղեալ, ոչ յարանայ ՚ի դեգերանս կրթանաց։ Բայց և յոյժ դժուարին առնել, և տարապար կացուցանել զուսմանն շաւիղ, դարձեալ ոչ է բարւոք, զի այն դժուարութիւն՝ կորուստ գործէ ժամու և ժամանակի․ յորմէ ձանձրութիւն հետևեալ ուսանողին՝ տաղտապի և լքանի։

Այր սակս և ես նուաստ Գէորգ՝ ծառայ կենարար փրկչին, որդի տեառն Յովհաննու քահանայի․ ՚ի յօրինել իմում զգործս զայս, խոխուսեալ խորհուրդ կալայ՝ փոքր մի դիւրել զկարգ ուսման ճանապարհի մատենին այնորիկ ՚ի գիւտ անձնիւր բառի։ Աւասի յաւելեալ ՚ի նոսին և այլ մասն չորրորդ, որ է այս․ արարի զայն շարակարգութիւն ինձ ըստ կարգի հայկական այբուբենից, յորում գրեցի և զայլ բառս ինչ յայլոց բառարանաց հանեալ, որք ոչ գոն յերեսին ՚ի նոսին․ իւրաքանչիւրոցն առաջի դնելով զմեկնութիւնս իւրեանց։ Արդ՝ ընկալեալ յինէն զայս դուզնաքեայ խայրիս սիրով վայելեցէք․ և զիս հոգևոր և մարմնաւոր ծնողօք ՚ի նուիրական աղօԹս ձեր յիշեցէք․ և շնորհիւ տեառն զարդացեալ․ ողջ լերուք։





ԲԱՌԳԻՐՔ
ՊԱՐՍԿԱԿԱՆ
ԼԵԶՈՒԻ

Ա

Ա ——— ا

Է հր՝ Այբուբեն բային · և նշ՝ էկ · կէս՝ Գոլով թեթևացուցեալ ի բուն հր՝ Ա ։ յոր երբեմն և Պէ մի յաւելեալ լինի Պէյա ։

Ա · Դար՝ է վերջաւորութիւն կո՝ · որպ Տէհա՛ · ծվ ոնդ ։ և Խիտավէնտա՛, ամ ոնէր ։ Սոյնգունակ են և բառքս Քէրիմա՛, Քէրպաղա՛ · և այլն · որք համազօր են կոչականացս Ի՛ յ Տէհ ։ Ի՛ յ Խիտավէնտ ։ Ի՛ յ Քէրիմ ։ Ի՛ յ Քէրպաղ ։

Ա · Է ևս վերջաւորութիւն ընդու՝ նեւ՝ և ներգործականքայի · զի յարելով յաւարտ հր՝ եղանակի առնէ ընդուն՝ նշանակիչ առաւելութե · որպ Տանա ։ Շինէվա ։ Պիյնա ։ Բէվա ։ և այլն ։ և Թարգմանի առաւել գիտօղ ։ հասկացօղ ։ լսօղ ։ տեսանօղ ։ գնացօղ ։ և այլն ։

ԱԳԱ ——— آ

Մեծաւոր · պէօյիւք ։ և է այն՝ որ կոչի Թուր՝ Աղա ։ է ևս բառ բնակչացն գաւառին Խարեզմի ։

Ա՛ԳԻԳ ——— عقیق

Բառ ար՝ · է տեսակ ինչ քարի · որ լինի ՚ի գաւառին Եէմէնու · որում ասեն Սէվլէյմանի · և ՚ի մէջ սմանց ՚ի սոցանէ լինի կերպարան ծառոյ, զոր անուանեն Շէճէրի ։ որ և այն երկուս տեսակս ունի, որոց մին կոչի Ծիէէրրէնկ · այսինքն Թոքագոյն · և միւսն Կիռաշիրէնկ, այս է մոխագոյն · գոյ և այլ ինչ տեսակ որ Սէնտ ասի ։ Եւ գիտելի է, զի Ա՛ԳԻԳ քարն առ այլազգիս յարգոյ է · ուր զի միշտ կրեցաւ սոյն մատանի ՚ի մատին առաջնորդի իւրեանց · և պատուէր ևս տուեալ նո թէ դիք մատանի ՚ի մատունս ձեր, որ իցէ կազմեալ յԱ՛ԳԻԳ քարէ ։

ԱԳԻՇԹԷ ——— آغشته

Մուռան կամ մեթերանոց ։ ժէշար վէ նախչէն ։ որ այնմ Ջէ հէր չէյչէ ժէ պուշէտ թէօզյէ շէյպա, Էչան ու Գէշիւ մէօր ժէրդէ շէժէրա ։

Ա՛ԳԼ ——— عقل

Բառ ար՝ · խելք · որ բուն պարս՝ ասի Խիրէտ ։

Ա՛ՏՏԱՐ ——— عطار

Բառ ար՝ · վաճառօղ մշկոյ բուրկենի, և նմանի նոցին անուշահոտ իրաց · զի է բառս այս ընդունուն՝ ծագեալ ՚ի բառէն عطر՝ ըտր · որ նշ՝ անուշահոտ բուրումն · զոր առ հասարակ վրիպական գործածութբ՝ ասեն գվաճառողէ դեղոց, խոտոց, և արմատոց, և այլոց մանրավաճառական իրաց ։ և բառս Ա՛ՏՏԱՐ բուն պարս՝ ասի Պուայֆրօշ · որ և մեկնի Մէօշք վէ ամպէր վէ էմսալի խօշպու սաթան փէրշէր ։ ըստ այնմ զոր ասէ Շէյխ Սաատի ՚ի գիրս

Կիւլիսթանին Մէօշէ անէսի տէ խօֆ դէօղօսէօ․ Դէ անտէ Ա՛տտօշ դէօզէօնօսէօ։

ԱԴԼԱՍ ——————— آطلس

Կերպաս մետաքսեայ սոսկ ոստայնանկեալ․ այսինքն առանց յօրինուածոյ ծաղկանց․ ասէք փօ_գօմէշ հօշէյը գօմաշ։ Իսկ եւս ԱԴԼԱՍ կոչի իններորդ երկնին, վասն սոսկ և թափուր գոլոյ յաստեղաց։

ԱԴՄԷ ——————— عطس

Բառ ար", փռնգալութիւն, աքսըրմագ։

ԱԴՄԷԶԷՏԷՆ ——————— عطسزدن

Փռնգալ․ աքսըրմագ։ Հր" չէն․ և այր" չէնէք։

ԱԴՄԷՔԷՐՏԷՆ ——————— عطسكردن

Տես ԱԴՄԷԶԷՏԷՆ․ Հր" չէրն․ և այր" չէրնէք։

ԱԶ ——————— آز

Ագահութիւն․ հըրս․ թամա։

ԱԶԱՏ ——————— آزاد

Անկապ․ սէրպէսթ։ և այս եւս 'ի գործ ածի ըստ քանի մի ինչ նշանակութեան․ զի ասեն Փէհլէվանլէրէ ազատ․ և ցուցանել զերծեալ 'ի ծառայութենէ կապանաց։ ԱԶԱՏ կոչի նաև Սէրվն, այսինքն Նոճին։ և Սօսէնն այսինքն շուշանն, և ցուցանէ զնոյն զերծ 'ի կապից և 'ի գոլոյ պատուաստել յոստ ինչ․ ըստ այնմ քէօքիւնի պէկէլէ անտէ օշատէն տէանէք․ Հէրէնէ սէրպէսթ ազատէն տէանէք։
Հեղինակ ումն վասն Սօսէնին, որ է շուշանն․ ԱԶԱՏ կոչէ, սակս լինելոյ նորա սոսկ և թափուր 'ի գունոյ և յերանգոյ։ Ամենայն ծառ՝ որ ոչ ունի պտուղ, որպէս Սէրվ և Սօսէն, ԱԶԱՏ անուանեալ է․ Գրեալ են և վասն ԱԶԱՏ անուանելոյ Սէրվին այսինքն Նոճւոյն․ զի մինչ յաւուր միում Սիրահարն Մէճնուն վառեալ գոլով 'ի սէր Լէյլիին, վարանեալ շրջէր․ տեսանէ զի պարտիզպան ումն տապար հարեալ կամի հատանել զծառ մի Նոճի բարձրահասակ, և նմանեցուցանելով հասակի Լէյլի կոչեցեալ տարփածուին իւրոյ, աղաչեալ զպարտիզպանն և գնոյ զՆոճին զայն առեալ, զերծոյց 'ի հատմանէ, յայր սակս անուանեցին զՆոճին զայն ԱԶԱՏ․ և յետոյ անցմամբ ժամանակաց և բազում գործածութեամբ, անուն եղեալ է նմա Նոճեաց։ Գրէ և շարագրող գրոց Կիւլիսթանին, թէ Հաքիմլէրտէն պիրիսինէ սորտուլար քի խուտայի թէալա եարատտըղը նէ պէօյլէ տէրէխթլէրտէն պիրինէ ազատ տէմէզլէր, մէկէր սէրվէ քի հէչ մէյվէսի եօգ տըր․ պունուն հիքմէթի նէ տիր, տէտի քի հէր պիրինին մէյվէսի վագթի վար տըր քի պիր վագթ վար տըր․ պիր վագթ եօգ տըր․ եէր սէրվին հէր վագթ եէշիլ տիր․ Որ այսպէս թարգմանի 'ի հայկական բարբառ։ Զիմաստուն ումն հարցին թէ այսքան ծառք են անուանիք, զորս ած ստեղծեալ է և արգասաւոր արարեալ, բնաւ միումն ազատ անուն չէ կարդացեալ, եթէ ոչ Նոճւոյն, որ ամենևին պտուղ ոչ ունի․ պատասխանեալ ասաց թէ․ Այլք 'ի ծառոց մերթ պտուղ ունին և մերթ անպտուղ և թառամեալ են․ և Նոճւոյն բոլոր ժամանակն գեղեցիկ է և դալար և զուարճ․ և այս որակութիւն ազատականացն է։ Այն հեղինակ այլուր ասէ և զայս ինչ թէ․ Պէ ազատէն պէօյլէ տիր ․ ...

ԱԶԱ — ԱԶԱ

Պէհէօրտէն էնր։ Այսինքն ցուցանէ սաստ ոմն՝ որ սուղ ոչ բերես, եւ պատասխանի թէ ազատականք զատուցանեալ են։ Դարձեալ ԱԶԱՏ է անուն ծառոյ միոյ որ լինի 'ի գաւառին Կիլանու, և է սա ծառ մի բարձրահասակ և բարեձև որ բարձրանայ յերկինս մինչև 'ի կանգունս վաթսուն կամ եօթանասուն․ և ունի ուղեշս ըստ ըղ ծառոյն Սօսէֆէշի․ և է մինչև 'ի ծայր իւր միաչափ հաւասարութեամբ։ Իսկ եւս է անուն տեսակի միոջ ձկան, որ շատ լինի 'ի մէջ ծովուն Կիլանու․ Նշ" դար" և զտեսակ մի ծառոյ յորոյ տերևոյն կամ 'ի դալար ոստոյն՝ եթէ ուտիցեն կենդանիք, սատակեսցին սատակին։

ԱԶԱՏԷ ——————— آزاده

Տես ԱԶԱՏ․ ըստ որում Նշ" ձեռնթափ կամ զերծ ֆօրէշ վէ գօրթուլմուշ։ Նաև անկապ․ սէրպէսթ։

որոյ յոգնականն լինի ازادكان ԱԶԱՏԷԿԱՆ, այսինքն ոչ կապեալք կապիւք կենցաղոյս․ Գօսաշ փէսնէ էյլէ մէշղուլ օլմայանլար։

ԱԶԱՏԷԿԻ ——————— آزادكى

Ազատութիւն․ սէրպէսթլիգ։

ԱԶԱՏԻ ——————— آزادى

Ազատութիւն․ սէրպէսթ օլմագ։ Եւս գոհութիւն և շնորհակալութիւն․ համտ իւ շիւքիւր․ ըստ Հէմ սէրպէսթլիգ էյլէտիք․ Հէմ մինէթ սէրպէսթլիգ․

ԱԶԱՏՄԻՅՎԷ ——————— آزادميوه

Է տեսակ մի հրուշակի, զոր առնեն նշով, և կաղնով, և պիստակաւ և այլ սոցին նմանիւ. պէր ճէվիզ հէլվաս տըր։

ԱԶԱՏՇԻՒՏԷ ——————— آزادشده

Ազատ եղեալ․ սէրպէսթ։

ԱԶԱՏՎԱՐ ——————— آزادوار

Դյախ է անուն ձայնի միոյ երաժշտական երգոց․ մուսիգի պիր մագամ ատը տըր։ 2․ է անուն գեղջ միոյ 'ի սահմանս Խորասանու 'ի կողմանս Նիշապուրոյ․ ուր լինին անհամար միրգ և պտուղք․ և մանաւանդ խաղող նորա, որ յոյժ պատուական է։ պիր գարէէ ատը տըր։

ԱԶԱՏՏԱՐՈՒ ——————— آزادارو

Աւելուկ․ չուգուր։ է արմատաւոր խոտ մի ոգտակար։

ԱԶԱՏՏԻՐԱԽԹ ——————— آزاددرخت

Է ծառ մի, որ ունի ծաղիկ որպէս շլէյլէ․ և հաստ կեղև, որ ոչ կարէ ուտել․ որոյ ծաղիկն անուշահոտ է․ և զհատս նորին Լեզուէն առնեն․ և յայն սակս կոչի Թէսպիհ աղաճը․ զոր Թասպիհ կոչեն յԵրին դաւրերիսթանու։

ԱԶԱՏՔԷՐՏԷՆ ——————— آزادكردن

Զերծ առնել կամ ազատել․ սէրպէսթ էյլէմէք։ Հր" էյլէ․ և այր" էյլէյինիզ։

ԱԶԱՏՓԱ ——————— آزادپا

Ազատ ոտն․ սէրպէսթ այաղլը։

ԱԶԱՐ ——————— آزار

Վիշտ կամ նեղութիւն․ ինճիմէք․ և է իբր բայած" ինչ 'ի բայէն ԱԶԻՐՏԷՆ․ որ և բարդի ընդ Տի_

[illegible] և ՄԵՐՏԻՒՄԱԶԱՐ։

ԱԶԱՐԵՆՏԷ — آزارنده

[illegible] ԱԶԱՐԻՑՏԵՆ. բայ"ն և ն՛շ" վշտացու․ [illegible]։

ԱԶԱՐԻՑՏԵՆ — آزاریدن

[illegible]ցանել․ ինճիթմէք․ որ և ասի ԱԶԱՐ[illegible]ԵՆ․ Նաև

ԱԶՈՒՐՏԷՔԵՐՏԵՆ — آزرده کردن

[illegible]" ոտր․ և ապա" ուտրէմ։

ԱԶԱՐՔԵՐՏԵՆ — آزارکردن

Տես ԱԶԱՐԻՑՏԵՆ։ Հր" [illegible]․ և ապա" [illegible]։

ԱԶԵԽ — آزخ

Հօտեցեալ այրելի ծիւղք որթոյ․ [illegible]։

ԱԶԵՂ — آزغ

Տես ԱԶԵԽ։

ԱԶԵՆ — آزن

Նոյն է ընդ ԱՐԵՆ․ որ է արմունկն [illegible]։ և ուրեք մեկնի բազուկ․ արզ" ՍԱՒՏ․ ساعد

ԱԶԵՆԷ — آزنه

Ջետեղել զամ ինչ 'ի տեղւոջ իւրում․ [illegible]։

ԱԶԵՆՏԷ — آزنده

Փաթութումն իրի ինչ, և ամրացուցումն նորին․ [illegible]։

ԱԶԵՆՏԵՆ — آزندن

Կարել ասղամբ և կարկատել․ [illegible]։ Հր" [illegible]․ և ապա" [illegible]։

ԱԶԵՆՔ — آزنك

Խորշոմումն գլխոյ, որ լինի 'ի ճակատ մարդոյ, և պատճառի 'ի ծերութէ․ և 'ի պահոց բարկութէ․ որ և ասի ԱԺԵՆՔ․ [illegible]։

ԱԶԵՏԷ — آزده

Գունաւորեալ, [illegible]։ 2․ ասղամբ և այլովք իրօք նմանեօք խմեել․ [illegible]։ 3․ Տես ՆԻԿԵՆՏԷ։ 4․ Նմանումն ն՛շ" զատամունս խալտոցայ․ [illegible]։

Ա՛ԶԵՊ — عزب

Ամուրի․ [illegible]․ է բառ ար"։

Ա՛ԶԵՐ — آذر

Ընուն մի յանուանց տյ ամենակալի։ 2․ Հուր․ օփ․ և ար" ՆԱՐ․ Նաև կայծակն կամ փայլակն․ [illegible]։ 3․ անուն իններորդ ամսեան արեգակնային ամի, որ է վերջին ամիսն աշնան, յորում արեգակն է 'ի կենդանակերպն աղեղնաւոր․ զոր մեք կոչեմք Նոյեմբեր․ ասի ԱԶԵՐՄԱՀ։ [illegible]։ Իսկ ըստ Ասորւոց բառս ԱԶԵՐ, է վերջին ամիսն ձմերան․ և ն՛շ" Մարտ․ բառս այս արտաբերի նաև ԱԶԻՒՐ։

ԱԶԵՐ — آزر

Ջե տառիւ գրեալ, ն՛շ" արժադրամ․ [illegible]․ [illegible]

[illegible]։ 2․ է Հր" Աւետարեն բայ"։ 3․ ըստ ոմանց է անուն հօրն Աբրահամու նահապետին․ որ ըստ մեզ ասի Թարա։

ԱԶԵՐԱՊԱՏԿԵԱՆ — آذرابادکان

ԱԶԵՐՊԱՏԿԵԱՆ — آذربادکان

ԱԶԵՐՊԱՅԿԵԱՆ — آذربایکان

Բառքս այսոքիկ ն՛շ" կրակարան․ պարս" ԱՏԵՇ[illegible] آتشکده վասն զի ԱԶԵՐ, ն՛շ" հուր կամ կրակ․ օփ, ԱՏԵՇ։ Իսկ բառքս ՊԱՏԿԵԱՆ և ՊԱՅԿԵԱՆ, գանձօղ կամ մթերօղ․ արզ" խազին։ և քանզի 'ի գաւառին Ատրպատականի առաւել յաճախ էին կրակարանք քան յայլ տեղիս, կոչեցաւ ԱԶԵՐՊԱՏԿԵԱՆ և ԱԶԵՐՊԱՅԿԵԱՆ։

ԱԶԵՐԵՈՒՆ — آذریون

ԱԶԵՐԿՈՒՆ — آذرکون

Է ծաղիկ ինչ դեղնագոյն վարդի զոր 'ի Խորասան կոչեն [illegible]․ և 'ի Շիրազ [illegible]։ [illegible]։

ԱԶԵՐԶԵՐՏԷՀՈՒՇԹ — آذرزردهشت

Է անուն եօթներորդի կրակարանին 'ի կրակարանացն պարսից․ [illegible]։

ԵԷԽՏԱՆ يخدان * Նոյն է ընդ բառին ԵԷԽՃԱԼ․ սառնատուն․ կամ սառնարան․ Պուզխանէ։

ԵԷԽՖԻՒՐՈՒՇ يخفروش * Սառնավաճառ․ Պուզ սաթըճը։

ԵԷԿԵԱՆԷԷՔ يكانك * Հաւասար մենամարտութ զդեմ ունել իրերաց ՚ի կռուի․ Պէյրապէր վէ մուգավէմէթ․ (Օր) Եէքէնէքէ չէքէնք էշ պէքմէզ հէրէն, Տէս պէյլէ փէմէն իս փէս չէքէք ժէյրա։

ԵԷԿԵԱՆ يكان
ԵԷԿԵԱՆԷ يكانه } Միակ․ Պիրէպիր։

ԵԷԿԵԱՆ ԵԷԿԵԱՆ يكان يكان * Միատ մի․ Պիրէր պիրէր։

ԵԷԿԵԱՆԷԿԻ يكانكی * Միութի․ Պիրլիք․ վահտէթ․ (Օր) Մօրթա պէ էէքէտնէքիլի էօղլի փէտր էօլ։

ԵԷԿԻ يكی * Մի ոմն կամ մի ոք․ Պիր քիշի։ Դարձեալ միութիւն․ Պիրլիք։

ԵԷԿԻՈՒՆԷ يكونه * Տես ԵԷՔԿԻՈՒՆԷ, զի է Թեմեացուցեալն նորին։

ԵԷԿԻՒՄ يكم * Միերորդ․ այսինքն առաջին․ Իլք։ Սա ոչ ածի ՚ի գործ․ այլ ՚ի տեղի սորա ՚ի կիր արկանեն զբառս ՆԻՒԽԻՍԹԻՅՆ։

ԵԷԿՏԷՇ يكدش * Տես ԻԿՏԻՇ։

ԵԷՀԻՑՏԷՆ يهيدن * Կործանել և աւերել․ Եըգմագ վէ պօզմագ․ հր" ԵԷՀ և այր" ԵԷՀէփ։

ԵԷՀՈՒՏԱՆԷ يهودانه * Է դեղին կաւեղէնն զոր հրէայք կարեն յուս իւրեանց, առ ՚ի որոշիլ ՚ի տաճկաց․ և յայն սակս դեղին կոչեն Հրէայք ՚ի հայոց ՚ի ռամկական բարբառի։ Սարը պէշ թօրչէսի։

ԵԷՀՈՒՏԻ يهودی * Հրեայ․ Ճէհուտ։

ԵԷՂԷՃ يغچ * Լործունք բերանոյ․ Աղեղ եօրէ․ լուամըր փէհէն։

ԵԷՂԷՆՃ يغنج * Է սա տեսակ ինչ խաշոր օձի, որ բնակի ՚ի մէջ պարտիզաց․ բայց ոչ վնասէ ումեք․ որ և ասի ԵԷՂԹԷՆՃ․ Պէյ նէվ էյէ էյըլան փէտը։

ԵԷՂԷՐ يغر * Է անուն միոյն ՚ի Թագա-

ւորացն Չինու․ որ անցմամբ ժամանակաց անուն եղեալ է Թագաւորացն Չինու։

ԵԷՂՄՈՒՇ يغموش * Է սա անուն միոյն Թագաւորացն պարսից․ Աճէմ թափէշահլէրինտէն պիրինին ատը փէտը։

ԵԷՃ يچ * Մէջ բերանոյ․ Աղեղ իչի։

ԵԷՃԵԷՃ يچ يچ * Է ձայն ինչ զոր արտաբերեն ՚ի պահու պառակեցուցանելոյ զուղտն․ որ և ասի ԵԷԽ ԵԷԽ․ Պէյ ջէմէ փէտը, ջէ փէվէն եանլաչփըշ լէրի խահաշ փէրշէյ։

ԵԷՄԱՆ يمان * Ճառագայթ կամ նշոյլ․ Շէօլէ վէ շըլա։

ԵԷՄԷՐՏԷ يمرده * Լօշտակ․ որ է արմատ ինչ մարդաձև, և բուսանի գլխ ՚ի վայր․ արք" Եէպրուահ սառնէմ։ որ և ասի ԻՍԹԷՐԷՆԿ և ՄԷՐՏԻՒՄԿԻՅԱՀ։

ԵԷՄԽՕՐ يمخور * Ըմպահանձ․ իմ սէնէքիէ։

ԵԷՄՐՈՒ يمرو * Տես ԵԷՄԷՐՏԷ։

ԵԷՆԹՈՒՆ ينتون * Խաւարծիլ․ Թուրքերէն Իշխան․ արաբերէն Րէյպաս։

ԵԷՆԽԷՇՈՒՏԷՆ ينخشودن * Քերոց հարկանել ՚ի քամակ երիվարի․ Աթէ գաշաղօս ուրմագ․ հր" Եէնխէշայ․ և ապառնի Եէնխէշայէփ։

ԵԷՆԿ ينك * Ծէս և սովորութի․ Րէսմ վէ ային։

ԵԷՆՃԷ ينچه * Է խաղ ինչ զոր խաղան ձեռն ՚ի ձեռն տուեալ․ Պէյ օյուն փէտը, էլ էլէ էութըլաշ օյնարլար։

ԵԷՆՃԻՑՏԷՆ ينجيدن * Խռովել․ Քէտէրէ․ որ է սրտամտեալ լինել ուրուք ումեք․ և այլ ոչ ևս առնել ծանօթութի ընդ նմա․ ըստ այնմ, Րէֆմէ պօսթէմ փէր չէպոնէէհ ջէմայ էօր, չէրն․ չինէյոէ նոլէ էմ էէնճիյոէ պօսթ։

ԵԷՆՈՒՇԷ ينوشه * Նշ" զայնպիսի ոք․ որ ունկնդիր եղեալ լսէ զբանս բամբասողաց․ Գօղէր սէօզէն իսնէմա էփէն։

ԵԷՇԹԷՐԷՄ يشترم * Է անուն այն՝ որ ռամկական բարբառով ասի մօղքոր․ և Թուրքերէն Գօրտ էչէնէ։ ուր ասի յայսմ տաղաւորի, Սէրտէն Իէնէշ պօստէ էօլ էէչմէրէմ, Չէր իրան նէշմէ փասիփ փէվո ջէո պէրէմ։

ԵԷՇՄ يشم * Է սա յայտնի և ծանուցեալ քար ինչ ՚ի տեսաց զէվահիրի․ որ և ասի ԵԷՇՊ․ ինձ Թուի Թէ բառս Յասպիս ՚ի մեզ ծագեալ է ՚ի բառէ աստի։ (Օր) Քէմահէ Իէն էնէրն էէշմ նէրտէ, էշ շարմի էճէշ շա թէշմ նէրտէփ։

ԵԷՇՄԷ يشمه * Մագաղաթ․ Թիրիշէ։

ԵԷՇՊ يشب * Տես ԵԷՇՄ․ որ է յասպիս

ԵԷՇՔ يشك * Առաջնաշար ատամունք․

Էօն տիշլէր ։ արպ" Նապ ։ և ուրեք նշանակէ զատամունս երկոցունց կողմանց · Եան տիշլէրի ։

ԵԷՇՔԷՐՏԷ يشكرده * Տե՛ս ԴԱՆՊՈՒՐ ։

ԵԷՊ يب * Տե՛ս ՆԻՑՋ · և ս, Տախի · Դար-ձեալ նշ" և ս չարագոյն, կամ և ս վատթար · Տախի պէթէր ։ և է սա բառ բնակչացն Սեմերգանդու ։

ԵԷՊԱԹ يبات * Տե՛ս ԵԷՊԱՊ ։

ԵԷՊԱՆ يبان * Անշէն անապատ · Եա-պան ։ որ և ասի ՊԷԵԱՊԱՆ ։

ԵԷՊԱՊ يباب * Աւեր և ապականեալ · Պօզուգ ։ զոր ընդրդեալ ընդ բառին ԽԷՐԱՊ, ասեն խէրապ ու եէպապ ։

ԵԷՊԱՊԿԷՐ يباكر Աւերիչ · Խէրապ էտիճի

ԵԷՊԷՍԹ يبست * Է սա բանջար ինչ նման շոմինոյ · Խօֆանաքի պէնզէր պիր օթ տուր ։

ԵԷՊՐԷՆԿ يبرنك * Նշանակէ բուն · Ասլ վէ հէյուլա ։

ԵԷՊՐՈՒՃ يبروج * Մանր խնձոր · Խէ-ւր տէ էլմա · որ և ասի ՍԱԵԷՊՐՈՒՃ ։

ԵԷՍԱԼ يسال * Նշանակէ ժողով կամ հանդէս · Ճէմիյէթ վէ ալայ ։

ԵԷՍԱՎՈՒԼ يساول * Հանդիսայարդար որ կարգադրեալ յարդարէ զհանդէսն · որպիսի են Չավուշքն և այլք ։ Ալայ չավուշի ։ և յայս-մանէ առեալ ռ և կցէ Չավուշ՝ կոչեցեալ լինի ԵԷՍԱՎՈՒԼ ։

ԵԷՎԱ يوا Կորուսանել · Զայի օլմուշ իւրիւյիւշ ։

ԵԷՎԱՔԷՐՏ يواكرد * Կորոյս · Եավը գէլմիշ ։ որ և ասի ԿԻՒՄ ՔԷՐՏ ։

ԵԷՎԱՔԷՐՏԷՆ يواكردن * Կորուսա-նել ։ Հրամայական քիւն · և ապառնի քիւնէտ ։

ԵԷՐԱ يرا * Խորշումուն · որ լինի յան-դամս և 'ի ճակատ ուրուք 'ի պահու բարկութե, և 'ի ժամու տրտմութե և խորութե ։

ԵԷՐԱՂԷ يراغه * Հարթեալ գրիչ · Եօնուլմուշ գալէմ ։

ԵԷՐԼԻՑՂ يرليغ * Հրովարտակ Թագա-ւորական · որ յաշխարհին Հոռոմոց կոչի Էմր, նաև Պէրաթ · և է սա բառ բնակչացն Մավէրաւ-նէհրի · որ չէղաթայերէն ասի Ռուշար ։

ԵԷՐՂՈՒ يرغو * Տե՛ս ԵԱՍԱՂ ։

ԵԷՐՄԷՂԱՆ يرمغان Տե՛ս ԷՐՄԷՂԱՆ ։

ԵԷՐՄԷՐ يرمر * Անհնարութի · Իմքեանսըզ ։

ԵԷՓԷՆԼՈՒ ينلو * Սակաւ ուղեորք · որք բնակեն ունիցին · Պիր մէգտար էօլիւմիւշլէր վէ

էկիւշլէրի օլմագ ։

ԵԷՔ يك * Մի · Պիր ։ ըստ այնմ, Պի էկէ ադէթ պէ էկէ չունչէ պէ էկէ տէմ · Տիւլէթլիւռան մի չէվէ աչնալը ամէն ։

ԵԷՔԱՎԻՑՋ يك آوير * Է կարճ առու-սերն այն, որ կոչի վարսաւ · Գիսու գէլէմ ։ որ և ասի ՔԷԱՐՏԻ ՏԻԻՐՈՒՑ · և ՔԷԱՐՏԻ ՐԱՆ · նաև ՐԱՆԱՎԻՑՋ · և այս վասն այնորիկ զի 'ի վերայ ազդեր կամ երանաց կախեալ լինի ։

ԵԷՔՋԱԽՄ يكزخم * Է սա մականուն Սամից որդւոյ Նէրիմանայ · որ վա սատակելոյ նր միով հարուածք զվիշապ մի, այսպիսի մակա-նուն եղաւ նմա · ըմ, Մէն ան կիւրզի էկէզրիմ պէրթօզիւէմ · Սիէքէսր հէմանտայ պիւգիւրլիւէմ ։

ԵԷՔՋԷՊԱՆ يكزبان * Միաբերան · Պիր տիլլիւ · և են այնք՝ որք միակերպ խօսին ։

ԵԷՔՋԷՏԷ يكزده * Մի տող · Պիր ատըմ

ԵԷՔԷԹԱԶ يكتاز * Միանձնակահի · Եա-լընըզ ալըճը որ և ասի ԵԷՔՍՈՒՎԱՐ · կամ ԵԷՔԷՍՈՒՎԱՐ ։

ԵԷՔԷՆՏԱԶ يكنداز * Նշանա" զայն նետն · զոր ձգեալ 'ի Թշնամիս և յերես, ոչ գնան զհետ նր · Թուրքերէն Թիւրքի չէգօնըր ։

ԵԷՔԹԱ يكتا * Միայնակ · Եալըննըզ ։ Նաև միակտուր · Պիր գաթ ։

ԵԷՔԹԷՆԷ يكتنه * Մենամարտիկ · այ-անիքն այր քաջ և կորովի · որ վա միայնակ գնալոյ նր 'ի մարտ պատերազմի, ասի ԵԷՔԹԷՆԷ · Տիլավէր վէ պէհատըր ։

ԵԷՔԻՑՆ يكين Է տեսակ ինչ բազմաճիւղ ուռհանի · Պիր նէվի աէյահան պիւդագ չօգ պուտագլըլ օլուր ։

ԵԷՔԻՈՒՆ يكون * Տե՛ս ԵԷՔՍՈՒՆ ։

ԵԷՔԿԻՈՒՆԷ يكگونه * Միակերպ · Պիր տիւրլիւ ։ որ և ասի ԵԷԿԻՈՒՆԷ · վասն Թեթև արտաբերութեան ։

ԵԷՔՄԱՀԷ يكماهه * Նշանակէ միամ-սեայ · Պիր այլըգ ։

ԵԷՔՄԷՐՏԷ يكمرده * Միոյ առն բա-ւական · կամ ըստ չափու կարեաց միոյ առն · Պիր ատամլըգ ։ զի ասի 'ի Կիւլիսթանի, Ջէր նէ տարի, նէ լիւզում րէֆիլ պէ չօր էչ տէրէ · չօրի տէհ մէրտէ ելի՞ պէչէ, չէրի էէքմէրտէ պիեար ։

ԵԷՔՆԷՎԷՐՏ يكنورد * Մի կերպ · կամ մի տարազ · Պիր տարիք վէ պիր խաւըշ ։

ԵԷՔՆԻՑՏԷ يكنيده * Քաջութի կամ յաղթութի · Եէնիլմէզ վէ շէճաաթ ։

ԵԷՔՇԷՆՊԻՀ يكشنبه * Միաշաբաթ · կիւրակէ · Պազար կիւնի ։

[illegible]ԵԷՔՇԷՆՊԷ یکشنبه * Միաշաբաթոյ իր որ [illegible]. Պիր կիւնտիւզ նէտանէ. զի ասի Մահէ էէ․ [illegible] ․ ըստ այնմ, Չոռ մահէ եէքշէնպէ էշ չէշմէ [illegible] քիւֆրան էօլ ․

ԵԷՔՉԷՆՏ یکچند * Քանի մի. Պիր գաչ.

ԵԷՔՉԷՆՏԻ یکچندی * Սակաւ ինչ ժամանակ. Պիրէշ չէման.

ԵԷՔՉԷՆՏՊԱՐ یکچندبار * Քանի մի անգամ. Պիր գաչ քէրրէ.

ԵԷՔՉԷՇՄ یکچشم * Նշանակէ միականի. Պիր կէօզլիւ. արաբերէն Աէէր.

ԵԷՔՊԱՍԷՐԷՔ یکباسرک * Տես ԵԷՔ-ՊԱՐԷԿԻ. և ԵԷՔՍԷՐ.

ԵԷՔՊԱՐ یکبار * Միանգամ. Պիր քէրրէ. նաև մի բերան. Պիր էէռէ. որ և ասի ԵԷՔՊԱՐԷ.

ԵԷՔՊԱՐԷԿԻ یکبارکی * Միանգամայն. Պիր օղուրտան.

ԵԷՔՊԷԵԷՔ یک بیک * Մի առ մի. Պիր պիր. կամ թէ մի ըստ միոջէ. զի ասի Պիրտան էէք պէ էէք հօլմալըքտէն մէն.

ԵԷՔՊԷՍ یکبس * Միանգամ. Պիր փէֆամ. Թէպէտ ըստ բառդութեան ցուցանէ մի բաւական. Պիր էէլէր. որ և ասի ԵԷՔՊԷՍԻ. ըստ այնմ, Պէ ճէնկի մէթէան խավիտան էէքպէսի, Պէտեյն տըշմա քէշտան մէն էմ խօտ բէսի.

ԵԷՔՊԻՆ یکبن * Է սա տեսակ ինչ մանրատերև ուռենի. Եարբոգնէրի ոսկոխէք քեօտէլէն. քի պիր քեօքօթէ օլուր. Թուրքերէն պէյ պէօրքի. Այս բառ գրի և ս یکبنی Եէքպէնի.

ԵԷՔՐԷՀ یکره * Միանգամ. Պիր էօլ. պիր քէրրէ. որ և ասի ԵԷՔՊԱՐ.

ԵԷՔՍԱԼԷ یکساله * Նշանակէ միամեայ. Պիր էաշընտէ.

ԵԷՔՍԱՆ یکسان * Հաւասար. Պէրապէր. և մերթ հարթ. որ է Տիւզտիւզ. 2. Միշտ. հանապազ. Հէմիշէ կէ պէրտէվամ. որ և ասի ԵԷՔՍԷՎԱՆ.

ԵԷՔՍԱՆ ՆԷ ՊԱՇԷՏ یکسان نباشد Հաւասար ոչ լինի. Պէրապէր օլմազ.

ԵԷՔՍԷՎԱՆ یکسون * Տես ԵԷՔՍԱՆ կամ ԵԷՔՍՈՒՆ.

ԵԷՔՍԷՐ یکسر * Միանգամայն. Պիր օղուրտան. և ևս նշանակէ ՚ի միոյ ծայրէ ՚ի միւս ծայրն. Պիր պաշտան պիր պաշէ.

ԵԷՔՍԻՒՎԱՐ یکسوار * Տես ԵԷՔԷ-ԹԱԶ. որ և ասի ԵԷՔԷՍԻՒՎԱՐ.

ԵԷՔՍԻՒՎԱՐԷ یکسواره * Նշանակէ միաձի հեծեալ. Թուրքերէն Պիր աթլը.

ԵԷՔՍՈՒ یکسو * Մի կողմ. Պիր դարաֆ. պիր ճանիպ.

ԵԷՔՍՈՒՆ یکسون * Տես ԵԷՔՍԱՆ. որ և արտաբերի ԵԷՔՍԷՎԱՆ.

ԵԷՔՎԱՐ یکوار * Տես ԵԷՔՊԱՐ.

ԵԷՔՎԻԺԷ یکوژه Մի թիզ. Պիր գարըշ.

ԵԷՔՏԱՆԷ یکدانه * Է գուհարն. որ է աննըման և անհանգէտ. և թարգմանի միահատ. Օւ միւհէրէ տիրշէր քի պիրպաշ վէ պինազիր օլա.

ԵԷՔՏԷՄ یکدم * Մի պահ. Պիր լահզա. որ և ասի ԵԷՔՏԷՄԷ.

ԵԷՔՏԷՄԷ یکدمه * Նոյն է ընդ վերնոյն. այլ և նշանակէ միաշնչական երգեցումն երկուց կամ երից արանց. Աղաշ էշէ էքի էա իւչ ադէմ պիրտան էշլէմէք.

ԵԷՔՏԷՍԹ یکدست Այսինքն ձեռք մի. զի ասի Եէքտէսթ ճամէ. որ է ձեռք մի հանդերձ.

ԵԷՔՏԷՏ یکدد * Մի տող գիր. Պիր սադըր եազը.

ԵԷՔՏԻԼ یکدل * Այսինքն միասիրտ. որ է միախոհ. Միւթթէֆիգ.

ԵԷՔՏԻՅԿԷՐ یکدیکر Նշ" միմեանց կամ իրերաց. Պիրպիրինին. որ և ասի ՀԷՄՏԻՅԿԷՐ.

ԵԷՔՏԻՅՆԱՐ یکدینار * Մի դենար. Պիր մանգըր.

ԵԷՔՐԱՆ یکران * Է տեսակն ձիոյ. որ կոչի Գուլա աթ. բայց պարզապէս ցուցանէ զձի որ և իցէ. Մուդլագ աթ.

ԵԷՔՐԷՆԿ یکرنک * Միագոյն. Պիր րէնկ նէտանէ. որոյ հակակայն կոչի Րէնկէարէնկ. որ է գոյնզգոյն. Դարձեալ բառս ԵԷՔՐԷՆԿ, ցուցանէ պարզ և աննենգ. Սադէտիլ.

ԵԷՔՐՈՒ یکرو * Միակերպ կամ միադէմ. որ և ասի ԵԷՔՐՈՒՅԷ. զի ասի, Սիւլէյմանտան հէմ գիւշիւն չէյրէ, Տէմին պէ տէմին պէ տէհէնտէ, էա էէքրույէ գէօտէ քէօր քէմէնտէ.

ԵԷՔՐՈՒԶ یکروز * Մի օր. Պիր կիւն. ըստ այնմ, Սադէտա նէ հէր պար չէշմէ պէրպէրէտ, Իսֆէնտէ քի էէքրուզ քէշէնտիշ պէտէրրէտ.

ԵԷՔՐՈՒԶԷ یکروزه * Նշանակէ միօրեայ. Պիր կիւնլիւք.

ԵԷՖԷԹ یفت * Չառամացեալ ծեր. Փիր ֆանի.

ԵԷՖԷՆ یفن * Յոյժ ծերացեալ. Փիրէ ֆանի. է բառ ընկերական. որ և ասի ԵԷՖԷԹ.

ԵՒՖԹԻՆՃ يفتنج * Դաժան օձ. Եավրուշ ֆէյլան.

ԵՒՒԼԷ يل * Փրկանք. արդիւ" Քէֆա. Իւ այնմ, Քէօնէմ հէյրէ տօրէմ դէր իշտան էիւրէ. Կէյիքըն շէ նէյըն էէնէ ֆէյշէւրէ.

ԵՒՒՄԿԵԱՆ يمكان * Է անուն աւանի միոջ, յաշխարհին Պէտախշանու 'ի կողմանս Քեաշղէր քաղաքի. Պէր գասապա ատը տըր.

ԵՒՒՆԻՑԼՈՒ يينلو * Վաճառականըն առաւարութեան յիւրաքանչիւր եօթնեկի. Հէֆթէ պաշարը պազարըղը էէր.

ԵՈՒԵՈՒ يويو * Է Թռչուն ինն, Թուրքերէն Մայիէշ.

ԵՈՒԶ يوز * Է որսորդական կենդանին. որ կոչի հայ" յովազ. Թուր" Փարս. և արդ" Ֆէհէտ որոյ որսն յատուկ է Թագաւորաց. 2. Որմնուձ կամ հեռազօտութ. Հէօքիէն. և առաւ բարդի բա ռըս ՈՒԶՄԵՈՒԶ. 3. Կոչի Եուզ և այն հեռա զօտող շունն զայլըր անուանել. և այս անուն եդեալ է նմա, վս հեռազօտելով գտանելոյ նր զորսն.

ԵՈՒԶԷ يوزه * Որսական շուն. Շէյէար քէօփէյ.

ԵՈՒԶԷԼ يوزل Շնակ կամ շնիկ. սկուկ. և է սա տեսակ ինն փոքրիկ շան, որ կոչի Թուր" քերէն Մօըլը. Պէր նէվ քէօփէյ քէօփէյ տըր.

ԵՈՒԶԷՔ يوزك * Է սա նուազականն բառին ԵՈՒԶ. այսինքն յովազիկ. և և նշանա կէ զայն որսականն շունն. որ կոչի Զաղար.

ԵՈՒԶԻՑՏԵՆ يوزيدن * Որսնել. Աւտըրլըմագ. այսինքն հեռազօտել.

ԵՈՒԶՂԷՆՏ يوزغند * Գործուածս մարդոյ և յովազի. Աւէմ վէ փարս ռվէշի, վէ հայվըրլըմաքը.

ԵՈՒԶՊԱՆ يوزبان } Պահօղ և սնուսն ցօղ յովազի. որ Թուրքերէն ասի Փարսճը.
ԵՈՒԶՏԱՐ يوزدار }

ԵՈՒԺԷ يوژه * Տես ԵՈՒԶԷ.

ԵՈՒԼԱԽ يولخ * Տես ԽԵՐԱԿ.

ԵՈՒԽԷ يوخه * Մեկնի Թուրքերէն Նէօ հայէքլը մշշէքլը պէլէֆէ իշէշմէք.

ԵՈՒՀԷ يوهه * Է Թռչունն այն. որ Թուրքերէն կոչի Տէմէ-ձի գօշու. որ և ասի ԵՒՒՀԷ. և ԵՈՒՀ. և ԵՈՒՀԷՐ.

ԵՈՒՂ يوغ * Լուծ. Պօյունտուրըգ. զոր անցուցանեն 'ի պարանոցս լծածից և սայլաքարշ եզանց. Իւմ, Կէր եյտան վէ ֆէրշէ Ըէա նէրայէմ փէօ րսաշ. Տէօրսաշ էօփէր ալէօ սէրէ Մըն պէ էտաշ.

ԵՈՒՃ يوج * Է կենդանի ինն սողուն. Եէր խաշէրէնտէ սէօրէանէօզ էէօրէօր պէր ձանէվէր տըր.

ԵՈՒՑԷ يوسه * Նշանակէ ինչ կամ տենչ. Արզուլէնտէ. բառ այնմ, Զէ դէօ էօայէ ֆէնտէր տէմէ շահ պաօտ, Տէրէյէ Գէօրամէօշէր էօնտ շօտօ. և դարձեալ ասի յայսմ տառանտորի Թէ, Զէօ մէրօ էօայէն տէրէէօհէ Ըէօ էէյշէօ շէ՞ մէօնէմ. տէհէ ամօշ տէհէ րօ էօ էշէյն շէմ դէօտէհան.

ԵՈՒՆ يون * Նուաղականն. Քիւլմ. 2. Նոյն է ընդ բառին ՆԷՄԷՑԶԻՑԻՆ որ է Թէ ֆէըմէ. և ևս բառս ԵՈՒՆ, նշանակէ զայն. Ըէնք. և առաւ բարդի բառն ԱԶԷՐԵՈՒՆ.

ԵՈՒՆԱՆ يونان * Է անուն գաւառի և ազգի միոջ որ կոչի Եունանի. այսինքն յունա կան. Աղեքսանդր Մակեդոնացին զոլով 'ի նմին ազգէ կոչի Իսքէնտէրի Եունանի. Պէր վէլայէթ վէ պէր միլլէթ ատը տըր.

ԵՈՒՇ يوش * Պղտոր. Պուլանըգ. Քիրլի. 2. Որմնուձ և քննութ. Հէօքիէն վէ Ըէֆթիշ հէտ էյլէմէ.


ԵՈՒՊ يوب * Սփռոց. Պէսաթ վէ Քէրշ.

ԵՈՒՊԷ يوبه * Իղձ կամ տենչ. որ և ասի ԱՐԶՈՒՄԵՆՏԻ. որոյ բայն լինի Եօայէյտէն. որ է ըղձալ կամ տենչալ.

ԵՈՒՊԷՐԷ يوپره * Նոյն է ընդ վերինն. որ և ասի ԵՈՒՑԷ.

ԵՈՒՄԷ يومه * Նշանակէ աղոց. Պէէօ փօշ. որ և ասի ԵՐՐԷ.

ԵՈՒՔԵԱՆ يوكان * Արքանին մօր. Ռահէն ատը տըր. որ և ասի ԶԻՀՏԱՆ.



ԶԱ

Զ Ա ز * Է Թեթևացուցեալ 'ի բառէն Զատ. որպէս Մէյտա.

ԶԱԶ

ԶԱԶԱԼ زازل * Է Թռչուն ինչ օտա րօրմէ, որ Թէքէմէնէյէ 'ի գետին՝ տանեն, ոչ ունի

... երկին անգամ Թաշելոյ • Պէր սխյան գոզղ... ...

ԶԱԶԵԼ زازل * Նշ" քամոց ծակոտկէն • որ է որդ սկաւառակ կազմեալ 'ի պղնձոյ, զոր 'ի գործ ածեն խոհարարք և հրուշակագործք • որ և ասի ՓԱԼԱՎԷՆ և ՐՈՒՂԷՆՓԱԼԱ ։

ԶԱԼ زال * Է սա անուն հօրն Րիւսթէմայ քաջի • և որդ Րիւսթէմի յանուն հօր իւրոյ կոչի Րիւսթէմի զալ • Նոյնգունակ և հայր Նորա Զալ, որ և կոչի Տէսթան • յանուն հօր իւրոյ Սամայ, անուանի Տէսթանի Սամ ։ Եւ գիտելի է զի բուն Նշանակութի Զալ բառին, է ծեր բազմամեայ • և քանզի վերոյիշեալ Զալին ալեհասակ էին հերք և յօնք և արտևանունք 'ի ծնանիլն 'ի մօրէ իւրմէ, Նորին աղագաւ անուանեցաւ Զալ Րիւսթեմ ծնեանելոյն հետեւր ...

ԶԱԼԻԶԵՐ زالزر * Է անուն հօրն Րիւսթէմայ քաջի • որ Նախագոյն էր Զալ ... և յետոյ 'ի բաց բարձեալ տառն Տ, ասացաւ ԶԱԼԻԶԵՐ ։

ԶԱԼԻՄԵՏԱՅԻՆ زال مداين * Է անուն այնր պալատոյ, որ ունէր տուն 'ի մէջ այնր շինուածոյ որ կոչիւր Դ... ... • զոր ոչ եա Նուշրէվան արքայի • և արքայն ևս ոչ առնլով զտունն յանիրաւի 'ի ձեռաց Նորա, այնպէս եթող ։ Պէր գօծա գորշնէն ... ։

ԶԱԼՈՒ زالو * Տե՛ս ԶԷԼՈՒ • և Նշա" տզրուկ • Թուր" Սիւլիւք ։ որ և ասի ՏԻՅՎԶԷ ։

ԶԱԽԻԼ زاخل * Է ծառն այն՝ որ կոչի Զագուալ ... ։

ԶԱԽՄ زخم * Նշ" խոց և վէրք, որ լի Նի 'ի զէնուց պատերազմի ։ Եարէ • Ճէրահէթ ։ ... Զէնէոմի ... ... • ... և երկրորդ սպիտակ եղն • Ահմայի ... ։

ԶԱԽՄԷ زخمه * Է այն գործին՝ որով հարկանեն զնուագարանս • որ ասի հայերէն կնդնոց • և արաբերէն Միզրապ ։

ԶԱԽՄԻՑՆ زخمين * Խոցեալ • վիրաւոր • Եարէլի ։ որ և ասի ԶԱԽՄՆԱՔ ։

ԶԱԽՄԽՕՐՏԷ زخم خورده * Վիրաւորեալ կամ խոցեալ • Եարէլէնէն ։

ԶԱԽՄՆԱՔ زخمناك Տե՛ս ԶԱԽՄԻՑՆ ։

ԶԱԿԵԱՊ زاكاب * Թանաք • Միւրէքքէպ որ արաբ" ասի Հիպր • Նաև Միտադ • է բառ բարդեալ 'ի բառից ԶԱՔ և ԱՊ • և Թարգ" Արջասպ ջուր ։ որ և Թեթևացուցեալ ասի ԶԷԿԵԱՊ ։

ԶԱՀԷՐԻ زاهری * Անուշահոտութի • խօշ գօգու ։

ԶԱՂ زاغ * Սեաւ ագռաւ • Սիյահ գարղա • արաբ" Ղուրապ ։ 2 • Անկիւն աղեղան • քէմաշ չէ ... այսինքն է այն տեղին աղեղան՝ յոր անցանէ լարն • այսինքն Քիրիշն ։ 3 • Է անուն երաժշտական եղանակի միոջ • Մուսիգիէի պէր ... ։

ԶԱՂԷՆ زغن * Ցին • Չայլագ • որ և ասի ՂԱԼԻՅՎԱՃ ։

ԶԱՂԷՆԿԻՑՏԷՆ زغنكيدن * Հեծկլտալ • Ինճիլէմէք ։

ԶԱՂԷՆՔ زغنك * Հեծկլտումն • Ինճգըրըգ արաբերէն Ֆիւվագ ։

ԶԱՂԻՃ زاغج * Տե՛ս ԶԱՂ • որ է սեաւ ագռաւ • Գարա գարղա ։

ԶԱՂԼԷՔ زغلك * Տե՛ս ԶԱՂԷՆՔ ։

ԶԱՂՆՈՒԼ زاغنول * Է երկաթ ինչ կեռածայր • որով փորեն զգետին • Գազմա ... • որպէս Թալըգմանի և պարսկականն ։

ԶԱՂՓԻՑՍԷ زاغ پيسه * Խայտ ագռաւ • Ալա գարղա ։

ԶԱՃ زاج * Նշա" կին՝ որ զկեռ Նորոգ բերեալ, այսինքն ծնեալ է զմանուկն • Լօխուսա ։ ... Տէճայէ ... ։ 2 • Արջասպ, որ է սեաւ Ներկ ինչ • Գարա պօյա • որ և ասի ԶԱՔ ։

ԶԱՃՍՈՒՐ زاجسور * Է ուրախութին զոր 'ի ծնանիլ կնոջ ուրուք, կանայք ժողովեալ առնեն, առնեն իբր հարսանիս ինչ • որդ և բարդութի բառին ցուցանէ • զի է բաղկացեալ 'ի բառից ԶԱՃ • և ՍՈՒՐ ։ Թուր" Լօխուսա ...

ԶԱՄԻՑԱՏ زامياد } Է անուն 28 •
ԶԱՄԻՑՆԱՏ زاميناد } երրորդի աւուր իւրաքանչիւր արեգակնային ամսոյ ։ 2 • Է անուն հրեշտակի միոջ, որ կարգեալ է 'ի վերակացութի կառավարութե իրողութեց վերոյիշեալ աւուրն Զամիյնատայ • որ և ասի ԶԷՄԻՅՆԱՏ ։

ԶԱՄԻՑՄ زاميم * Մեծ գետ • Պիւյիւք Եըրմագ • որ և յաւելմամբ միոյ Տառի ասի և ԶԱՏՄԻՅՄ ։

ԶԱՅ زای * Է հրամայականն Զադէն բային • որ և բարդի որպէս Մէյբշայ ։

ԶԱՅԱՆԻՑՏԷՆ زاياندن * Է անցո" Զադէն բային և Նշ" ծնուցանել • Տօղուրմագ ։

ԶԱՅԷՆՏԷ زاينده * Ծնանող • Տօղուրըճը ։ և է սա Ներգոր" ընդունա" Զադէն բայինն ։

ԶԱՅԷՆՏԷՐՈՒՏ زاينده رود * Տե՛ս ԶԷՆՏԷՐՈՒՏ ։

ԶԱՅԻՇ زايش * Է բայածականն Զադէն բային, և Նշանակէ ծնունդ • Տօղուշ ։

ԶԱՅԻՏԷ زايده * Ծնեալ • Տօղմուշ • և է սա կրաւորական ընդունելութին Զայիդէն բայինն ։

ԶԱՅԻՏԷՆ زايدن Ձիթենի. Տօղուրմագ.

ԶԱՅԻՏԷՐՈՒՏ زايدەروو * Նոյն է ընդ բառին ԶԱՅԷՆՏԷՐՈՒՏ. զոր տեսցես 'ի բառն ԶԷՆՏԷՐՈՒՏ.

ԶԱՅԿԷՐ زايكر * Ծննդագործ. Տօղուրճի. թէ մարդ և թէ այլ կենդանի. որ և ասի ԶԱՅԷՆՏԷ.

ԶԱՆ زان * Նոյն է Ը բառին ԷԶԱՆ. զի է համառօտեալն նորին. և նշանակէ յայնժամ. Անդէն. գոլով սկզբնականն ցուցական դերանուանս Ան.

ԶԱՆԷ زانه * Է կենդանեակ ինչ Թռչական, որ լինի 'ի բաղանիս. Պէյ բէօչէսի. Տէրէնտէ պիւլպիւլ պէօրէ.

ԶԱՆԻՄԱ زانما * Նշ", կա մեր, Պէյտիմ պեկլէմ. զի ասի, Նէ գաչանտա զանիմա պէյլէրտիլէր ասա. այսինքն, ոչ լինի կա մեր բարի յայնմ կողմանէ.

ԶԱՆԻՅՃ زانچ * Բնակութիւն հայրենեաց. Վաթան.

ԶԱՆՄԱ زانما * Է սա բառ ինչ բաղադրեալ 'ի բառիցս Զան ևս. և նշ" յայնժամանէ մեզ. զի ասէ Զանմա չըգտը նէ իչ րէսէտ. յայնժամանէ մեզ իր ինչ ոչ հասանէ. Անդէն պէրտէ նէտէնէ էրէշմէտ.

ԶԱՆՈՒ زانو * Ծունկն. Տիզ. արաբերէն Րիւքպէ. և չէզ" Թիզ. 2. Մեծարանք. Թաղէյիմ.

ԶԱՆՈՒԶԷՏԷՆ زانوزدن * Ծունր դընել. և նշանակէ մեծարել. Թազէյիմ էթմէք. հրամայական Զէն. և ապառնի Զէնէմ.

ԶԱՆՈՒՅՔԵԱՀ زانوی كاه * Համադասք ըն ոճից ցորենոյ և գարւոյ. Պուղտայ վէ արփա սափրընըն սիւյիւմլէրի.

ԶԱՆՍԻՓԷՍ زانسپس * Յետ այնորիկ. Անդէն սօնրա.

ԶԱՆՍՈՒԹԷՐ زانسوتر * Փոքր մի յայնկոյս. Էօթէրէք.

ԶԱՆՐՈՒ زانرو * Յայն սակս. Օ էօղուտէն. Ըստ, Հալփա պիլիր քէրէմլէ Րէմազանը նէմէհար, զան րու քի րուզը փէրուհէրէն էզ նէմէհար տէհ.

ԶԱՋԷ زاچه * Դեռածին մանուկ, մինչև 'ի լինել եօթնօրեայ. Հէնիւզ տօղմըշ չօճուգ.

ԶԱՊ زاب * Աղբիւր. Չէշմէ. և Թորուն ջրոյ, որ յորմանց տեղեաց բղխեալ ելանէ. Սըզընտը. և է համառօտեալ 'ի բառէն Զէհապ. ըստ այնմ, Զի հալբէմ ձան էս տէր պիլիր իչինէ. Քիւ էշքի շէմի քիրէտն շաղ իչինէ.

ԶԱՊԻՒԼ زابل * Է անուն աշխարհին Սիստանու. որ և ասի ՆԻՅՄՐՈՒԶ. Նաև ԶԱՎԻՒԼ. և է սա գաւառն Րիւսթեմայ քաջի. Նամի Վիլայէթի Սիսթան.

ԶԱՊԿԷՐ زابكر * Է այն ոք՝ որ զԹուրծն իւր օդով լցեալ և երկու մատամբքն իւրովք հարեալ, եղանակաւ ինչ ձայն հնչեցուցանէ. որ և ասի ԶԱՊԼԻՒՐ. և ԶԷՊԿԻՒՐ. և ԶԷՊԼԻՒՐ.

ԶԱՍԹԷՆ زاستن * Ծնանիլ. Տօղմագ. Ներգործականապես. որ և ասի ԶԱՅԻՏԷՆ. և 'ի գործ ածի թէ 'ի ծնունդ մարդոյ. և թէ 'ի ծնունդս այլոց կենդանեաց.

ԶԱՍԹԷՐ زاستر * Փոքր մի յայնկոյս. Էօթէրէք. այսինքն հակամիտեալ յայն կողմն. և էր սա նախադասն Զանսութէր, և անուն համառօտեալ.

ԶԱՎ زاو * Նախ նշ" շինօղ. Եափըճը. Պինա. 2. Ուժեղ և զօրեղ, Գուվլի վէ շէտիտլի վէ գըվվէթլի. 3. Տես ՇԻՔԵԱՔ.

ԶԱՎԷ زاوه * Ողբ և հեծութիւն. Զարը վէ նալէ.

ԶԱՎԷՍ زاوس * Տես ԶԱՎԷՐՍ.

ԶԱՎԷՐ زاور * Սպասաւոր. Խըզմէթքեար. 2. Արուսեակ. Զիւհրէ. որ է մին 'ի յեօթանց մոլորակաց. 3. Զօրուն և կարողուն. Գուվվէթլի վէ գաատըր. 4. Հեծանելի կենդանի. որպէս ձի. ջորի. էշ. ուղտ և նմանք.

ԶԱՎԷՐՍ زاورس * Արուսեակ. կամ լուսաբեր. Զիւհրէ եըլտըզը. Թուր" Սապահ եըլտըզը. այսինքն առաւօտին աստղ. զի ծագէ մերձ 'ի սպաս առաւօտուն. որ և ասի ԶԱՎԷՍ, և ՆԱՀԻՅՏ.

ԶԱՎԻՒԼ زاول * Նոյն է ընդ բառին ԶԱՊԻՒԼ. և է սա գաւառ ինչ. որ Սիստան և Նիմրուզ ևս ասի. և է գաւառն Րիւսթեմայ քաջի. Պէյ Րիւսթէմին աթա եէրի.

ԶԱՎԻՒԼԱՆԷ زاولانه * Ոտնակապ երկաթի. Թուր" Պուգաղու. որ և ասի ԶԱՎԼԱՆԷ. Ըստ, Տէր ան վագթ քի մահփէսի էէյէանէ. Զէրտէ պէր դաշէ էօղէշ շավլէյան. և ուրեք մեկնի մանրուք ոսկւոյ խարտոցի. Ալթուն էէթոզու.

ԶԱՎԻՒԼԻՍԹԱՆ زاولستان * Է անուն գաւառին Սիստանու որ և երբեմն բարձմամբ մասնկամբս Իսթան կոչի Զապէւլ. Նաև Զավէլ.

ԶԱՎԻՅԷ زاويه * Անկիւն. Քէօշէ. և մերթ ցուցանէ Թէքքէ տեկվիշաց. է բառ ար".

ԶԱՎԻՒՐ زاوش * Է անուն մոլորակ աստեղն. որ կոչի փայլածու. և արաբ" Ութարիտ. որ ուրեք մեկնի նշանակիչ լուսնթագ, որ է Միւշթերի. Ըստ, Քէշէքի սափի էօլ շավուշ րա. Տէհէնտէ էօլ հէր բանէշ էս հուշ րա. որ և գրի ԶԱՎԷՐ և ԶԱՎՈՒՐ.

ԶԱՎՏԻՒՐ زاودش * Փայլածու. Ութարիտ որ և ասի ԶԱՎԻՒՐ և ԶԱՎՈՒՐ.

ԶԱՏ زاد * Անք կենաց. Էօմր. արաբ" Սինն. վա որոյ այր բազմամեայ կոչի Պէրզատ. 2. Զարմ և ցեղ. Նէսլ. զի ասի Մէրտէմզատէ.

... թուղթ։ 3. Նոյն է ընդ բառիցն ԱԶԱՏ և ԱԶԱՏԷ. 4. Նոյն է ընդ բառին ԹՈՒՐՇԷ. և ... բառ արաբացւոց։ 5. Է անցեալ ժամանակի ... դէմ Զադէն բային, և նշանակէ ծնաւ. Տօղուրտու։ որ և մերթ 'ի գործ ածի 'ի տեղի ա-նցելոյն բայի. զի ասի Մէ Բիւզանէտ զաւ. այսինքն կարէ ծնանիլ։

ԶԱՅԷ زايه * Է կրա՛ ընդունու՛ Զադէն բային. ծնեալ. Տօղմուշ։ որ և բաղդի ընդ Շէհզադէ և Էմիրզադէ. և Թարգ՝ արքայածին. և իշխանածին։

ԶԱՅԷՆ زاين * Ծնանիլ. և է բայ հա-սարակ. Տօղմագ վէ թօղուրմագ։ արպ՝ Թէվէլլիւտ։ և չէզ՝ Թօղմագ։ բայց այս ոչ հասարակ է 'ի մեզ Է ներգործականին և Է կրաւ՛, նոյնպէս է և 'ի լեզուին պարսից։ և ո՛ր հր՝ լինի Զայ. և ապառ՝ Զայէդ։

ԶԱՅԷՇԻՒՏԷՆ زايشدن * Ծնեալ լինել. Տօղմագ։ ոչ գրի 'ի գիրս աւանդաց թէ, Կիւտգիւ էնտէ վէ չիւն վէտէ էքլէր էր մէյլէր քա ծիւտգիւ օաշէս, քէրրէնտի վէ էշէրշն շարք չէվէկ վէտաշէ խասէր գատ։ այսինքն Աստեղատունն թէ մինչ ոք զուգաւորել անուանացուցանէ պճառն եթէ և մի թէ, զաւակն որ 'ի նոցունց ծնցի՝ լինիցի երանի թէ։

ԶԱՅԽԷՍԹ زادخست * Ծեր բազմա-մեայ. Փիյիր գօճա խօրթ։ և ոմանք ասեն նշանա-կել կարճահասակ. Գասիյիրէշ գամէ։ և այլ ուր ասի՝ թէ նշանակէ սակաւակեր մարդ. որ վասն սակաւակերութեանն՝ տկար և նիհար իցէ։

ԶԱՅԽԷՐ زادخور * Ծեր բազմամեայ. Չօգ եաշամիշ. փիյիր գօճախօրթ. այսինքն այն որ իցէ շատ ապրել, թէ մարդ և թէ այլ ոք 'ի կենդանեաց։

ԶԱՅԽՈՒ زادخو * Ծեր և զառամա-ցեալ. Փիյր վէ քէրփիւր։

ԶԱՅՂԷՐ زادغر * Բողոծին. Բօսպի օղլի։

ԶԱՅՄԷՐՏ زادمرد * Ազատաբարոյ. Աշրաֆլէրտէն վէ Ճիվանմէրտլէրտէն։

ԶԱՅՄԻՅՄ زاديم * Տես ԶԱՄԻՅՄ. և նշանակէ մեծ գետ. Պիւյիւք ըրմագ։

ԶԱՅՇԷՄ زادشم * Է անուն հօրն Էֆրասիյաբայ. Իսմի խաս փէտէր։

ԶԱՅՊՈՒՄ زادبوم * Բուն հայրենիք. Վաթանի աս. որ և ասի ԶԱՅՊՈՒՏ։

ԶԱՅՍԷՐՎ زادسرو Տես ՍԷՐՎԻԱԶԱՏ։

ԶԱՐ زار * Հեծեծօղ. Ինիլէյիճի։ և ա հե-ծեծանք. Ինիլէմէք։ 2. Է մասնիկ ածանցականի, և ցուցանէ զտեղի զի ասի Կիւլզար. Չէմէնզար. Մէնէքշէզար. և Կէլզար. վ/ե զի վանկս ԶԱՐ նման է ածանցականակերպ մասնկանն ԻՍԹԱՆ, և զու-ցէ թէ մերձ է 'ի նշանակութի նոր. զի ոչ ասեն ԶԷՄԷՆԻՍԹԱՆ, նոյնպէս ասեն և Չէմէնզար և նշ՝ զնոյն վանկս Զար, որ ինչ նշ՝ Թուր՝ Լըք. կամ Լըգ. զոր օրինակ Քէլլէզար արտորայք. Թուր՝ Էքինլիք. սոյնպէս են և բառքս Սէրզէ-զար. և Կիւլզար. և Մէնեխիւլզար. և Լալէզար և այս է զանազանութի. զի մինչ ասի Կիւլիստան, նշա-նակէ տեղի վարդից. Կիւլ էքի։ իսկ Կիւլզար. նշ՝ զտեղի՝ ուր դոյ յաճախութի վարդից. այն-պիսի տեղն և բառքս 'ՆԷՄԷԿԶԱՐ. այսինքն տե-ղի՝ ուր դոյ յաճախութի աղի. Թուր՝ Դուզլուգ. այսինքն աղահանք։ և Շօրէզար. տեղի աղտա-ղոտին. Շօրագլըգ։ 3. Բառս Զար, է կրճատեալ 'ի բառէն Նիզար. և նշ՝ նիհար կամ վտիտ. Արըգ։

ԶԱՐԶԱՐ زارزار * Լալագին պաղա-տանք. Աղլամագ փէրք էլէ. արպ՝ Թէզարրիւ։

ԶԱՐԷ زاره * Տես ԶԱՐ. և ԶԱՐԻ.

ԶԱՐԹԷՐ زارتر * Առաւել հեծեծօղ. Զիյատէ ինլէյիճի։

ԶԱՐԻ زاري * Ողբ կամ հեծութիւն. Ինիլթի. որ և ասի ՆԱԼԷ։

ԶԱՐԻՃ زارج * Տես ԶԻՐԻՇՔ. և նշանակէ ծոր. արաբերէն Էմղէրաւրիս։

ԶԱՐԻՑՏԷՆ زاريدن * Հեծեծել. Ինլէմէք։ նաև հեծեծել տալ. Ինլէթմէք։

ԶԱՐԻՑՐ ضرير * Կոյր. Քէօր. ամա։ որ պարսկերէն ՆԱՊԻՅՆԱ. է բառ արեպի։

ԶԱՐԻՔԻՆԱՆ زاری کنان * Տես ՆԱԼԷ ՔԻՆԱՆ։

ԶԱՐԽՕՇ زارخوش * Տես ԶԱՐԽՕՐ.

ԶԱՐԽՕՐ زارخور * Նշ՝ զայն ոք՝ որ խօսի զբան իւր այնպիսի ընդ որում այլ ինչ ևս իմանի. նաև ցուցանէ զայն՝ որ խարդախութի առնէ 'ի գործս իւր. Օլ քիմսէ քի սէօզի նէշտէն վէ իշինտէ հիլէ էյլէր։ որ և ասի ԶԱՐԽՕՇ։

ԶԱՐԽՕՐԻՇ زارخورش * Սակաւակեր կին. Ազ եէմէքլիւ էօյէն աւրէթ։ որ արաբերէն ասի Գոռայէն։

ԶԱՔ زاك * Արջասպ, է սա տեսակ իմն ներկոյ. զոր արապացւոց ցեալ Զաճ կոչեն. Թուր՝ Զաճի Գըզըլ։ և է մասն ինչ 'ի բաղադրութի թանաքին։ ըստ այնմ. Մըղգուրի փաքի սոմղ եաճ մըղգուրի հէր փէ մաղա, Մըղգուրի հէր սէ չաք էաճ բա անշէտ զօր դաղա։

ԶԱՔԻ ԵԷՄԷՆԻ زاك يمني * Պաղլեղ. որ է Շէպ։

ԶԱՖԷ زافه * Է անուն ծանրահոտ խո-տոյ լիրիք. Կիւմիւշէն։

ԶԱ՛ՖՐԱՆ زعفران * Է բառ արեպի քրքում. որ պարսկերէն ասի ԿԻՒՐԿԻՒՄ.

ԶԱ՛ՖՐԻ زعفري * Քրքմագոյն. Զաֆրան րէնկինտէ։ այսինքն է դեղին. Սարը։

ԶԷԹ زت * Մերկ. Չըպլագ. Ճըլըզ։ որ և ասի ՊԻՐԷՀՆԷ.

ԶԷԺԷ ژژه * Տես ՐԷԺԷ. և նշանակէ

զպարանն զայն՝ զոր կապեն ուրեք վասն կախելոյ 'ի վերայ նորա հանդերձս ։

ԶԵԼԼԷ زل ✱ Տես ԶԵԼՈՒ. որ է ադրուկ. Սըվըճագ ։ որ և ասի ԶԵԼՈՒՔ և ՏԻՑԿԶԷ ։

ԶԵԼԼԷՃ زلج ✱ Է Թռչունն այն՝ որ կոչի Թուրքերէն Եէլվէ ։

ԶԵԼԼԷՔ زلك ✱ Տես ԵԽՔԵՐ. կայծ. Քէօշ. Ատէշ. Գօզ ։

ԶԵԼԻՅԼ زليل ✱ Է ձայնն՝ որ ելանէ 'ի փողոյ պարանոցի ակամայ. Պօղազտան իխթիյարսըզ չըգան սէս. աղըզը խըչըգը ։

ԶԵԼԻՅՖ زليف ✱ Երկիւղ. Գօրգու. որ և ասի ԹԵՐՍ ։ Թմ. Եղ Չէնգի Շահ Նու Հէշտարան խամիշ. Վէջ սէրի չիւնքի Նու մէրտ սափ չէհիմգ ։

ԶԵԼԻՅՖԷՆ زليفن ✱ Երկեցուցումն. Գօրգու վէրմէք ։

ԶԵԼԻՅՖԷՆ ՔԵՐՏԷՆ زليفن كردن Երկեցուցանել. Գօրգուլըմագ. հրամայական Քըլ. և ապառնի Քընէմ ։

ԶԵԼԻՅՖԻ زليفي ✱ Երկիւղ կամ ահ. Գօրգու զի ասի Զէհիմգի տըհշէթ. այսինքն ահ տալ. Գօրգու վէրիր. Թմ. Հէր չէշմին օրա չէհիմգի մի տըհշէթ, քիւշիւնէշ յա էմին վար մի տըհշէթ ։

ԶԵԼԻԻԿ زليك ✱ Տզրուկ. Սիւլիւք. Տես ԶԵԼՈՒ. և ԶԵԼՈՒԿ ։

ԶԵԼԼԷ زلّه ✱ Է կենդանի ինչ որ լինի 'ի բաղանիս և 'ի գինոյին տեղիս և է սեւագոյն, և 'ի գիշերի ձայն հանէ. որում Զուրիրինեք ևս ասեն. Պիր ճանլիր տիր ։ Մեկնի ևս թէ Զէլլէ է կենդանին այն, որ ճէրկ ևս ասի և լինի 'ի մէջ արտորեից. և 'ի ջերմային պահու օդոյն 'ի վերայ սեաւ տերևոյ նստելով կանչէ ։ Պիր ճանլիր տիր ։ և ևս 'ի սեղանոյ բաժին բառնալ. և այն բարձեալն ևս կոչի Զէլլէ. բառայինմ, որ ասի ։ Շէհրի եարանի ճիհան էզ տէրէհէշ, չէլլէպէնտ խանի ինամէշ չիւտէնտ ։

ԶԵԼՈՒ زلو ✱ Տզրուկ. Սիւլիւք ։ որում ՏԻՑԿԶԷ ևս ասեն. Ի՞ւ խունի ինիլում էզ չէնտօ տատէ խօպէր. խուտն ամէտ հէր տէմ զի ինիլուշ Նուր զի տէր. Կէր շօրշարէ սաչէ տաղէ խօրտէշ զի նէմէն. չէյշէ նէզիւլէտ Նուրի էշ մի զիհնէր ։

ԶԵԼՈՒՔ زلوك ✱ Տես ԶԵԼՈՒ.

ԶԵԼՖԷ زلف ✱ Տեղի անձուկ և խաւարչային. Մէհզէլ'ի Նէհի վէ Նարիշ ։

ԶԵԼՖԻՑՏԷՆ زلفيدن Սահիլ. Սիւրչմէք

ԶԵԽ زخ ✱ Կակուղ ձայն, և հեծութիւն ողորմագին. Աճըղի Նէրմ վէ Նաշէ հաշին ։ և ևս է ախտ ինչ որ լինի 'ի մարդն և յայլ կենդանիս. հայե՛ կոծիծ. Սիկիլ. և արպ՛ ثؤلول Սիւյլիւլ ։

ԶԵԿԵԱՊ زكاب ✱ Տես ԶԱԿԵԱՊ. որ է Թանաք. Միւրէքքէպ ։

ԶԵՀ زه ✱ Նշա՛ ծնունդ. Թէվէլլիւտ. Զատէն ։ 2. Սաղմն. Նուտֆէ ։ և ասի է զի մինչդեռ է մանուկն յարգանդի մօր, կոչի Զէհ տան ։ 3. Է տեղին, ուստի ջուր բղխեալ ելանէ. Օւ էէրէ տիրլէր քի՝ անտէն սու գայնայար չըգա ։

ԶԵՀԱՆԻՅՏԷՆ زهانيدن ✱ Է անցողականն Զէհիտէն բային. և նշանակէ Թորեցուցանել. կամ բղխեցուցանել ։

ԶԵՀԱՊ زهاب ✱ Թորումն ջրոյ. Սըզըն տը. որ է ելումն ջրոյ Թորելով յամանոյ խեցեկ և յաղբերէ ։ Եւ ևս ցայտումն ջրոյ յաղբերաց և յեզերաց աւազանաց ։ Այլև աղբերակն, Չէշմէ ։ և Թորումն ջրոյ՝ որ լինի յաղբեր. Պինար ։ Վէ պինարտան տաշի սըզընթի ։

ԶԵՀԱՔ ضحاك ✱ Է անուն հուշակաւոր Թագաւորի միոջ վաղնջականի. որոյ անունն 'ի բնէ Տէհաք էր. այսինքն տասնարատեան. Օն այպլը, զոր արտայայտեցուցեալ Զէհաք ասացին. և վասն լինելոյ յերկուսին ուսս նորին 'ի մասանց մսոյ երկուց օձակերպ իրաց, կոչեցաւ ضحاك ماری Զէհաք մարի ։

ԶԵՀԷՆ زهن ✱ Տես ՐՈՒՑ. որ է գետ Իրմագ ։

ԶԵՀԻ زهي ✱ Է սա միջարկութիւն գովական. և նշանակէ վա՜շ. որ և ասի ԽԵՀԻ ։

ԶԵՀԻԷՖԹ زهي افت ✱ Նշանակէ՝ զի՞ բարի. Նէ՞ կիւզէլ ։

ԶԵՀԻՅՏԷՆ زهيدن ✱ Թորիլ կամ բըղխիլ ջրոյ յաղբերէ և 'ի ջրբղխէ. Սու չիզմէտէն չըգմագ. վէ գայնամագ ։ Եւ ուրեք ասի նոյն գուլ ընդ բային ԻՒՖԹԱՏԷՆ ։

ԶԵՀԻՇ زهش ✱ Է սա բայածականն Զէհիտէն բային. և նշանակէ Թորումն. Սըզըշ ։ այսինքն Թորումն ջրոյ և այլոց հեղանիւթից յամանոյ խեցեանց ։

ԶԵՀԻՐՈՒՅ زهي روي ✱ Այս բառ ունի զներհակական նշանակութիւն. քանզի նախ նշ՛ Զի՞նչ գեղեցիկ երես. Նէ՞ կիւզէլ եիւզ. և այս 'ի գովելն ։ Իսկ 'ի պարսաւելն, ցուցանէ զի՞նչ գձուձ երես. որպէս և Թուրքն ասէ Եյի եիւզ ։

ԶԵՀՄԱ زهما ✱ Սիրահար. արպ՛ Աշըգ ։

ԶԵՀՄԷՆ زهمن ✱ Է անուն տան միոջ 'ի Բէյ քաղաքի. Պատմի թէ տէր տանս այսորիկ էր աղքատ ոմն, որ տեսանէ յերազի զի գտանէ գանձ ինչ Թաքուցեալ 'ի Դամասկոս քաղաքի. և յայն սակս յուղի անկեալ երթայ 'ի Դամասկոս և մինչդեռ վտարանդի և տարակուսեալ շրջէր 'ի քաղաքի անդ և 'ի հրապարակս նորին, պատահեաց առն միում. և նա եհարց թէ մ Տէրվիշ յորմէ՞ գաւառէ ես. և զի՞նչ շրջիս 'ի

...տաս տաշեալ և տաշակուռեալ. և առ ...ախանիք ես Նմա, թէ ես եմ 'ի Բէլ քա_ղաքէ. ... տեսի յերազի, զի 'ի Դամասկոս քա_ղաքի սատացողեղէ զանձու ինչ թագուցեալ. և ... 'ի քաղաքս յայս և զնոյն որոնեմ. և ... ասաց, ծիծաղեալ այրն ասաց թէ այս_չափ ժամանակ է զի ես յերազի իմում տեսանեմ, թէ 'ի Բէլ քաղաքի յայս ինչ տան գոյ թագու_ցեալ գանձ. (և ցուցանէ զտունն Ջէհմէնին) և չէ ինձ փոյթ ինչ զայնմանէ և ոչ իսկ հաւատ ընծայեմ. բայց պարզմտութե քում. և իբրև լուաւ Ջէհմէն զբանս զայս, իսկ և իսկ դարձ առեալ և զտեղին' զոր եցոյց Նմա այրն այն, փորեալ և պեղեալ, եգիտ անկան մի ոսկեղէն միաձոյլ, ըստ չափու կշռոյն 30. լտերաց, և ի_մաստուն 'ի կիր արկեալ, եհաս մեծի փարթա_մութեն. ըստ այնմ, Մէն չի րէյ ղէհրի քէնճ ուսյէ թէմիզ, մի րէտէյ. հէմ ճօս ոսհէտի Ջէհմէն. Բէյ շէհրինտէ պիր խանէնին խամի տէօր.

ՋԵՀՈՒ زهو * Աշտ ակնանջայ. Գուշագ սէրի. չէրսի էէուշ.

ՋԵՀՐ زهر * Թոյն. Թուր" Աղու. և արաբերէն سم Սէմ. Երկրորդ հող և տրամու_թի. Դէմ վէ ղոսսէ. Նաև բարկութի և ցասումն. Ղազէպ վէ խըշմ. Իսկ ըստ արապաց բառս Ջէհր, Նշանակէ ծաղիկ, թէ իցէ ծաղիկ ծառոյ և թէ այլ. որոյ յոգնականն լինի ازهار Էզհար որ է ծաղկունք. Չիչէքլէր.

ՋԵՀՐԱԼՈՒՏԷ زهرآلوده * Թունաշա_ղախ. Թուրքերէն Աղուլու.

ՋԵՀՐԱՄԻՑՋ زهرآميز * Թունա_խառն. Աղու իլէ գարըշըգ.

ՋԵՀՐԱՊ زهراب * Է անուն Թռչնոյ ի_րիք. որ Թուր" ասի Սէհէր գուշի. այսինքն ա_ռաւօտեան Թռչուն. վս զի յառաւօտեան պա_հու' յոյժ աղաղակէ. Եւ ևս Նշանակէ զայն ջուրն ոյր Թրջեն զմանս դալարիս և պտուղս, վասն գնալոյ 'ի Նոցանէ դառնութեն իւրեանց.

ՋԵՀՐԷ زهره * Լեղի. Էօթ. արպ" مراره Միրարէ. և է սա հիւթ ինչ 'ի մէջ փոքր մորթոյ իրիք' կից 'ի լեարդն մարդոյ և այլոց կենդանեաց. և է կայարան մաղձի. զոր վս գունոյն կարի ինչ դառն' Նմանեցուցեալ են Ջէհրի այսինքն Թու_նոյ. 2. Այժ և կարողութի. Մէմուլ վէ դագաթ. ըստ այնմ, Ջէհրէ նէ փարէմ քի պէտտուսէմ ըէ_գէթ, Բէյթ իւ քէմաթ փարէտ էդդիռայի Բէս.

ՋԵՀՐԻԱՊ زهرآب * Լօռ. Եշում. որ լինի 'ի վերայ ջուրց.

ՋԵՀՐԻՋԵՄԻՑՆ زهرزمين Տես ԱՋԱՏ ՑԻՑԻՐԱԽԹ. և է սա բառ բնակչացն Կիւրկենու.

ՋԵՀՐԻԿԻՈՒՇ زهركوش * Աշտ ա_կանջայ. Գուշագ սէրի. և այն վասն լինելոյ Նր դառն' շէհր, այսինքն Թիւն կոչեցեալ է.

ՋԵՀՐԻԽԱՆՏ زهرخند * Է ծիծաղն այն'

որ յայտ լինի յումեքէ 'ի պահու արհամարհութե. Օւ խանտէ տէր քի' խօհալլի էյլէշէ ասարը օլուր.

ՋԵՀՐԿԻՑԱ زهركيا * Թիւնախոտ. Աղու օթի. և է սա ծառ ինչ. որոյ դառն են տե_րևն և ծաղիկն, և որ ըք 'ի կենդանեաց ուտէ 'ի սմանէ' սատակի. որ և ասի ՋԵՀՐԿԻՅԱՀԻ.

ՋԵՀՐՄՈՒՀՐԷ زهرمهره * Է այն միւհրէն, որով փարատի Թոյն. Օւ մէհրէ քի անըննէ շէհր տէֆ' օլուր.

ՋԵՀՐՆԱՔ زهرناك * Թիւնաւոր. Աղուլու. զի ասի Մարէ շէհրնաք. այսինքն օձ Թիւնաւոր.

ՋԵՀՐՊԱ زهربا * Նոյն է ընդ բառին ՀԵՆԱՀԻՆ. որ է տեսակ ինչ սատակչական Թիւ_նոյ. Պէր նէվ' շէհրի գալիւ տէօր.

ՋԵՀՐՏԱՏԷՆ زهردادن * Այսինքն Թիւնաւորել. Աղուլամագ.

ՋԵՀՐՏԱՐՈՒ زهردارو Տես ՓԱՏ ՋԵՀՐ.

ՋԵՀՔ زهك * Տես ՔԻՒԼԷ. որ է դալ. Թուր" Աղուզ. և արպ" Լէպա. և Նշ" զառաջին կաթն Նորոգ ծնեալ կնոջ և այլոց կենդանեաց.

ՋԵՂԱՇ زغاش * Հող և տխրութի, որ պատահի ումեք 'ի պատճառս սիրահարութեան. Դէմ վէ էնտուհ.

ՋԵՂԱՎ زغاو * Բող. Փոհէշէ. որ և ասի ԴԻՐ ՎԷ ՌՕՍՊԻ.

ՋԵՂԱՐ زغار * Նեղութի և տառապանք. Սըխընթը վէ մէշագգաթ. 2. Կերակուր. Դաամ. ըստ այնմ, Չէնտան շի ֆէլէքշէլեր տէյտէմ, սաատէ նէ շէհր շէքէր'ի բուզէ. որ և ասի ՋԵՂԵՐ.

ՋԵՂԱՐԱՇ زغاراش * Է այն' որ կարի 'ի շրջանակս մուշտակաց. և կոչի Թուր" Ջաղա_քէ. որ և ասի ՋԵՂՐԱՇ. և ՋԵՂՐԻՅՄԱՇ. և ոմանք մեկնեն Թէ բառս այս ցուցանէ զմասունս կամ զկտորս անպիտանս որ հատեալ ելանեն 'ի մուշտակաց և 'ի բաց լինին ընկեցեալ. Եաղանէ աթլըսի քէսսէ գուրքիլէրի, քի իշէ եարամայէ.

ՋԵՂԱՐԷ زغاره * Խմոր հացի. խամիրլէրի հաց. և այլոց գրի Թէ Նոյն է ընդ բառին ՂԱՋԷ և ԿԻՒԼԿԻՈՒՆԷ.

ՋԵՂԱՐԻՑՏԷՆ زغاريدن * Շայտ շայտ հանել. Թէշ Բէշ շէգտըրմագ.

ՋԵՂԱՔ زغاك * Որթ. Իւշէմ շէգտուշի.

ՋԵՂԵՆՏ زغند * Հասարակօրէն գո_չումն ամ գազանաց, իսկ յատկապէս գոչումն յո_վազի, որ է փարս. որ և ասի ՃԵՂԵՆՏ. Հէր քէօփէքնին հայվէր աղազի. վէ փարս աղազի խըռըլտըսը.

ՋԵՂԻՑՏԷ زغيده * Ճմլեալ. Սըգըլմըշ. որ և ասի ԵՔՇԻՈՒՐՏԷ.

ՋԵՂԻՑՐ زغير Կտաւատ. Քէթէն թոխումու

ԶԵՂՈՒԹԷ زغوته * Կծիկ հում եպրիշիմի. որ իցէ փաթութեալ ՚ի մատամանն. խամ Իփրիշիմ Քօզասը։

ԶԵՂՏԷ زغته * Է Թռչունն այն՝ որ կոչի Թուրքերէն Եօնտ գուշի։

ԶԵՃ زج * Է Թռչունն այն որ Թուրքերէն ասի Սարը ասմա։

ԶԵՄ زم * Է անուն ջրոյ ծանուցեալ ջրհորոյն այնորիկ որ է ՚ի Մէքքէ քաղաքի. որ և ասի ԶԵՄԶԵՄ։

ԶԵՄ زم * Է անուն գետոյ իրիք. Պիր Իրմագ ատը տըր. և ընկալեալ է զանուն իւր ՚ի Զեմ քաղաքէ, որ առ նովաւ ընթանայ։ 3. Ցուրտ. Սօուգ. Սէրին. և ասելի է զի ձմեռն կոչի Զիմիսդան. այսինքն ցրտաբան. ըստ այնմ, Իքիտէսի հէմչու կիւլիստան գիւնեդէ կէ։ Տէմի տիշեր չու զիմիստան գիւնեդէ կէ։ Նաև բառս Զէմիհ. ը բանի Քեմալ փաշազադէին, բղխի ՚ի բառէս Զէմ, որ է ցուրտ, յաւելմամբ ՚ի վերջոյ մասնկանս Հէյ. և այս՝ վն գոլոյ հողոյն բնութբ ցուրտ. ուստի Զէմիհ Թարգ" ցրտին. և յառաջացեալ է ՚ի նշանակել զերկիր։ 4. Ուժգին հողմ. Շէտիտ րուզկեար։ 5. Է անուն աղբեր միոջ, զորմէ ոմանք առացին թէ նշանակէ զջրհորն վերոյիշեալ Զէմ ջրոյն եղելոյ ՚ի Մէքքէ քաղաքի. որ և ասի ԶԱ՛Հ ԶԵՄԶԵՄ։

ԶԵՄԱՀԷՆ زمهن * Ցուրտ երկաթ. Սօուգ տէմիր. որով խմացեալ լինի անշահ երկաթ. և այլաբանութբ նշանակէ անշահ աշխատութիւն և անօգուտ ջան, ըստ այսմ է և առածն այն, որ ասի Թուրքերէն Սօուգ տէմիր տէօվմէ. այսինքն մի՛ ՚ի վայր աշխատիր յանդգնեաս։

ԶԵՄԱՆ زمان * Ժամանակ. Զէման։ է բառ յունին. և այս ըստ արաբաց. որ և ասի ԶԵՄԱՆԷ։ Իսկ ըստ պարսից Մահ։ Էօլիւմ. Մէվթ. որ և ասի ՄԵՐԳ։

ԶԵՄԱՐՈՒՂ زماروغ * Տես ՍԵՄԱՐՈՒՂ. և նշա" զայն իրն որ գոյանայ ՚ի նեխուտ գետինս և ՚ի փոսորակ տեղիս. և ՚ի յաճախութէ անձրևի խոշոր լինի, և է սա իմն որպ սունկ. Թուրքերէն Տօմալան և արաբերէն كما Քէմա։

ԶԵՄԶԵՄԷ زمزمه * Մրմունջ, որ է յամր երգեցմունք. Ահէսթէ Թէրէննիւմ։ 2. Է բառ իմն՝ զոր մոգքն, ՚ի գովութի ՊՏյ, ՚ի պահուն լուացման մարմնոյ, և ուտելոյ զկերակուր, և ՚ի կալն իւրեանց յաղօթս՝ խօսին լռելեայն։ 3. Է անուն գրոց ինչ ՚ի շարադրութեան Զէրտէհիւշտին։

ԶԵՄԷ زمه * Նշանակէ պարկեշտ. Թուրքերէն Ղօզ. և ոմանք ասեն թէ նշանակէ արջասպ. որ է Զաճ. այսինքն Զաճի Գըպրըս։ Իսկ այլուր գրի թէ է քար իմն նման արջասպի։

ԶԵՄԷՆՃ زمنج * Այսինքն ծնուցիչ կամ մանկաբարձ. որ Թուրքերէն ասի Էպէ։

ԶԵՄԻ زمی * Տես ԶԵՄԻՅՆ։

ԶԵՄԻՅՆ زمین * Երկիր. Եէր. արաբ" ارض Արզ. որոյ հակակայն է Ասման. որ է երկին։

ԶԵՄԻՅՆԱՏ زميناد Տես ԶԱՄԻՅՆԱՏ։

ԶԵՄԻՅՆԻ زمینی * Նոյն է ընդ բառին ԶԻՅՐԶԵՄԻՅՆ. և նշ" բնակութի ստորերկրեայ. որ իցէ հատեալ ՚ի քարէ. որ և ասի ԶԵՄՈՒՆԻ։ Եէր ալթընտա գազըլմըշ մէսքէն։ Քէհֆ Եէրտէն գազմա էվ։

ԶԵՄԻՅՆԿԻՅՐ زمین کیر * Անդամալոյծ. Քէօթիւրիւմ։

ԶԵՄԻՅՏԷՆ زمیدن Տես ՃԱՎԻՅՏԷՆ

ԶԵՄԻԻԽՔ زمخك * Ցած ուխտ և ժլատ. Ղօյէթ միսքին վէ պախիլ։

ԶԵՄԿԵԱՆ زمکان * Մազապուրծ մնջոյ. Գօօլագ Գըլը։ որ և ասի ՌԵՄԿԵԱՆ։

ԶԵՄՃ زمج * Է անուն տեղւոյ իրիք ՚ի գաւառի Խօրասանու. Պիր եէր ատը տըր։ Եւ ևս նոյն է ընդ բառին ԶԱՃ. որ է արջասպ. բայց այլուր գրի թէ նշանակէ զխիժ ինչ. որում كوج Կէվճ ևս ասեն. Պիր սամղ տըր։

ԶԵՄՈՒ زمو * Տիղմ թէ Թաց իցէ և թէ չոր. Պալչըգըն եաշընա վէ գուրուսունա տէրլէր։

ԶԵՄՈՒՆԻ زمونی * Տես ԶԵՄԻՅՆԻ։

ԶԵՄՈՒՏԷՆ زمودن * Նկար առնել. Նագշ էթմէք։

ԶԵՄՉԵՔ زمچك * Է կենդանի իմն Թռչական. Պիր Ճէրէնտէ ճանվէր տըր։

ԶԵՅ زی * Հոգի և կենդանութի. Ճան վէ զինտէկեանլըգ։ 2. Հրաման տծայլին. և նախատահմանութի արարչական. Հիւքմի իլահի, վէ Թագտիրի եէզտանի։

ԶԵՅԹ زیت * Է բառ արէպի. և նշանակէ զիւղն ձիթոյ։

ԶԵՅԹՈՒՆ زیتون * ՁԻԹ (պտուղն). և Զէյթ, իւղն՝ որ մզի ՚ի նմանէ։

ԶԵՅՆ زین * Է այն ռք, որոյ աշխարհի գոլով, ապա հրաժարութիւն տայցէ. Տիւնեայէ գիւզըն իւ թօ ուրմէզ, պօշղէհա նազըն թիւնէյ օզմէզ օզա

ԶԵՆ زن * Կին. Ա՛վրէթ. արաբ" Իմրէէթ. որոյ ներհակն է Մէրտ. այսինքն այր. Թուր" Էր. և արաբ" Ռէճիւլ։ Եւ մինչ ասի Մէրտ. Զէն, նշ" այր և կին. Թուր" Էր վէ ավրէթ. և երբ ասի Զէն ու շէօյ, իմանի այր և կին ը բանիս ամուսնութե. Թուր" Էր վէ ավրէթ։ Եւ ևս Զէն կոչի այր երկնչեալ և կնատ. որպ և այր քաջ և

[illegible] ասի Մերոյ։ Ի բաղադրեալ բառս Զեն, հր" Զեւեն բայիւ. և բարդի ոչ Նոյնէն և [illegible]էն. որ և մինչ գինի յառաջոյս բառից ո_նոց. ցուցանէ զգործող Նորին կամ զվերակա_ցուն. որպէս [illegible]ն և [illegible]։

ԶԵՆԱՆ زنان * Է ընդունելութիւնն Զեւեն բայիւ. Եւ միրթ նշանակէ կանայք. Աւրէթլէր։ Եւ ևս հարկանելով. Ուրարագ։

ԶԵՆԱՆԵ زنانه * Կանացի. Գադընճէ. որոյ ներհակն ասի Մէրտանէ։

ԶԵՆԱՆԻՑՏԵՆ زنایدن * Է անցող" Զեւեն բայիւ և նշ" հարկանել տալ. Ուրտուրմագ։

ԶԵՆԱՇՈՒՑ زناشوی * Ամուսնաւո_րութիւն առն և կնոջ. Էրէ ու ավրէթ օլմագ։

ԶԵՆԵԽ زنخ * Կզակ. Էնէք. և արաբ" ذقن Զէգուն. Եւ ևս հասարակօրէն ասի զխօ_սից. որպիսի են պատմութիւք և նման իրք. Իսկ յատկաբար ցուցանէ զայնպիսի խօսս, որ դա_տարկ իցէ։

ԶԵՆԵԽԶԵՏԵՆ زنخ زدن * Բան խօ_սիլ. Սէօզ սէօյլէմէք. հր" Զեն. և ապառ" Զենեփ։

ԶԵՆԵԽՏԱՆ زنخدان * Կզակ. Էնէք. և փոսն որ է ՚ի նմին կոչի Չանէ չուքուրու. արաբ" ذقن Զէգուն։

ԶԵՆԵՄԹԱՆ زنمتان * Է այն որ կայ կախեալ զատենէ այծուն. Քէչինին մէմէսինտէն ասըլմըշ օլան նէսնէ։

ԶԵՆԵՆՏ زنند * Զարդարեալ. Պէզէնմիշ. որ և ասի ԱՐԱՍԹԷ։ Դարձեալ բառս Զե_նենտ, է երրորդ դէմք յոգնակի ապառնւոյ Զեւեն բայիւ, և նշ" հարցեն, կամ ոչ ներկայ, հարկանեն. Թուր" Ուրսունլար. կամ Ուրուրլար։

ԶԵՆԵՆՏԵ زننده * Է սա ընդունելութիւն ներգործական Զեւեն բայիւ. և նշանա_կէ հարկանօղ. Ուրուճու։

ԶԵՆԵՔ زنک * Է նուազա" Զեն բա_ռին, և նշանակէ կնակ. կամ կնիկ. Աւրէթճիք։ Եւս և ճառագայթ արևու. Շուա-ու Աֆթապ։

ԶԵՆԹՈՒՐ زنتور * Քնար. որ ասի Թուր" Սէնտուր. և է նուագարան ինչ հռչակեալ։

ԶԵՆԻՇ زنش * Է բայածականն Զե_ւեն բայիւ և նշանակէ հարուածս. Ուրուշ. արաբ_երէն تضارب Թէզարիւպ։

ԶԵՆԻՇՈՒՑ زن شوی * Ցորժամ զք (՚ի միասին առեալ) ունիցի երկուս. և կամ ե_րիս, և չորս կանայս, նոքա իւրերաց լինին Զե_նիշուց. Թուրքերէն Գումա ավրէթ։

ԶԵՆԻԽԱՐԵՆՏԵ زنخوارنده * Հարանա_ծու. այսինքն կանայք, որք գան առնուլ զհարսն. Կէլին ալմաղէ կէլէն ավրէթլէր։

ԶԵՆԿ زنگ * Նախ է անուն գրոհի միոջ, որք սևաւ լինին. և գաւառ բնակութեան նո_ցին կոչի Զենկպար. Պէր թայֆէ խալք ատըր։ 2. Ճառագայթ արևու և լուսնի. Փէրթէվի Միհրիւ_մահ։ 3. Ժանկ. որ լինի յերկաթի և յայլ իրս. Թուր" Փաս. որ և ասի ԺԵՆԿ։ 4. Զանգակ, Զող. զոր կախեն ՚ի վզ ուղտուց և ջորեաց. որ և ասի ՏԵՐԱՑ։ Նաև նշանակէ բոժոժ Թուրքե_րէն Չընդրագ։ որ և ասի ԶԵՆԿԵԼԵ։

ԶԵՆԿԵԱՆԵ زنگانه * Է անուն գետոյ միոջ. Պէր իրմագ ատը տըր։ Այլև է անուն երաժշտական եղանակի միոջ։

ԶԵՆԿԵԱՆԵՐՈՒՏ زنگانه رود Է անուն նուագարանի միոջ, որ յատուկ է սևոց եթով_պացւոց, և սովոր են հարկանել զնոյն ՚ի պահու պատերազմի. Պէր սազ ատը չէնկիլէր չալարլար։

ԶԵՆԿԱ زنگا * Է անուն գաւառի իրիք. Նաև է անուն քաղքի միոջ, որոյ հայրն կոչիւր Շավէրան։

ԶԵՆԿԻ ՇԱՎԵՐԱՆ زنگی شاوران Է անուն քաղքի միոջ ՚ի քաղաքն Իրանու. Պէր շէհիրին ատը տըր։

ԶԵՆԿԵԼԵ زنگله * Բոժոժ. Չընդրագ զոր կապեն կանայք յոտս իւրեանց։ 2. Է անուն երաժշտական եղանակի միոջ։ 3. Է անուն քաղքի միոջ Թուրանականի. որ ՚ի մարտին Տիւփազտեհ բիւխի սպանաւ ՚ի ձեռս Փիւրուհիլ քաղքին Ի_րանականի. Թուրանտէ պիր մուղալէք ատը տըր։

ԶԵՆԿԻ زنگی * Սևաւ ժողովուրդն այն որ վերաբերի առ գաւառն Զենկի։ Ասի ևս զի և իցէ սևաւ մարդոյ նմանութիւն իմն. որոյ յոգ" լինի Զենկիեան։ Զէնկ վիլայէթինէ մէնսուպ օլան սիյահ գավմ, վէ հէր սիյահ օլան ատէմ. ըստ այսմ, Զի պէտուզ նէյի մէ փարէյի մէյէ, քի չենկի դէ չիւմուրտէն նէ չէվիրէ սիֆէյա։

ԶԵՆԿԻՏԻՒՖ زنکدف * Մեկնի Թուրքերէն Տէֆին թօփու. որ է զիլն դափին շուրջանակի շարեալ զնովաւ։

ԶԵՆԿԻՒԼԵ زنگله } Տես ԶԵՆ_
ԶԵՆԿԻՒԼԱԼԵ زنگلاله } ԿԵԼԵ։

ԶԵՆԿԼԱԼԵ زنگلاله * Է ձիւնն այն որ յուշիկ տեղայ, և ոչ եղեամն իջանէ. Ահէս_տէ յաղան գար։

ԶԵՆԿԼԻՑՉԵ زنگلیچه * Փոքր բոժոժ. Քիւչիւք չընդրագ. զոր կախեն ՚ի պարանոցս ջորեաց, և յայլ ոմանս տեղիս նոցին։

ԶԵՆԿՊԱՐ زنگبار * Գաւառ բնակութեան սևաթորմի եթովպացւոց որք կոչին ԶԵՆԿ. Չէնկիլէրին վիլայէթի։

ԶԵՆԿՊԱՐԻ زنگباری * Խիժ սանեկ_դերի. Սօմղ սանտալի. արաբ" Սանտալէմ։

ԶԷՆԿՏԱՆ زنكدان Տե՛ս ԶԷՆԿԻՒԼԷ։

ԶԷՆՃԱՆ زنجان * Է անուն հաւաքա-ւոր աւանի միոյ ՚ի գաւառին Խամսէյի · Պէշ մէշհուր գասապա տըր տէյէր ։

ԶԷՆՃԷ زنجه * Փորացաւութիւն · Տէյտէ չէքէմ · արաբերէն زحير Զուհէյր ։

ԶԷՆՃԷՊԻՑԼ زنجبيل * Նշանակէ կո-ճապղպեղ · և է սա յայտնի արմատ ինչ համեմա-կան ։ որ ասի Թուրքերէն եւս Զէնճէֆիլ ։

ԶԷՆՃԻՑՐ زنجير * Նշ" շղթայ · արաբ" Սիլսիլէ · և է յայտնի ինչ, զոր կազմեն յերկա-թոյ ։ Եւ եւս ցուցանէ զտախտակն զայն, որով զվարեալ արտն՝ զկնի սերմանելոյ, հարթեալ հաւասարեն ։

ԶԷՆՃԻՑՐԷՔ زنجيرك * Շղթայաշար յօրինուած ինչ, զոր առնեն շուրջանակի զայլովք նկարուք, որում ասեն արաբ" Նագշի Միւսէլսէլ ։

ԶԷՆՃԻՒՐՈՒ زنجرو * Նշանակէ զայն խիժն, որ կոչի տաճկերէն Սամղի արէպի · որով ոսկի և արծաթ հարեն ։ [illegible] ։

ԶԷՆՄԱՏԷՐ زن مادر * Նշանակէ զո-քանչ · Գայնանա · որ է մայր կնոջ ։

ԶԷՆՈՒ زنو * Տե՛ս ԶԷՆՈՒ ։

ԶԷՆՈՒՑԷ زنويه * Ոռնացումն շան · և գայլոյ ։ Ուլուայարագ ավազ չըգարմագ ... գուրտուն · որ և ասի ՐՈՒՆԷ ։

ԶԷՆՈՒՑԻՏԷՆ زنويدن * Տե՛ս ԶԻ-ՆՈՒՅԻՏԷՆ · որ է ոռնալն շան, ճագարի, գայլոյ, և սոցին նմանեաց · Ուլումագ ։

ԶԷՆՈՒՊԻՑՏԷՆ زنويدن * Տե՛ս զբայն ԶԷՆՈՒՅԻՏԷՆ ։

ԶԷՆՈՒՐ زنور * Տզրուկ · Սիւլիւք · Տե՛ս ԶԷԼՈՒ ։

ԶԷՆՉԷ زنچه * Նշ" զայնպիսի կին՝ որ շրջեալ ՚ի հրապարակս ըստ իւրաքանչիւր ումեք առնէ ծանօթութիւն · Պազար ... ։

ԶԷՆՊԱԳ زنبق * Շուշան · Պէյ զ... չիչէք տըր ։

ԶԷՆՊԱՆ زنبان * Նշանակէ Անխտան ։

ԶԷՆՊԱՐԷ زنباره * Իգամոլ · Ճակաճան · Զէնպազ · ... · ... և որձամոլն կամ մանկատուփն կոչի غلمباره Ղուլամպարէ ։

ԶԷՆՊԷ زنبه * Մազ՝ որ բուսանի յազ-դամէջս · Գասըգ գըլը · 2 · Նշանակէ Անդիկ · որ է

ճէյվէ · արաբերէն Զէյպագ ։ որ և ասի ԺԻՑՎԷ ։

ԶԷՆՊԷԼ زنبل * Տե՛ս ԶԷՆՊԻՐ · և է տաշտաձև խեղն այն՝ որով կրեն աղիւս և հող ։ 2 · Նշանակէ որ ինչ բառն ԶԻՐԻՇՔ · որ է ծոր · արաբերէն Էնպէբէղուրէս ։

ԶԷՆՊԷՂԷԼ زنبغل * Տե՛ս զբառսն ԶԷՊԿԻՒՐ · և ԶԷՊՂԻՒՐ ։

ԶԷՆՊԷՐ زنبر * Նշ" զայն՝ զի զկողս փայտս քառանկիւնի կապեալ, զմէջ նորին հիւսեն չուանաւ · կամ կապեն ՚ի նմա զմասն ինչ զորգի այսինքն կարպետի · և կամ զմասն ինչ մորթոյ · և այնու տանին և կրեն այսր անդր զաղիւս, զցեխ, և զամբար · որ արաբ" ասի Վէշէէշ ։ Եւ եւս նոյն է ընդ բառին ԶԻՐԻՇՔ · որ և ասի ԶԱՐԻՃ ։

ԶԷՆՊԷՐԻ زنبری * Մեծ նաւ · որ ասի Թուրքերէն Գալէօն ։

ԶԷՆՊԻՑԼ زنبيل * Զամբիւղ · որ Թուրքերէն և արաբերէն եւս ասի Զէնպիլ ։

ԶԷՆՊԻՑԼՊԱՖ زنبيل باف * Այն որ հիւսէ զզամբիւղն · Զէնպիլ էօրիճի ։

ԶԷՆՊԻՑԼԷ زنبيله * Է քառակն դերձա-կաց, յորում դնեն զասեղն, զմատնոց, զմկրատ, և զայլ գործիս արուեստին իւրեանց · Տէրզի ... ։ Եւ եւս է նուազական բառին Զէնպիլ ։

ԶԷՆՊԻՑԼԷՔ زنبيلك * Է նուազական անուն · և նշանակէ զամբիւղակ · Զէնպիլճիկ ։

ԶԷՆՊՈՒՐ زنبور * Մեղու · Արը · Բայց ասացեալ են ոմանք թէ սա ոչ է մեղուաչէն մե-ղուն, այլ է չնթացաւոր դեղին մեղուն · և է բառ ընկերական ընդ արեպս ։

ԶԷՆՊՈՒՐԷ زنبوره * Խոշոր մեղու · Իրի չէնպուր ։ 2 · Նոյն է [illegible] ՓԷՅՔԷԱՆ · սլաք · 3 · Է յայտնի նուագարան ինչ · Պէր ... թէլ ... տըր ։ 4 · Է տեսակ իմն զինու · Պէր նէվ ... տըր ։ 5 · Նոյն է ընդ ԶԷՆՊՈՒՐԷՔ · որ է փոքր ... ։

ԶԷՆՊՈՒՐԷՔ زنبورك * Է փոքրիկ ... այն, որ Զէնպէրէք ասի ։

ԶԷՆՊՈՒՐԷՔ زنبورك * Է նուազական բառին Զէնպուր · և նշ" պիծակիկ · Արըճըգ · զի ասի Զէնպուրէկ ... ։

ԶԷՆՊՈՒՐԻ ՔԵԱ ՓԷՐ زنبوركاف Իշամեղու · կամ պիծակ · Էշէք արըսը · ... Զէնպուրի ... ։

ԶԷՆՏ زند * Է անուն գրոցն մոգուց · Մէճուսու ... · զոր շարադրեալ է Զրադաշտ · 2 · Հրահանք · Չախմագ · զոր կայծքեն

յերկաթոյ, և այս բառ ընկերական է ընդ աւր". 3. Մեծ. Պիւյիւքք. զի ասի Զէնտէյլ. եւ և Փեյմշէնտ. և Քէօրփիշէնտ: 4. Նշ" մրանեի. Մէյսէն աղաճը. որ արդ" կոչի آس Ա. Իսկ Ը բարբառոյ պարսիցն վաղնջականաց Նշ" շունչ կամ ոգի. ձան. որ մինչև ցայժմ շնչաւորն կամ ոգևորն, որ է կենդանի՝ կոչի Զէնտէ:

ԶԵՆՏԷ زنده * Մեծ և վիթխարի իր, որ իցէ ահագին. զի ասի Զէնտէ ֆիլ. այսինքն մեծ և վիթխարի փիղ. Պիւյիւք նէսնէ ժի մէհէյպ օլա:

ԶԵՆՏԷՌԷԶՄ زندهرزم * Է անուն քաջի միոջ՚ի քաջացն Թուրանականաց, զոր ըսպան կորովին Ռուստէմ. Պիր մէշհուր պէհլիվան ատը:

ԶԵՆՏԷՐՈՒՏ زندهرود * Մեծ և անուանի գետ. Նէհրի ազիմ: քանզի Զէնտէ՝ մեծ, Պիւյիւք. և Ռուտ. գետ. Իրմագ: Չիւնքի էշֆահանտէն էսպապ ... Քէ չէնպէրաթ 'չէրտ' չրան նէհրի ձէյհուն: բայց մասնաւորապէս Նշ" զգետն զայն՝ որ անցանէ Ը մէջ քաղաքին Իսֆահանու. որ և ԶԱՅԵՆՏԵՐՈՒՏ. այսինքն ծնանօղ գետ. ուր առընթեր նորին գոյ պարտէզ մի արքունի զարդարեալ. և կոչի պարտէզն այն՝ Չօրպաղ. զոր շինեալ է Շահ Պուհաման որդի Շահ Իսմայիլի: Եւ գիտելի է զի եթէ զմի տեղին այսր գետոյ բոլորովին կապիցեն, 'ի տեղւոջէ անտի կրկին այնչափ ջուր ելանէ, որ գետ մի եղեալ հոսի, և վ̅ր այն կոչի ԶԱՅԵՆԵՏՐՈՒՏ. և քանզի 'ի ժամանակս ցանից անգործ ոչ մնալով, տարածանէ ցյանս. վ̅ր այնորիկ կոչի եւս ԶԵՐՐԻՑԵՆՐՈՒՏ. այսինքն ոսկեղէն գետ:

ԶԵՆՏԷՓԻՑԼ زنده پيل * Արու փիղ. Էրքէք ֆիլ: Եւ եւս ասեն զբառս զայս զփղէ. որ իցէ յաղթանդամ և ահագին և է առ մեկանուն ինչ գովեստի փղաց:

ԶԵՆՏԻՑՔ زنديك * Այնպիսի՝ որք, որ վարի ըստ բանի հրամանի Զէնտ գրոցն աղանդապետին Զերտուշթի. այսինքն մոգին Զրադաշտի. զոր արտապացուցեալ կոչեն Զէնտիք, և 'ի գիրս Հայոց Զանդիկ:

ԶԵՆՏԻՒՍԻԹԱ زندوستا * Նոյն է Ը բառին ԶԵՆՏ. որ է անուն գրոցն մոգուց զոր շարադրեաց մոգն Զրադաշտ. որք ըստ ապականեալ խուժանցն կարծեաց ասեն մեկնութի լինել գրոցն աբրահամու նահապետին. սուտ 'ի վ̅ր սորա հիմնելով. Մէճուսի քիթապի խամի փէտր: որ և ԶԵՆՏԻՍԹԱ կամ ԶԵՆՏՍԻԹԱ. և ԶԵՆՏԱՊԵՍԻԹԱ

ԶԵՆՏԼԱՖ زندلاف * Զրադաշտ մոգ. Մէճուսի շէյխի: 2. Լուսինեակ. Պիւլպիւլ. որ և ԶԵՆՏՊԱՖ. և ԶԵՆՏՎԱՖ.

ԶԵՆՏԽԱՆ زندخوان * Նշ" Զէրտուշթի: 2. Նոյն է ընդ ՊԻՒԼՊԻՒԼ.

ԶԵՆՏՊԱՖ زندباف * Տես ԶԵՆՏԼԱՖ

ԶԵՆՏՎԱՆ زندوان } Լուսինեակ.
ԶԵՆՏՎԱՖ زندواف } Պիւլպիւլ.

տաճկերէն Ըշտէհայօղ:

ԶԵՆՏՈՒՍԹ زندوست * Ընթերցօղ Զէնտի. որ է գիրքն մոգուց. Զէնտ օգույուճը. որ և ԶԵՆՏԽԱՆ. և ԶԵՆՏՏԵՍԹԱՆ:

ԶԵՆՏՕՍԹ زندوست * Կնասէր. Աւրաթէ մէյլ վէ խահիշի օլան:

ԶԵՆՏՓԻՑՉԻ زنديچي * Թանձր և ստուար կտաւ, որ իցէ ստուգանկեալ 'ի հաստ թելից. Խալըն վէ գալըն պէզ:

ԶԵՆՓԵՏԷՐ زنپدر * Աներ. Գայընաթա. Նախագոյն էր Փէտէրտիչէն որ. Թարգմանի հայր կնոջ. և իբրև անուն եղև յատկացուցիչն նախադրեցաւ:

ԶԵՆՔԵՐՏԷՆ زن كردن * Կին առնել. այսինքն ամուսնանալ. Թէէհհիւլ: Մէյրօք էթ ... քանզի հրամայա" բային Քէրտէն լինի Քէն. և այս" Քէնէտ:

ԶԵՌ زش * Նախ նոյն է ընդ բառին ԶԻՒՌ: 2. Զի՞նչ պատասխանի. Նէ՞ ճէվապ. որ և ԶԵՌԻ և ԶԵՌՌԻ: զի ասի Պէ օնուն ճէվապ ... այսինքն 'ի հարցումն այս ինչ մարդոյ զի՞նչ պատասխանի տացի:

ԶԵՉԷ زچه * Կին ծննդական. որ մինչև յաւուրս 40. Զէչէ կոչի. Լօղուսէ գատըն:

ԶԵՊ زب * Ողորկ և ամբողջ. Թամամ վէ փէրտախլը: Եւ եւս նոյն է ընդ ԱՍԱՆ. որ է դիւրին. Թուրքերէն Գօլայ. որ և ԶԻՊ.

ԶԵՊԱՆ زبان * Լեզու. Տիլ. և արդ" Լիսան որ և ԶԻՒՊԱՆ, Դարձեալ բառս ԶԵՊԱՆ ցուցանէ զբառս, զորս 'ի գործ ածէ ազգ մի. որ է ըստ մեզ բարբառ. զի ասի Զէպանի Ըրապի. և Զէպանի Ֆարսի. որով իմանի բարբառ Թուրքական. և բարբառ պարս". և ըստ այսմ է 'ի գիրս Կիւլիսթանին 'ի սկզբան գրոցն. Պէնտէ էմ հաշէլի նէվմէյմ՝ պէնտէքանի ժի տաշը, մէճմուալը ... այսինքն ողորմելին յայնմ անյուսութե պահու՝ բարբառովն զոր ունէր, զթագաւորն թշնամանել սկսաւ:

ԶԵՊԱՆԱՎԵՐ زبان آور * Տես ԶԻՒՊԱՆԱՎԵՐ:

ԶԵՊԱՆԴՈՒԴԻ زبان طوطي * Է անուն խոտոյ իրիք. Պիր օթ ատը փէտր:

ԶԵՊԱՆԷ زبانه * Բոց հրոյ. Աթէշ ալէվի: Եւ եւս ԶԵՊԱՆԷ Նշա" զայն սուր իրն որ լինի 'ի վ̅ր շահիմնի կշռոյն: Թէրազիւն շահինի խոշէրէպտէ օլան սիվրի նէսնէ:

ԶԵՊԱՆԻՏԵՐԻ زبان دري * Լեզու պարսկական. Լիսանի ֆարսի:

ԶԵՊԱՆԽԱՀ زبانخواه * Մուրացիկ. Սայիլ. տիլէնճի.

ԶԵՊԱՆՊԵՐԷ زبان بره * Է խոտ իմն.

որ Թարգ" զաւնալեզու. Թուր" Գուղի փէլ. և արաբերէն Լիսանիւլ համէլ. և է բնութիւն սորա կաղողական որ և ասի ԽԱՒՂՈՒԼ. Եւ ևս նշանակէ Ջղախտ. Սէնիրմ եարըաղ.

ԶԵՊԱՏ زباد * Է սա իւղ իմն անուշահոտ. Պէր խօշգու եաղ տըր. և ասեն թէ է սա կատու իմն յատկական, զոր սնուցանեն 'ի վանդակի. և զայն այսր անդր տարաբերեն. և քիրտն նորին Զեպատ է. զոր ապա քերեալ 'ի նմանէ՝ արկանեն յաման ինչ, և պահեն: ըստ այնմ, Զեպատ իւ շըշէէ իւ շըշէ պէր չէնան շայէթ, չէվէթ պէ մէրթէ պէհտըր՝ տէլառ հէյրըտը:

ԶԵՊԴԱՆԷ زبدانه * Նշ" զայն՝ որ ասի Աշըշ Պէդէնկ: Եւ ևս է այն կեղեւն փայտի, զոր փաթթութեան 'ի կողմն սլաքի նետին: Օգդէմէնկ դըրաֆընէ սօրըը գէշէրըէ աղաճ գապուղը:

ԶԵՊԵՐ زبر * Նշ" վեր. Իւսթ որոյ հականյն է Զիր. որ է վայր. ուստի զօրեղ մարդն կոչի Զեպէրտէսթ. վասն լինելոյ ձեռին նորա ըստ ուժոյ վերադոյն:

ԶԵՊԵՐԱՊ زرآب Նշ" լու. Եօսուն և է սա կենաց իմն. որ լինի 'ի վը ջրոյ նաւակ յափունանր:

ԶԵՊԵՐՔՈՒԳ زرفوق * Թշնամանք. Տէրշնամ իմէյէ. փէրշնամ փաքէն:

ԶԵՊԵՐԹԷՆԿ زرتنك * Նշանակ՝ զայն. Թամբակալն ձիոյ, որ կոչի Թօլգօլ գօլանի:

ԶԵՊԵՐԻՑՆ زرين Վերին. Եուգարըշը:

ԶԵՊԵՐՃԵՏ زرجد * Է անուն գոհարեայ քարի միոջ. որ ըստ գունոյն է կապտաշորթ. և յայն սակս երկինն մականուանեալ կոչի Զեպէրճէտէրէնկ. ոչ զի է բանաստեղծ ոմն. Էնտէր էյն գէօգէ շէպէրճէտրէնկ եանի աալէմ, փէր շէպէ ըօյէյը պէհրէ ըօշըէնի մէհէթլող տաթ:

ԶԵՊԵՐՏԵՍԹ زبردست * Նշ" ուժեղ և զօրեղ և քաջ. Կէրճէք վէ գուվվէթլի վէ պէհատըր: ըստ այնմ, Ի՛ց շէպէրտէսթ զէյրտէսթլարը. Կէրմ իլէ քէմ պէ մանէ էյն պօշըր: 2. Վերին կողմն. Իւսթ դարաֆ. զի մինչ կամիցին ասել թէ 'ի վերին կողման նստաւ, ասեն Զեպէրտէսթ նշէսթ. և ևս Զեպէրտէսթ նշանն շէհշարէկանէշ 'ի վերին կողմն նստոյց զաւքայորդին նորա:

ԶԵՊԵՐՓՈՒՇ زبربوش * Վերմակ. որ է ծածկարան անկողնոյ. Եօրղան. և արաբ" لحاف Լիհաֆ, 2. Վերարկու համդերձ. Եափլալ իւշէրէնէ կէյէշէն շալէ. որ ՊԱԼԱՓՈՒՇ ևս ասի:

ԶԵՊՀԻՑՏԷ زبهيده * Նշանակէ վայրանկեալ. Աշաղը տիւշմիշ:

ԶԵՊՂԵՐ زبغر * կամ Զէպղէրք. Տես զբառն ԶԱՊԿԵՐ որ և ասի ԶԵՊԿԵՐ. և ԶԵՊԿԻՒՐ:

ԶԵՊՍԻՆ زبون * Նկուն, տկար, և տա-

ռապեալ. Մաղլուպ, շաշքն, վէ ածիզ: Նաև նշ" տալ զնոյլին զվաճառելի ինչ, մինչև հասեալ իցէ գին նր 'ի չափ արժէից վաճառելի իրին:

ԶԵՊՈՒՏԷ زبوده * Նշ" առանց մաածութե և նկատման. Պիր Բէէմէնլիւ վէ պիփիքրսիզ. 2. Նոյն է ընդ բառին ԿԵՆՏԵՆԱ. որ է հոյն" պրախ. Փօսթաթ: Իսկ արաբ" كراث Քէրրաթ:

ԶԵՎԱԼԷ زواله * Հասարակօրէն նմ իր որ իցէ բոլորակ և գնտակացեալ. Հէր նէ քի եումրէ վէ մըտէվվէր օլա. որպիսի է գնտակն Քէմաններէ. որ և ասի ԴԱԼԻՈՒՔ: Իսկ յատկաբ որ նշանակէ այնչափ հայսն, յորմէ լինի մի հաց. Պիր էքմէք օլաճագ խամիր:

ԶԵՎԱՀ زواه * Է կերակուրն այն՝ որ տուեալ լինի բանտարկելոց. Մահպուսլարէ վէրիլէն թաամ:

ԶԵՎԱՂԱՄ زواغار * Է անուն փոքրիկ Թռչնոյ միոջ. Պիր քիւչիւք գուշ տըր:

ԶԵՎԱՆ زوان * Նոյն է ընդ բառին ԶԵՊԱՆ. որ է լեզու. Տիլ. Լիսան:

ԶԵՎԱՆ زوان * Նշ" զայն ունդն՝ որ կոչի Տէլիճէ. որ և բուսանի 'ի միջոցս ցորենոյ. Պուղտայ արասընտէ պիթէն տէլիճէ: Այլ և նոյն է ը բառին ԶԵՊԱՆ, որ է լեզու. քանզի գոյ 'ի պարսիկս փոխարկութի տառիցս ب Պէ. և و Վավ:

ԶԵՎԱՆԷ زوانه * Նոյն է ընդ բառին ԶԵՊԱՆԷ. ըստ երկուց նշանակութեց նր: Եւս գրի 'ի բառարանս ինչ թէ նշ" լեզու կաղամարի յորոյ վր թանաք լցեալ գիր գրեն. Տէվիթ միգասի:

ԶԵՎԱՆԳԵՐԷ زوانكره * Տես զբառն ԶԵՊԱՆԳԵՐԷ. և Թարգմանի զաւնալեզու. արաբերէն لسان الحمل Լիսանիւլ համէլ:

ԶԵՎԱՇ زواش * Նոյն է ընդ բառին ԶԱՎԻՒՇ. և նշանակէ լուսնթագ. Միւշթէրի. ծագեալ 'ի յունական բառէս Զէւս:

ԶԵՎԱՍ زواس * Նոյն է ընդ բառին ԶԱՎԻՍ. և նշանակէ արուսեակ. Զիւհրէ.

ԶԵՎԱՐ زوار * Նշ" սպասաւոր և ծառայօղ. Խըտմէթքեար վէ գուլլուգճի: Եւ ևս ցուցանէ սպասաւոր հիւանդանոցի, որ սպասաւորէ հիւանդաց: Եւ մերթ պաշտօնեայ բանտի, որ սպասաւորէ բանտարկելոց. Պէյմարխանէ խըտմէթքեարը. վէ մահպուս խըտմէթքեարը: 2. Է անուն եղբօրն Ռիւսթեմայ քաջի. որ և ասի ԶԵՎԱՐԷ. 3. Կենդանի. Տիրի: Չէնտէ: արաբ" حى Հայ. 4. Սուր ձայն և բարձր. Աճըշը Սէսէ վէ պէրք էնտ: 5. Կին ծեր. Զէնկի գէօր:

ԶԵՎԱՐԷ زواره * Նոյն է ընդ բառին ԶԵՎԱՐ. ըստ առաջնոյ նշանակութե նր: 2. Է անուն Ռիւսթեմայ քաջի: 3. Է անուն ասանի

Ն կցորդացն Քէօշանու ։

ԶԷՎԶԷՔ زوزك * Է սերմն այն որ ասի Խաշխաշ. և ուրեք ասի Թուր" Հաճիէլէք օՙթի ։

ԶԷՎԷՆԿԷԼ زونكل * Նշ" ատպատողն [illegible]. Կէօշէ Քէօշի Վէ հօգէր ։

ԶԷՎԷՆԿԻՒԼ زونكل * Նշ" բոժոժ. Զնկոզէ ։ 2. Է անուն ձայնի միոջ յերաժշտութեան. որ և ասի ԶԷՆԿԷԼԷ ։

ԶԷՎԷՇ زوش * Նոյն է ընդ բառին ԶԷՎԱՇ ։ Որ է լուսնթագ. Միւշթէրի ։

ԶԷՎԷՐ زور * Նոյն է ընդ բառիցն ԶԷՊԷՐ. և ԶԷՓԷՐ. վն զի գոյ փոխադրութն ՚ի պարսիկ բարբառի ընդ մէջ տառիցս Պ. և Վ. և Փ ։

ԶԷՎԷՐԱՆԻՑՏԷՆ زورانيدن * Է սա անցողականն բային Զէվէրիդէն ։

ԶԷՎԷՐԹԷՐ زورتر * Վերագոյն. Եօգարուրագ ։ Եւ սՙն համեմատն է زور Զէվէրին ։

ԶԷՎԷՐԻՑՆ زورين * Նոյն է ը բառին ԶԷՊԷՐԻՑՆ. և նշ" վերին. Թուր" Եօգարըքի ։

ԶԷՎԷՐԻՑՏԷՆ زوريدن * ՚Ի վեր լինել. Եօգարու օլմագ ։ Կամ ՚ի վեր առնել. Եօգարու քալտըրմագ ։ Որ նախադասն էր սա زوريدن Զէվէրիտէն ։

ԶԷՎԷՐՆԻՑՄ زورنيم * Նշ" զայն կոտորն, զոր կարեն ՚ի Թիկանց կողմանէ հանդերձի. զոր ՚ի Թիւրքիսթանի այսինքն ՚ի գաւառին Եօզպէկի, Եըրգագ կոչեն ։

ԶԷՎԻՑՃ زويچ * Նոյն է ընդ բառին ԶԷՎԻՆՃ ։

ԶԷՎԻՑՐԷ زويره * Նոյն է ընդ բառին ԿԻՐՏՊԱՏ. որ է մրրիկ. Գասըրղա ։

ԶԷՎԻՆՃ زونج * Նշ" Մումպար, որ է աղիք ոչխարի, զոր լցեալ ծեծած մսով և որիզով եփեն ։ Եւս երեշտիկ կամ սուճուխ, որ և ասի ԶԷՎԻՑՃ ։

ԶԷՎՐԱԳ زورق * Փոքր նաւ. Քէօչիւք գէմի. սէֆինէյի սաղիրէ. և է սա բառ արէպի ։

ԶԷՏԱՑԻՏԷՆ زدايدن * Հարկանել տալ. Ուրդուրմագ ։ Եւ է անցող" Զէտէն բային ։

ԶԷՏԷ زده * Է կրա" ընդուն" Զէտէն բային, և նշ" հարեալ. Ուրուլմուշ ։ Որ և մտանէ ՚ի բարդութիւն ինչ. որպ Սէնկզատէ և Տէմզէտէ ։ 2. Նոյն է ը բառին ՐԷՏԷ. որ է դաս. Սաֆ ։ 3. Բաղաձայն տառ. Հարֆի սաքին ։ 4. Տողագրուածոց. Սէթըրլէրի ։

ԶԷՏԷՆ زدن * Հարկանել. Ուրմագ ։ Որպ հր" լինի Զէն և տալ" Զէնէք ։ Դարձեալ նշ" հակել կամ միտել. Մէյլ էյլէմէք. զի ասի Պէ սուրխի զէնէք. ՚ի կարմրութն հարկանէ ։ Եւ Պէսիյահի զէնէք, ՚ի սևութն հարկանէ ։ Եւ մերթ կորել. Քէսմէք. ըստ այնմ, Ֆալչըյի ուէշըրա չէօ պուրղան պիշէնէք, պէշըլի փէհէք էնճիւռ. և Թարգ" զշաւեկլուած որթոյն, մինչ պարտիզպանն հարկանէ՝ այսինքն կտրէ, առաւելագոյն տայ ըղխաղող ։ Դարձեալ բայս Զէտէն, որ է հարկանել, ՚ի գործ ածի ՚ի պարսից ՚ի բայացուցանելն զանուանս ումանս, որպ Տէօրուղ զէտէն. սուտ խօսիլ ։ Պանճ զէտէն. ձայն արկանել ։ Թէն զէտէն. լուռ լինիլ ։ Հարֆ զէտէն, խօսք խօսիլ ։ Եւ عطسه زدن Ատսէ զէտէն. փռնգալ. և այլք նմանք ։

ԶԷՏԷՆՃ زدنج * Նոյն է ընդ բառին ՓԻՑՀ. և նշ" ճարպ. այսինքն ճրագու. Իչ եաղը ։

ԶԷՏԻՇ زدش * Նոյն է ընդ բառին ԶԷՆԻՇ ։

ԶԷՐ زر * Ոսկի. Ալթուն ։ Եւ մերթ դրամն ևս Զէր կոչի. որ և երբեմն գրի երկուրէքն Զէրր ։ 2. Ծեր, փիր. Գօճամիշ ։ 3. Է անուն հօրն Բիւսթէմայ քաջի. որ և ասի ԶԱԼԻԶԷՐ. և սոյն անուն յայն սակս առատրեցաւ նմա, զի ՚ի ծնանիլն նր՝ հեր գլխոյն սպիտակ էր. որպ մեկնի պարս" Թէ, Փէտէրի Րէօսթէմրա էզ ան սէպէպ Զէր խանէնտ, քի էզ մատէրէշ մույ սէր սէֆիտ զատ, հէմչուն Փիրան ։ Այսինքն զհայրն Բիւսթեմայ յայն սակս Զէր կոչեն, զի ՚ի մօրէն հեր գլխոյն սպիտակ ծնաւ, որպէս զծերոց ։

ԶԷՐԱԹԻՒՇԹ زراتشت	}	Նաև
ԶԷՐԱՏԻՒՇԹ زرادشت	}	ԶԷՐՏ_
ԶԷՐՏԻՒՇԹ زردشت	}	ՀԻՒՇԹ

